

ՆԿԵՐ ՍԱՐԳՍՅԱՆ


ՀԱՎԵԼԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԵՐԵՆՈՒՄ



Նվիրում եմ ծնողներիս անմար հիշատակին

LIBRARY

БИБЛИОТЕКА ИМЕНИ АКАДЕМИКА
ОТХОДНИКОВ В АКАДЕМИИ
СЕРИИ



Հայաստանի Հանրապետության
Գրականության և Գեղարվեստի
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА
ИНСТИТУТ ЯЗЫКА ИМ. Р.АЧАРЯНА

НВЕР САРГСЯН

ВЫРАЖЕНИЕ ПРИСОЕДИНИТЕЛЬНОГО
ОТНОШЕНИЯ В АРМЯНСКОМ
ЯЗЫКЕ

Ереван
Издательство “Гитутюн” НАН РА
2017

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԱՆԱԿ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Հ.ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՆՎԵՐ ՍԱՐԳՍՅԱՆ

A 103528

ՀԱՎԵԼԱԿԱՆ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Երևան

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն

2017



ՀՏԴ 811.19
ԳՄԴ 81.22
Ս 259

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր Բ. Գ. Ղ. Վ.Լ. Կատվայան
Գրախոսներ՝ Բ. Գ. Թ. Ս.Վ. Պապիկյան
Բ. Գ. Թ. Կ.Լ. Առաքելյան

Սարգսյան Նվեր

Ս 259 Հավելյալական հարաբերության արտահայտությունը
հայերենում/ Ն. Սարգսյան.- Եր.: «Գիտություն»
հրատ., 2017.-203 էջ:

Աշխատանքը նվիրված է հայ լեզվաբանության մեջ համեմա-
տաբար քիչ ուսումնասիրված իրողություններից մեկի քննությանը:
Հավելյալական հարաբերության տարբեր դրսևորումները դիտարկ-
վում են թե՛ որպես խոսքի սերման, լեզվական միավորների շարա-
հյուսական կապակցման ձև, թե՛ որպես ոճական հնարք: Տարա-
բնույթ էական հատկանիշների ընտրությամբ դասակարգվում են
հավելյալական կառույցները:

Նախատեսված է ինչպես ուսանողների, ուսուցիչների, այն-
պես էլ մասնագետ լեզվաբանների համար:

ՀՏԴ 811.19
ԳՄԴ 81.22

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Խոսքի սերման, բանահենքի (տեքստի) շարահյուսական կառուցման սկզբունքներն ու եղանակները, ձևերն ու միջոցները բազմազան են ու բազմաբնույթ: Դրանցում լեզվական միավորների, խոսքի բաղկացուցիչների միջև հավելական հարաբերության արտահայտման տարատեսակ դրսևորումներն ունեն իրենց կարևոր դիրքն ու դերը: Հավելական կառույցներին առնչվող լեզվական նյութը և դրանց վերաբերյալ եղած տեսական դիտարկումները նկատի ունենալով՝ կարելի է նախապես հաստատել հետևյալ հիմնական դրույթները.

ա) պատմականորեն ամենից առաջ հավելական կառույցները ծագել ու ձևավորվել են հնագույն հայերենում՝ առօրյա բանավոր խոսքում: Դա հեշտ է տեսնել դեռևս հինհայերենյան գրավոր առաջին իսկ նմուշներում: Որպես շարահյուսական կապի ինքնուրույն տեսակ՝ դրանց աստիճանական զարգացումը, նորանոր գործառույթներով հարստացումը կատարվել է լեզվի հետագա փուլերում:

բ) Արդի հայերենում հավելական կառույցներն օժտված են իմաստային, տրամաբանական, ոճական-հուզաարտահայտչական ամենատարբեր նրբերանգներ դրսևորելու հատկությամբ և լայնորեն կիրառվում են գրական լեզվի գործառական բոլոր ոճերում՝ խոսակցական, գեղարվեստական, գիտական, հրապարակախոսական, պաշտոնական:

գ) Հայ լեզվաբանության մեջ հավելական կառույցներն անվանելու համար ավանդաբար օգտագործվել են հավելական և հարակցական կապակցություններ (կառույցներ)

տերմինները: Մենք որդեգրել ենք առաջինը, այսինքն դրանց կոչում ենք հավելյական կառույցներ:

Մակայն, լեզվում այսպիսի մեծ տարածում ունենալով հանդերձ, հավելյական կառույցները քիչ են ուսումնասիրված, նրանց վերաբերյալ չկա գիտական միասնական տեսակետ, եղած կարծիքները չեն ամբողջացնում և լիովին չեն բնութագրում դրանց ընդհանուր օրինաչափություններն ու բնորոշ հատկությունները: Հայ լեզվաբանության մեջ քիչ են զբաղվել հավելյական կառույցների համակարգված դասակարգման հարցերով, անհրաժեշտ չափով դիտարկված չեն դրանց ոճական յուրահատկությունները:

Այս հանգամանքը մասնակիորեն կարելի է բացատրել նրանով, որ լեզվաբանները հիմնականում հետաքրքրվել են գրավոր լեզվի օրինաչափությունների, կառուցվածքային տիպերի ուսումնասիրության հարցերով, և հավելյական կառույցները, որոնք հատկապես բնորոշ են խոսակցական լեզվին, առանձնակի ուշադրության չեն արժանացել, իսկ գրավոր լեզվում հանդես եկող հավելյական կառույցներն էլ ինչ-ինչ պատճառներով խորազնին քննության չեն առնվել:

Հավելյական կառույցների բավականաչափ ուսումնասիրված չլինելը դրանց ոչ ճիշտ գնահատություն տալու առիթ է հանդիսացել: Երբեմն դրանք ոճական, նույնիսկ շարահյուսական սխալներ են համարվել: Նման դիրքորոշում դիտվել ու դիտվում է հատկապես խմբագրական և մանկավարժական պրակտիկայում:

Այս կապակցությամբ տեղին է նշել, որ ռուս իրականության մեջ հավելյական կառույցների ոճական կամ շարահյուսական սխալ լինելու վերաբերյալ գրավոր փաստարկումներ էլ են եղել: Տարբեր լեզվաբանների կողմից

նկատվել է¹, որ նման մոտեցում կա Լ.Ս. Մլավինայի «Կետադրության ուսուցման հոգեբանական վերլուծություն» հոդվածում² և Դ.Ն. Բոգոյավլենսկու «Ուղղագրության յուրացման հոգեբանության ակնարկներ»³ գրքույկում:

Երկու հեղինակներն էլ ճիշտ են համարում միայն նախադասությունների կապակցման այն տեսակները, որոնք տիպական են գրավոր լեզվին և որոնց վերլուծությամբ սահմանափակվում է նախադասության շարահյուսության ուսուցումը դպրոցում: Դ.Ն.Բոգոյավլենսկու գրքույկում կան աշակերտների գրավոր աշխատանքներից մեջբերված նախադասություններ, որոնք, հեղինակի կարծիքով, սխալ են.

Они увидели молнию. И побежали домой.

Девушка собирала цветы. И сплетала венок.

Ըստ Բոգոյավլենսկու, այս օրինակներում նկատվում է վերջակետի և մեծատառի անհարկի գործածություն, ուղղագրության իզուր բարդացում և այլն:⁴

Սակայն բերված օրինակները չի կարելի սխալ համարել: Դրանք սովորական հավելական հարաբերությամբ կապված նախադասություններ են, որոնք հասկանալի են երեխաների խոսակցական լեզվին:

Հայ իրականության մեջ նման գրավոր ելույթներ չեն եղել, բայց մեզանում ևս նկատվում է հավելական

¹ Տես, օրինակ՝ Ս.Ե. Крючков, *О присоединительных связях в современном русском языке*, сб. «Вопросы синтаксиса современного русского языка» М., 1950, էջ 399-400.

² Л.С. Славина, *Психологический анализ обучения пунктуации*, журнал «Советская педагогика», № 1, 1939 г.

³ Д.Н. Богоявленский, *Очерки психологии усвоения орфографии*, изд. А. пед. наук, М., 1948.

⁴ Նշվ. աշխ., էջ 79-80:

կառույցներից խուսափելու, դրանք շարահյուսական ոչ ճիշտ կառուցվածք համարելու հակվածություն:

Նաիրիի շրջանի Քասախ ավանի միջնակարգ դպրոցում տնօրենի և հայոց լեզվի, գրականության ուսուցչուհու հետ պայմանավորվելուց հետո դպրոցի 5-րդ դասարանի աշակերտներին հանձնարարվեց կատարել գրավոր աշխատանք Ավ. Իսահակյանի «Արագածին» և «Եղնիկը» ստեղծագործությունների վերաբերյալ: Եվ հատկանշական է, որ նույն թեմաների շուրջը բանավոր խոսակցության ժամանակ աշակերտների խոսքի մեջ անհամեմատ շատ էին հավելյալ կառույցները, մինչդեռ նրանց գրավոր աշխատանքներում դրանք հատուկենտ էին: Նույն արդյունքը տվեց և բարձր դասարաններում կատարված փորձը: Աշակերտներն իրենք էլ, որոնց բանավոր խոսքում այնքան հնչեղ ու գործածական էին հավելյալ կառույցները, կարծես հակված էին գրավոր լեզվում սխալ համարելու այդպիսի նախադասությունները (հիարկե, առանց տեսական գիտելիքներ ունենալու, քանի որ դպրոցական ծրագրում խոսք չկա այդ մասին):

Ինչպես արդեն նշվեց, այս մոտեցումը համատարած ու կայուն չէ, բայց ստիպում է խորհրդածել: Չէ՞ որ, թեկուզ մասամբ, անընդունելի համարել հավելյալ կառույցները, նշանակում է լեզուն զրկել իմաստային, հուզական և ոճական այն բազում նրբերանգներից, որոնք կենդանի խոսքին հաղորդվում են դրանց միջոցով: Այս առումով էլ պահանջ է առաջանում անդրադառնալու հավելյալ կառույցների ուսումնասիրությանը ինչպես տեսական, այնպես էլ գործնական նկատառումներով: Հակառակ այն բանի, որ հավելյալ կառույցները հայերենում հանդես են եկել դեռևս հին ժամանակներից, ազատորեն օգտագործվել են ժողովրդական բանահյուսության մեջ ու խոսակցական

լեզվում, հայ լեզվաբանության մեջ դրանց գիտական ուսումնասիրության հիմքերը դրվում են 20-րդ դարի սկզբին: Եվ դա հասկանալի է, քանի որ հայ քերականագիտությունը սկզբնապես ձևավորվել և զարգացել է որպես ուսմունք խոսքի մասերի մասին, այսինքն այն ամփոփվել է հիմնականում ձևաբանության շրջանակներում: Այդպես էր վիճակը՝ սկսած Դիոնիսիոս Թրակացու «Քերականական արվեստի» առաջին մեկնիչ Դավթից մինչև միջնադարի քերականներ Գրիգոր Մագիստրոսը, Վարդան Արևելցին, Եսայի Նչեցին, Հովհաննես Երզնկացին, Դավիթ Ջեյթունցին, Հովհաննես Ծործորեցին և ուրիշներ:

Այս քերականներն իրենց աշխատություններում գերազանցապես մեկնաբանում, լուսաբանում էին հույն հեղինակի քերականական սահմանումները՝ ձգտելով հիմնավորել դրանք հին և միջին հայերենի օրինաչափություններով և հարմարեցնել իրենց ուսուցողական նպատակներին: Այդ պատճառով էլ նրանց ուսումնասիրությունները հիմնականում ընդգրկում էին ձևաբանական հարցեր, իսկ շարահյուսական խնդիրների քննությունը նրանց հատուկ ուշադրությանը չէր արժանանում: Այսպես, օրինակ, Վ.Արևելցին, Ե.Նչեցին, խոսքը սահմանելով որպես «հետևակ բառի շարադրութեան՝ զտրամախոհութիւնն ինքնակատար յայտնելով»⁵, բավարարվում են այսքանով և անցնում խոսքի մասերի քննությանը՝ մի կողմ թողնելով խոսքի միավորների, նրանց կապակցման ձևերի ու միջոցների, դրանց շարահյուսական առանձնահատկությունների ուսումնասիրությունը:

⁵ Վ.Արևելցի, *Մեկնութիւն քերականի*, Ե, 1972, էջ 101:

Ե. Նչեցի, *Վերլուծութիւն քերականութեան*, Ե, 1966, էջ 102:

Բնական է, եթե ձևավորված, ամբողջացած չէ շարահյուսությունը որպես քերականության առանձին բաժին, նաև հիմնավոր խոսք չի լինի շարահյուսական որևէ միավորի (տվյալ դեպքում հավելական կառույցի) ուսումնասիրության մասին:

14-րդ դարի հայ քերական Հովհաննես Քոնեցին փորձեց շեղվել արդեն ավանդություն դարձած և օրինակի ուժ ստացած այս մեկնողական տիպի քերականությունից և յուրովի ներկայացնել իր ժամանակի հայերենի ամբողջական նկարագրությունը: Այս առումով նա գրեթե հասավ իր նպատակին, և նրա «Յաղագս քերականին» գրքի «Յաղագս գիտութեան բաղադրելոց» և «Յաղագս շարամանութեանց»⁶ բաժիններում կա նաև իր ժամանակի հայերենի շարահյուսական նկարագրությունը: Մասնավորապես դիտարկված են շարահյուսական այնպիսի կարևոր հարցեր ու միավորներ, ինչպիսիք են բանը կամ շարամանությունը (խոսք, նախադասություն), պարզ բանը (պարզ նախադասություն), հոլովների շարահյուսական կիրառությունները, համաձայնությունն ու կառավարությունը (խնդրառություն) և այլն:

Ճիշտ է, Քոնեցին չի խոսում հավելական կառույցների մասին՝ որպես նախադասությունների կամ դրանց անդամների կապակցման ձևի, տեսակի, որովհետև նա խոսքի մեջ մտնող նախադասությունների (շարամանությունների) հարաբերություններն ու կապակցման տեսակները քննում է կամ նկատի ունենալով միայն նրանց դասավորությունը և ըստ այդմ էլ տարբերում է նախընթաց և հետընթաց ասություններ,⁷ կամ էլ նախադասության հիմնական ան-

⁶ Յովհաննես Քոնեցի, *Յաղագս քերականին*, Ե, 1977, էջ 191-211:

⁷ Նույն տեղը, էջ 199:

դամի՝ բայի սեռային հատկանիշը և ըստ դրա էլ առանձնացնում է անցողական, ոչ անցողական և անդրաշրջական (անդրադարձ) շարամանություններ⁸, բայց մեծ է նրա կատարած գործը հայերենի շարահյուսության ձևավորման ու զարգացման ասպարեզում, մի բան, որը պետք է հիմք հանդիսանար շարահյուսական նորանոր ուսումնասիրությունների, շարահյուսական հարցերի խորագնին քննությունների համար: Սակայն այդպես չեղավ: Եվ դրանում քիչ դեր չխաղաց նաև այն հանգամանքը, որ Քոնեցին մերժվեց որպես հայոց եկեղեցու լուծարքի ճանապարհն ընտրած մարդ, հայոց եկեղեցին հռոմեականի հետ միաձուլելու ազգադավ գործի կողմնակից՝ համարվելով հայ ժողովրդի ազգային շահերի դավաճան: Եվ անուշադրության ու մոռացության մատնվեց նրա քերականագիտական վաստակը: Ի դեպ, այս մասին, ինչպես նաև ունիթորական շարժման գլխավոր պարագլուխներից մեկի՝ Քոնեցու գործունեության վերաբերյալ հետաքրքրվողները կարող են տարատեսակ տեղեկություններ ստանալ արդեն հիշատակված և հղված «Յաղագս՝ քերականին» գրքի ներածությունից, որը գրել են Լ.Ս. Խաչիկյանն ու Ս.Ա. Ավագյանը:

Լեզվի կառուցվածքի ուսումնասիրության ինքնատիպ քերականությունների շրջանի⁹ առաջին հեղինակների գոր-

⁸ Նույն տեղը, էջ 200:

⁹ Տվյալ դեպքում հիմք ենք ընդունում այն պարբերացումը, որ կատարել է Գ.Բ. Ջահուկյանը, ըստ որի պետք է տարբերակել գրաբարի քերականական կառուցվածքի ուսումնասիրության երեք շրջան.

1. Հունատիպ քերականությունների (5-17-րդ դդ.)
2. Լատինատիպ քերականությունների (17-ի սկզբներից մինչև 18-րդ դար)

ծերը նույնպես աչքի չեն ընկնում շարահյուսական հարցերի ամբողջական, մանրագին քննությամբ: Դրանցում ուշադրությունը բևեռված է հիմնականում շարահյուսական մի քանի իրողությունների վրա (համաձայնություն, շարահասություն, ավելադրություն, բակառություն, զեղչում և այլն), իսկ նախադասությունների կապակցման տեսակների ու եղանակների, բարդ նախադասության բաղադրիչների միջև դրսևորվող հարաբերությունների վերաբերյալ կամ խոսք չկա, կամ էլ հատուկենտ դիտողություններ են արվում:

Հետևաբար և այդ աշխատանքներում չեն կարող լինել ուսումնասիրություններ հավելական կառույցների մասին: Մակայն այս առումով պետք է նշել մի հետաքրքրական հանգամանք. խորապես ծանոթանալով այդ գործերին՝ կարելի է եզրակացնել, որ հենց այս շրջանում արդեն լեզվաբանների համար ընդունելի է հավելական կառույցների գոյության փաստը: Ճիշտ է, դրանք դեռևս չեն առանձնացված որպես շարահյուսական կապի տեսակ, առանձին քննության չեն ենթարկվում որպես հավելական կառույցներ, բայց շարահյուսական այլ երևույթների քննության ընթացքում բերվում են նաև օրինակներ տիպիկ հավելական կառուցվածքներով: Ուրեմն, արդեն նկատվել են հավելական կառույցները, բայց դեռ չեն ճանաչվել, չեն միավորվել մեկ ընդհանուր սկզբունքի տակ, այլ մի տեսակ սփռված, տարաբաշխված են շարահյուսական ուրիշ միավորների, երևույթների մեջ: Այսպես, օրինակ, Պաղտասար Դպիրի «Պարզաբանութիւն քերականութեան»

-
3. Ինքնատիպ քերականությունների (18-ի կեսերից մինչև մեր օրերը):

Տես՝ Գ.Բ. Ջահուկյան, *Հին հայերենի հոլովման համակարգը և նրա ծագումը*, Ե, 1959, էջ 11-26:

գրքում հանդիպում ենք մի շարք հավելական շաղկապների, որոնք սակայն, բաշխված են ուրիշ տեսակների մեջ: Դրանց մի մասը համարվում է բաղիիսական (և, այլև, նաև, իսկ և, և...և), մի մասը՝ կրկնական (ևս, և ևս, նա ևս), մի մասը՝ առաւելական (մանավանդ ևս, առավել ևս), իսկ մի մասն էլ երկատեսակք (թող թէ, ուր մնաց թէ)¹⁰: Հեղինակը նույնիսկ մի քանի օրինակներ է բերում այդ շաղկապներով, որոնք հավելական կառույցներ են.

Քայլել անգամ ոչ կարէ, թող թէ վազել: Ջիրէշտակս դատեմք, թող թէ գերկրաւորս: Որպէս պտղաբեր ծառն սիրելի է տնկողին, այսպէս և բարեգործ հոգին հաճելի է ստեղծողին¹¹:

Ինչպէս տեսնում ենք, Պաղտասար Դպիրը փաստորեն թվարկում է իր ժամանակի հայերենի մի քանի հավելական շաղկապները և մեջ է բերում դրանցով միացած հավելական միավորներ: Սակայն ո՛չ շաղկապներն են առանձնացվում որպէս հավելական, ո՛չ էլ կառույցները:

Արսէն Բագրատունին ու Արսէն Այտընյանը նույնպէս բերում են տիպիկ հավելական հարաբերությամբ նախադասություններ, սակայն շարահյուսական ուրիշ երևույթների (համաձայնություն, ավելադրություն) քննարկման առնչությամբ և առանց մատնանշելու դրանց հավելական բնույթը:

Դուք գրկէք և նեղէք, և այդ գեղբայրս ևս¹²:

Ի՞նչ կըրցան ինձի չարասիրտներն ընել. ինձի, որ ամենէն տկարն էի¹³:

¹⁰ Պաղտասար Դպիր, *Պարզաբանութիւն քերականութեան կարճատօս և դիւրիմաց*, Հ.1, 2, Կ.Պոլիս, 1771; էջ 169-179:

¹¹ Նույն տեղը, էջ 174:

¹² Ա. Բագրատունի, *Հայերէն քերականութիւն*, Վենետիկ, 1852, էջ 448:

Հավելական կառույցների, որպես շարահյուսական միավորների կապակցման տեսակի, ճանաչմանն ընդհուպ մոտեցավ Ս. Պալասանյանը: Նա առաջինն էր, որ հայ լեզվաբանության մեջ հանգամանորեն քննեց ինչպես բարդ ստորադասական նախադասության բաղադրիչների հարաբերությունը, երկրորդական նախադասությունների տեսակներն ու դրանց կապակցման ձևերը, այնպես էլ անկախ նախադասությունների (բարդ համադասական նախադասության բաղադրիչների) հարաբերությունն ու նրանց կապակցման տեսակները:

«Բաղադրյալ նախադասությունը, - գրում է Ս. Պալասանյանը, - երբեմն այնպիսի նախադասություններից է կազմված, որոնք քերականորեն մեկը մյուսից ամենևին կախում չունին, այլ ընդհակառակն, յուրաքանչյուրը առանձին առած՝ ամբողջ և անկախ միտք է պարունակում իր մեջ»¹⁴:

Դժվար չէ կռահել, որ Պալասանյանը նկատի ունի բարդ համադասական նախադասությունը: Եվ, ըստ նրա, այդպիսի նախադասությունների կապակցությունը երկու տեսակ է լինում.

«1. Բաղիյուսական, որով համաձայն նախադասությունները իրարու հետ կապվում են, և՛ 2. Ներհակական, որով անհամաձայն կամ հակառակ նախադասությունները միմյանց հետ կապվում են»¹⁵:

¹³ Ս. Այտընեան, *Քերականություն արդի հայերեն լեզուի*, Վիեննա, 1883, էջ 162:

¹⁴ Ս. Պալասանյան, *Գործնական քերականություն հայերեն լեզուի*, Թիֆլիս, 1869, էջ 96:

¹⁵ Նույն տեղը, էջ 97:

Եվ հենց կապակցման բաղիյուսական տեսակի մեջ էլ Պալասանյանը նշում է այնպիսի կիրառություններ, որոնք համընկնում են հավելական կառույցներին: Այսպես.

«Ի սկզբանե արար Աստուած զերկին և զերկիր: Եվ երկիր էր աներևոյթ և անպատրաստ, և խաւար ի վերայ անղնդոց. և հոգի Աստուծոյ շրջէր ի վերայ ջուրց: Ոչ միայն յոգիան մխիթարեալ կացին առ աներևոյթ զօրութիւն յուսոյն յավիտենից, այլև մարմնոյ նեղութեամբք առաւել ևս բարձին զբեռն ծանրութեան»¹⁶:

Այսպիսով, Պալասանյանը փաստորեն խոսում է բարդ համադասական նախադասության բաղադրիչների հարաբերության հավելական տեսակի մասին, սակայն այն դիտարկում է որպէս բաղիյուսական կապակցման մասնավոր դրսևորում:

Ինչպէս շարահյուսական մի շարք այլ հարցերի, այնպէս էլ հավելական կառույցների առանձին ուսումնասիրությունը կապվում է երախտավոր հայագետ Մանուկ Աբեղյանի անվան հետ: Նա է հավելական կառույցների առաջին ուսումնասիրողը:

Դրանք համարելով «խոսքերի կապակցության» համադասական ձևին հատուկ իրողություններ՝ Մ.Աբեղյանը գրում է.

«Հավելական կապակցության մեջ երկրորդ խոսքը կամ խոսքերը բովանդակությամբ կամ համարժեք են առաջինին և պարզաբար ավելանում են առաջինի վրա, ինչպէս՝ Անցավ մի ամբողջ շաբաթ, և ես նրան տեսնել չկարողացա. կամ համեմատ են առաջինին, բայց նրանից ավել արժեք ունին, ուստի և շեշտվելով են մեջբերվում, ինչպէս՝ Դու ոչ միայն

¹⁶ Նույն տեղը:

տուն ես գնացել, այլ տեսել ես նրան»¹⁷: Խոսելով դրանց իմաստային, շարահյուսական կողմերի մասին՝ Աբեղյանն առանձնացնում է նաև այն շաղկապները, որոնք գործածվում են հավելական կառույցների հետ: Դրանք են.

1. Եվ ու (ամենից գործածական շաղկապներն են անորոշ նշանակությամբ)¹⁸:

2. Էլ, ևս, նաև, այլև (հավելական նշանակության հետ ունին զորացման կամ աճման երկրորդական գաղափար), նույնպես և, նմանապես և, ինչպես և (ցույց են տալիս լրկ հավելում):

3. Եվ այն, այն էլ (արտահայտում են սահմանափակում, որով սաստկանում է նախորդ խոսքի մեջ ասվածը):

4. Եվ, էլ (հետադաս), մինչև անգամ, անգամ, մինչև իսկ, նույնիսկ (որոնցով կապված խոսքերը կամ բառերն առանձնապես շեշտվելով են մեջ բերվում իբրև չսպասած կամ ծայրագույն աստիճան):

5. Մանավանդ, և մանավանդ, մանավանդ որ, մանավանդ թե (կապելով երկրորդ խոսքը՝ ցույց են տալիս սրա առավելությունն առաջինից):

6. Ոչ միայն...այլև, ինչպես...նույնպես և (առաջինը հավելական նշանակության հետ ունի և սաստկացման երկրորդական գաղափար, իսկ երկրորդը միայն հավելում է ցույց տալիս):

7. Ու՞ր մնաց որ, ու՞ր մնաց թե, թող թե (շեշտելով մեջ են բերում երկրորդ խոսքը՝ տալով նրան ժխտական նշանակություն): Խոսվում է նաև և, ու, էլ, թե...և թե, թե...թե շաղկապների ու ոչ...ոչ, ոչ էլ, և ոչ բառերի շեշտված կրկնությունների մասին: Մ.Աբեղյանը միաժամանակ նշում է, թե

¹⁷ Մ.Աբեղյան, *Հայոց լեզվի տեսություն*, Ե, 1965, էջ 654:

¹⁸ Փակագծերում տրվում են Մ.Աբեղյանի բնորոշումները:

բերված շաղկապներից ու շաղկապական նշանակությամբ գործածվող բառերից որոնք են դրվում կապվող մասից առաջ, որոնք են:


Մակայն Աբեղյանը հավելական է համարում նաև միավորական կապակցությունները՝ այդ երկուսը միասին անվանելով հավելական համադասություն:

Այս իրողությունը նոր պարզաբանումներ անելու, երևույթների տարաբաշխում կատարելու անհրաժեշտություն էր առաջացնում: Հետաբեղյանական շրջանի ուսումնասիրություններում կարելի է առանձնացնել երկու հիմնական ուղղություն: Մեկը տերմինի փոփոխությունն էր՝ հավելականի փոխարեն կիրառել հարակցական անվանումը: Այս ուղղությանը ժամանակագրորեն անդրադառնալու դեպքում նախ պետք է հիշատակել Գ.Գարեգինյանի «Շաղկապները ժամանակակից հայերենում» աշխատությունը, որի մեջ հարակցական (հավելական) շաղկապների ու կառույցների վերաբերյալ բավականաչափ դիտողություններ կան: Հարակցական (հավելական) նա համարում է այնպիսի կառույցները, որոնք «իրենց ընդհանուր բովանդակությամբ հանդես են գալիս նախորդ համադասը որևէ նոր կողմով լրացնելու, այն որևէ տեսակետից ճշգրտելու, մասամբ նաև եզրափակման կամ հետևության նշանակությամբ»¹⁹:

Դրանք դիտարկելով որպես հիմնականում բանավոր խոսակցական լեզվին հատկանշական երևույթներ, «երբ խոսակիցների մեջ այս կամ այն միտքը առաջանում է հենց խոսքի ընթացքում և անմիջապես արտահայտվում է»²⁰, Գ.Գարեգինյանն առանձնացնում է նաև այն շաղկապները,

¹⁹ Գ.Լ.Գարեգինյան, *Շաղկապները ժամանակակից հայերենում*, Ե, 1963, էջ 119:

²⁰ Նույն տեղը, էջ 120:



որոնք ծառայում են հավելյալական հարաբերությունն արտահայտելու համար:

Այդպիսիք են ամենից առաջ հավելյալական նշանակությունն ընդգծող միավորիչ շաղկապները. «Քանի որ տարբեր փաստերի ու իրողությունների միավորումը անպայման ենթադրում է նաև այդ փաստերի ու իրողությունների ավելացումը, գումարումը մեկը մյուսի վրա, ապա պատահական չէ, որ միավորիչ շաղկապներն ունեն նաև հավելյալական նշանակություն: Այս դեպքում ևս այդ նշանակությունը հավասարապես նույն աստիճանով հանդես չի գալիս: Կան միավորիչ շաղկապներ, որոնք առանձնացվել են լեզվում այդ հարաբերությունը ավելի որոշակիորեն նշելու համար»²¹: Դրանք են՝ նաև, ինչպես և, ինչպես նաև, նույնպես, որպես և, ինչպես...այնպես և, ինչպես...այնպես էլ, ինչպես...նույնպես և, ինչպես...նույնպես էլ, ոչ միայն...այլև:

Հեղինակը նշում է նաև համադասական մի շարք ուրիշ շաղկապների (և, ու, իսկ, բայց) ու որոշ եղանակավորող բառերի մանավանդ, նամանավանդ, թող թե, ուր մնաց թե, ուր մնաց որ հավելյալական նշանակությամբ գործածությունները:

Գ. Գարեգինյանը խոսում է և հավելյալական շաղկապների ու կառույցների այլ նշանակությունների (ներառական, սաստկական և այլն), դրանց իմաստային, ոճական կիրառությունների մասին:

Հարակցական (հավելյալական) կապակցությունները Վ.Առաքելյանի «Հայերենի շարահյուսություն» երկհատորանոց ուսումնասիրության մեջ քննվում են երեք տեսանկյունով.

²¹ Գ.Լ. Գարեգինյան, նշվ. աշխ. էջ 101:

1. Հարակցական կառույցները բարդ համադասական նախադասության կազմում:

2. Հարակցական կառույցները բարդ ստորադասական նախադասության կազմում:

3. Շարահարությամբ հարակցական կառույցներ:

«Հարակցական կապակցությամբ արտահայտված բարդ համադասական նախադասության մեջ, - գրում է Վ. Առաքելյանը, - երկրորդ նախադասությունը, որ սկսվում է որևէ համադասական շաղկապով, դառնում է առաջինի համար իբրև լրացուցիչ հավելում, իբրև կողմնակի հաղորդում նրա բովանդակության վերաբերյալ, որով առաջին նախադասության բովանդակությունը այս կամ այն առումով հարստանում է: Այս դեպքում երկրորդ նախադասությունը չունի զուգադրության կամ հակադրության այն ներդաշնակ կապակցությունը, որով համադասությունը ստանում է համաչափ հնչերանգային մի ամբողջականություն: Առաջին նախադասությունը արտաբերվում է իբրև մի ամբողջական հաղորդում, երկրորդ նախադասությունը հաջորդում է անսպասելի, անհամաչափ և չի պայմանավորվում առաջինի ձևական կառուցման հանգամանքներով, իբրև վերջինիս համաչափ զուգորդություն, հակադրություն միևնույն կշռությային ու շարադասական համապատասխանությամբ: Համադասության երկու մասերը կշռությային, շարադասական և անդամների քանակային բոլորովին անհամապատասխան մասեր են, որի պատճառով կապակցությունը կորցնում է իր կառուցվածքային ու հնչերանգային համաչափությունը»²²:

²² Վ. Դ. Առաքելյան, *Հայերենի շարահյուսություն*, Բ հատոր, Ե, 1964, էջ 353:

Նշելով այս առանձնահատկությունները՝ Վ.Առաքելյանը բերում է հարակցական կապակցությամբ բարդ համադասական նախադասությունների օրինակներ և, ու, իսկ, բայց, սակայն, մանավանդ և այլ շաղկապներով:

Բարդ ստորադասական նախադասության կազմում մի շարք երկրորդական նախադասությունների կողքին Վ. Առաքելյանն առանձնացնում է հարակցական կամ կողմնակի հաղորդման երկրորդական նախադասությունը: Նա այդպես է անվանում այն երկրորդական նախադասությունները, որոնք արտահայտում են լրացուցիչ պատճառ, պայման, հետևանք: Նշվում է, որ այսպիսի նախադասությունների կապակցման համար միջոց են ծառայում թե, որ, ուր մնաց, ուր թե շաղկապներն ու շաղկապային բառակապակցությունները և այլն:

Վ. Առաքելյանը խոսում է նաև շարահարությամբ հարակցական կառույցների մասին, այսինքն, երբ նախադասությունների միացումն իրականացվում է առանց շաղկապների: Այդ դեպքում «բարդ նախադասության առաջին մասում հաղորդվում է որևէ գործողություն, տեսողական, լսողական ընկալում, վիճակ կամ հատկանիշ, իսկ երկրորդ մասը բացահայտում, պարզաբանում, ցույց է տալիս առաջին մասում հաղորդվածի էությունը, ներքին բովանդակությունը, այսինքն այն, թե ինչ է այդ ընկալման առարկան կամ նյութը»²³:

Անշաղկապ հավելական կառույցները քննում է նաև Ն. Պառնասյանը: Նա առանձնացնում է դրանց երկու հիմնական տեսակներ.

1. Համադասական հարաբերություն արտահայտող հավելական (հարակցական) կառույցներ, երբ «մի որևէ

²³ Վ. Դ. Առաքելյան, նշվ. աշխ. էջ 383:

մտքի, դատողության ուղղակի ավելացվում է մեկ ուրիշը որպես լրացուցիչ հաղորդում՝ միտքը ավելի պարզաբանելու, լրիվ դարձնելու նպատակով, կամ ուղղակի թվարկվում են մի քանի գործողություններ, երևույթներ՝ մեկ ամբողջական պատկեր ստեղծելու նպատակով: Մրանք ընդհանուր մտքով միմյանց կապված, սերտ ամբողջություն կազմող, բայց համեմատաբար ավելի ինքնուրույնություն ունեցող համադաս նախադասություններից բաղկացած անշաղկապ նախադասություններ են»²⁴:

2. Ստորադասական հարաբերություն արտահայտող հավելական (հարակցական) կառույցներ, որոնց ժամանակ անշաղկապ նախադասության երկրորդ մասը, ի տարբերություն մյուս ստորադասական նախադասությունների, «չի կատարում գլխավոր նախադասության որևէ անդամի պաշտոն, չի լրացնում որևէ անդամի, այլ կամ բացատրում է ամբողջ գլխավոր նախադասության բովանդակությունը՝ նրա առաջացման պատճառը կամ նրանից առաջացած հետևանքը նկարագրելու միջոցով, կամ պարունակում է լրացուցիչ հաղորդում գլխավոր մասով հաղորդված գործողության մասին»²⁵:

Մյուս ուղղության ներկայացուցիչները տերմինի փոփոխություն չեն առաջադրում: Պահպանելով հավելական կապակցություն տերմինը և վերջինս դիտելով որպես բարդ համադասական նախադասության բաղադրիչների միացման տեսակ, Ս. Աբրահամյանն այն առանձնացնում է միավորական կապակցություններից:

²⁴ Ն.Ա. Պառնասյան, *Անշաղկապ բարդ նախադասությունները ժամանակակից հայերենում*, ժող. «Լեզվի և ոճի հարցեր» 2, Ե, 1964, էջ 35:

²⁵ Նույն տեղը, էջ 146:

«Մա հարաբերության այն տեսակն է, - գրում է Ս. Աբրահամյանը, - որի դեպքում բարդ համադասական նախադասության երկրորդ մասը իմաստային ու կառուցվածքային տեսակետից հանդիսանում է մի հավելում նախորդ մասի համար: Այդ հավելումով սովորաբար նախադասության նախորդ մասի վերաբերյալ տրվում է մի լրացուցիչ բացատրություն կամ նրա կապակցությամբ արտահայտվում է մի կողմնակի միտք: Օրինակ՝ Արամը մրցման մեջ գրավեց առաջին տեղը, և դա շատ ուրախացրեց ընկերներին: Հակոբը պատվոգիր ստացավ, և դա նրա երկրորդ պատվոգիրն էր: Երեխաները հաճույքով խաղում էին բակում, բայց արդեն շատ ուշ էր»²⁶:

Իր «Ժամանակակից հայերենի քերականություն» աշխատության մեջ Ս. Աբրահամյանը խոսում է նաև հավելական շաղկապների մասին: Համադասական շաղկապները բաժանելով երեք տեսակների՝ միավորիչ, տրոհական, ներհակական, նա միավորիչ շաղկապների կազմում առանձնացնում է հավելում ցույց տվող շաղկապները՝ ևս, ևս, էլ, այլև, ինչպես և, ինչպես նաև, նույնպես և, նույնպես էլ, ոչ միայն...այլև, ինչպես...այնպես էլ:

«Այս շաղկապները արտահայտում են ոչ թե տվյալ պայմաններում արդեն եղող կամ որևէ տեսակետից հայտնի առարկայի, հատկանշի շարքը, այլ առարկա, հատկանիշ հավելելու իմաստ»²⁷: Նշվում է, որ հավելում արտահայտող շաղկապները, մեկ ընդհանուր հավելման հատկանիշ ունենալով հանդերձ, ունեն նաև երանգային ու կիրառական տարբերություններ:

²⁶ Ս. Գ. Աբրահամյան, *Ժամանակակից հայերենի քերականություն*, Ե, 1965, էջ 389:

²⁷ Նույն տեղը, էջ 222:

Գ.Բ. Ջահուկյանը նույնպես համադասական շաղկապների կազմում առանձնացնում է հավելական շաղկապները իրենց երկու ենթատիպերով. 1. դրական հավելական կամ միասնության, 2. ժխտահավելական կամ կրկնաժխտական: Խոսելով դրանց իմաստային, կիրառական առանձնահատկությունների մասին՝ Գ. Ջահուկյանը նշում է, որ այդ շաղկապները կարող են հանդես գալ նաև մյուս կարգի շաղկապների դերում կամ նրանց հետ միասին, քանի որ «մարդկային խոսքը ոչ այլ ինչ է, եթե ոչ լեզվական միավորների հաջորդական հավելում»²⁸:

Ելնելով հարցի պատմության այս համառոտ շարադրանքից, կարելի է կատարել հետևյալ եզրակացությունները.

Ա. Հայ լեզվաբանության մեջ հավելական կառույցները դիտվում են որպես նախադասությունների կամ խոսքի միավորների կապակցման տեսակ, ձև, ու որպես այդպիսին, հիմնականում արտահայտում են համադասական հարաբերություն:

Բ. Հավելական կառույցներ կարող են կազմել նաև բարդ ստորադասական նախադասությունները արտահայտելով ստորադասական հարաբերություն:

Գ. Հավելական միավորների կապակցման միջոցներն են.

1. Շաղկապներն ու շաղկապական բառերը. որոշ շաղկապական բառերի, համադասական ու ստորադասական որոշ շաղկապների կողքին առանձնացվում են բուն հավելական շաղկապները, որոնք ծառայում են հատկապես հավելական կառույցների ձևավորմանը:

²⁸ Գ.Բ. Ջահուկյան, *Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները*, Ե, 1974, էջ 500:

2. Շարահարությունը, որի դեպքում հավելական միավորների կապակցումը չի դրսևորվում շաղկապներով ու շաղկապական բառերով:

Դ. Ինչպես հավելական շաղկապները, այնպես էլ հավելական կառույցները հանդես են բերում կիրառական, իմաստային և ոճական տարբեր առանձնահատկություններ:

Հավելական կառույցների (присоединительные конструкции) ուսումնասիրության ավելի հարուստ փորձ ունի ռուս լեզվաբանությունը:

Հայտնի փաստ է, որ դեռևս 19-րդ դարի առաջին կեսին այդ կառույցներին ուշադրություն դարձրեց Ն.Ի.Գրեչը՝ տալով դրանց ավելական (присовокупительные) անվանումը, «որոնցով արտահայտվում է ևս մեկ կամ մի քանի նախադասությունների ավելացումը արդեն ձևավորված կամ լրիվ պարզ կամ բարդ նախադասությանը»²⁹:

Կ.Ս. Ակսակովը բավական ճիշտ է նկարագրել “А” շաղկապի հավելական նշանակության երանգները: А-ն բանավոր հաղորդակցման ժամանակ արտահայտում է հատկապես հավելում, միտք՝ կարծես անսպասելի, անակնկալ, գլխում հանկարծակի ծագած, որը և համապատասխանում է խոսակցական լեզվի բնույթին³⁰:

Ա.Ս. Պեշկովսկին, նկարագրելով բանավոր խոսքի ռիթմամեղեդային կողմը, առաջ է քաշում «դադարով առանձնացված համադասությունը» և «դադարով առանձնացված ստորադասությունը» որպես համադասության և ստորադասության տարատեսակությունների դրսևորման

²⁹ Н.И. Греч, *Практическая русская грамматика*, СПб., 1834, стр. 349.

³⁰ К.С. Аксаков, *Полное собрание сочинений*, т. II, ч. I, Сочинения филологические, М., 1875, стр. 638.

ձևեր³¹: Միայն թե դրանք բավականաչափ չեն բացահայտվում: Նրա կողմից բերված օրինակներում նախադասությունները միացած են հավելական հարաբերությամբ, այդ միացումը իրականացված է տիպիկ հավելական շաղկապներով, սակայն չի նշվում հավելական շաղկապների ինքնուրույն գոյությունը, չեն որոշվում հավելական կառույցների սահմանները:

Այս հարցերն ավելի ընդարձակ ձևով լուսաբանում է Լ.Վ. Շչենբան, որին և պատկանում է հավելական կառույց (присоединительная конструкция) տերմինը: «Ռուսաց լեզվի խոսքի մասերի մասին»³² հոդվածում նա վերլուծում է համադասական շաղկապների գործածությունը հավելական նշանակությամբ, բնութագրում հավելական կառույցների բնորոշ առանձնահատկություններն ու տարբերությունները: Նա այն միտքն է հայտնում, որ համադասական շաղկապները կարող են հանդես գալ նաև այլ գործառությամբ, այսինքն՝ հավելել, հարակցել բառերն ու նախադասությունները: Եվ, ըստ այդմ, եթե համադասության ժամանակ «երկու անդամներն էլ գիտակցության մեջ ներկա են արտահայտության հենց սկզբից՝ թեկուզ և մթազնած ձևով», ապա հավելական կառույցների դեպքում «երկրորդ անդամը հանդես է գալիս միայն առաջինից հետո կամ նրա արտաբերության ժամանակ: Գործառությունների նշված տարբերությունը ձևականորեն արտահայտվում է

³¹ А.М. Пешковский, *Русский синтаксис в научном освещении*, М., 1938, стр. 424-425.

³² Л.В. Щерба, *О частях речи в русском языке*, сб. «Русская речь», II, Л., 1928, стр. 23.

տրամաբանական շեշտով, երբեմն՝ դադարով, ընդհանրապես հնչերանգով»³³:

ՄՍՀՄ ԳԱ «Ռուսաց լեզվի բառարանում» (Հ. 9, 1935, էջ 1-17) «И» շաղկապի մասին հոդվածում Լ.Վ. Շչերբան, մանրամասն վերլուծելով այդ շաղկապի հավելական նշանակությունը, ցույց է տալիս դրա բազմաթիվ կիրառությունները:

Նշանակալիորեն լայնացվում և խորացվում է հավելական կառույցների և շաղկապների մասին հարցը Վ.Վ. Վինոգրադովի աշխատություններում:

«Ռուսաց լեզու» գրքի «Շաղկապներ» բաժնում³⁴ նա լայնորեն վերլուծում է պարզ շաղկապների նշանակությունը՝ հատկապես ընդգծելով նրանց հավելական նշանակությունը: Այդ գլխում կան նաև պատմական բնույթի ցուցումներ հավելական շաղկապների ու կառույցների զարգացման, տարածման և գործածությունների վերաբերյալ: Այս մասին մտքերը նա զարգացնում է նաև գրական-լեզվաբանական այնպիսի աշխատություններում, ինչպիսիք են «Պիկովայա դամայի» ոճը³⁵, «Պուշկինը և 19-րդ դարի ռուս գրական լեզուն»³⁶, «Պուշկինի ոճը»³⁷: Սրանցում Վ. Վինոգրադովը բացահայտում է հավելական կառույցի էությունը, ցույց տալիս դրա և ժողովրդախոսակցական լեզվի խորը կապը: Վերլուծելով Պուշկինի տեքստերը՝ նա նրբորեն և

³³ Նույն տեղը, էջ 23:

³⁴ В.В. Виноградов, *Русский язык*, М., 1947, стр. 709-716.

³⁵ В.В. Виноградов, *Стиль «Пиково́й дамы»*, сб. «Временник Пушкинской комиссии», № 2, М., 1936.

³⁶ В.В. Виноградов, *Пушкин и русский литературный язык XIX века*, Сб. «Пушкин – родоначальник новой русской литературы», М., 1941.

³⁷ В.В. Виноградов, *Стиль Пушкина*, М., 1941.

խորությամբ նկարագրում է հավելական կառույցների ոճական գործառնությունները:

Նրա աշխատանքներում առաջ քաշված դրույթները լայնորեն օգտագործեցին հետագա ուսումնասիրողները (Գ.Օ. Վինկուր՝ «Բառը և չափը «Եվգենի Օնեգինում»³⁸, Ն.Ս. Պոսպելով՝ «Պուշկինի «Պղնձե հեծյալը» պոեմի շարահյուսական կառուցվածքը»³⁹, «Բարդ շարահյուսական միավորը և նրա կառուցվածքի հիմնական առանձնահատկությունները»⁴⁰, «Բարդ շարահյուսական միավորի հիմնախնդիրները ժամանակակից ռուսաց լեզվում»⁴¹):

Մի քանի ռուս լեզվաբաններ զբաղվել են նաև հին ռուսերենում հավելական կառույցների ու շաղկապների ուսումնասիրությամբ: Այսպես, կան Ի.Ա. Պոպովայի կողմից արված մի քանի հետաքրքիր բացահայտություններ հին ռուսերենում որոշ շաղկապների հավելական կիրառությունների մասին: Այս առումով պետք է նշել հին ռուսերենում “А” և “И” շաղկապների նշանակությանն ու գործառնություններին նվիրված նրա ուսումնասիրությունները⁴²:

Ի. Ա. Պոստերնյան *նույնպես «Գրառումներ ռուս քերականության վերաբերյալ» աշխատության չորրորդ հատորի հավելվածում բերում է հավելական կառույցների տիպիկ օրինակներ հին ռուսերենից:*

³⁸ Сб. “Пушкин”, под ред. проф. А.М. Еголина, М., 1941.

³⁹ Доклады и сообщения ин-та Русского языка АН СССР, вып. II, 1948, стр. 43-69.

⁴⁰ Доклады и сообщения филол. фак-а МГУ им. М.В. Ломоносова, вып. I, 1946, стр. 18-21.

⁴¹ Труды кафедры русского языка МГУ, кн. II, 1948, стр. 31-41.

⁴² Научная сессия 1945г. МГУ, Тезисы докладов, М., 1945, стр. 46-50.

Հավելական կառույցների մասին ուսումնասիրությունները բազմաթիվ են, ուստի հարկ չկա բոլորի վերաբերյալ խոսելու, ասենք միայն, որ ռուս լեզվաբանության մեջ, ինչպես նշում է Ն.Ս. Վալզինան, նկատվում է հավելական կառույցների ուսումնասիրության երկու պլան.

1. կառուցվածքային-քերականական,

2. ոճական-տրամաբանական:

Առաջին դեպքում հավելական կառույցները քննվում են որպես շարահյուսական կապի (կապակացման) ձև կամ յուրատեսակ դրսևորում: Հարցն այսպես է դրված Ն.Ս. Վալզինայի, Մ.Վ. Կարպենկոյի, Ա.Ն. Գվոզդևի, Ն.Ս. Պոսպելովի, Ա.Բ. Շապիրոյի, Տ.Գ. Պլեչենկոյի, Ա.Պ. Վելիչուկի, Վ.Ֆ. Միլկի և ուրիշների աշխատանքներում:

Իսկ երկրորդ դեպքում հավելական կառույցները դիտվում են որպես բառերի և արտահայտությունների միացում՝ իմաստային և ոճական հարաբերությամբ: Ուսումնասիրության նման պլան ընտրել են Վ.Վ. Վինոգրադովը, Ա.Բ. Եֆիմովը և ուրիշներ:

Մակայն ինչպիսին էլ լինի տարբեր լեզվաբանների կողմից հարցի ուսումնասիրության հայեցակետը, ռուս լեզվաբանության մեջ պարզորոշ երևում է մի գիծ. սկսած Դ.Ն. Օվայանիկո-Կուլիկովսկուց⁴³ մինչև վերը թվարկած բոլոր լեզվաբանները հավելական կառույցներն առանձնացնում են որպես բառերի և նախադասությունների շարահյուսական կապի մի ինքնուրույն տեսակ:

Հավելական կառույցների ուսումնասիրության հարցի պատմությունն ավելի ընդարձակ շարադրված է Ս.Ե.

⁴³ Д.Н. Овсяннико-Куликовский, *Синтаксис русского языка*, Спб., 1912.

Կրյուչկովի⁴⁴, Ն.Ս. Վալգինայի⁴⁵, Լ.Գ. Խատիաշվիլու⁴⁶, Պ.Վ. Կոբզևի⁴⁷ և ուրիշ լեզվաբանների կողմից:

Լ.Գ. Խատիաշվիլին իր «Հավելական կառույցները ռուսաց լեզվում» գրքի մեջ հավելական կառույցների ուսումնասիրության օրինակներ է բերում նաև այլ լեզուներից: Այս ուղղությամբ ամենից առաջ պետք է նշել ուկրաինացի լեզվաբանների կատարած գործը:

Այսպես. բարդ համադասական նախադասության կազմում հանդես եկող հավելական կառույցների մասին է խոսվում Բ.Մ. Կուլիլի «Ժամանակակից ուկրաինական գրական լեզվի դասընթաց» գրքում⁴⁸:

Ն.Յա. Դնեպրովսկայան վերլուծում է ուկրաինական հեքիաթների հավելական կառույցները⁴⁹: Մ.Ու. Կարանսկու 1959 թվականին լույս տեսած հոդվածը նվիրված է

⁴⁴ С.Е. Крючков, *О присоединительных конструкциях в современном русском языке*, сб. «Вопросы синтаксиса современного русского языка», М., 1950.

⁴⁵ Н.С. Валгина, *Присоединительные конструкции в современном русском литературном языке*, М., 1964.

⁴⁶ Л.Г. Хатиашвили, *Присоединительные связи в русском языке*, Тбилиси, 1963.

⁴⁷ П.В. Кобзев, *Неполные предложения присоединительного типа в современном русском литературном языке* (автореферат канд. дисс.), Л, 1966.

⁴⁸ Б.М. Кулик, *Курс сучасної української літературної мови*, Київ, 1961.

⁴⁹ Н.Я. Днепровская, *Синтаксис союзного сложного предложения украинской народной сказки*, Харьков, 1955.

ուկրաիճական լեզվում հավելական կառույցների առանձնահատկությունների բացահայտմանը⁵⁰ .

Հավելական կառույցների ուսումնասիրությամբ զբաղվում են նաև արտասահմանյան երկրների մի շարք լեզվաբաններ:

Մլովակ գիտնական Վինցենտ Բլանարը իր հոդվածներից մեկում⁵¹ հավելական կառույցները քննում է երեք լեզուներից՝ բուլղարերենից, սլովակերենից և ռուսերենից առնված փաստերի համադրությամբ: Հավելական շաղկապների կիրառությունների մասին է խոսվում նաև չեխ գիտնական Յարոսլավ Բաուերի «Ռուսերենի շաղկապները չեխերենի համեմատությամբ»⁵² հոդվածում:

Բուդապեշտում լույս տեսած «Մամանակակից ռուս գրական լեզուն» գրքում⁵³ բավականաչափ տեղ է հատկացված այդ կառույցների քննությանը: Պրահայում հրատարակված ռուսական շարահյուսական տեքստերի ժողովածուի մեջ նույնպես քերականական մեկնություններ կան հավելական կառույցների վերաբերյալ⁵⁴:

Մի քանի լեզվաբաններ ուշադրություն են դարձրել նաև ուրիշ լեզուներում հավելական կառույցների առկայության

⁵⁰ М. У. Каранська, *Приєднувальний зв'язок у синтаксичній одиниці спілкування*, «Наукові записки Житомирського держ. інституту ім. Ів. Франка», Серія лінгвістична, т. XI, 1959.

⁵¹ Vincent Blapár, *Prizpakové a bezprizpakové pripájanie v stavbe vety*, сб. «Езиковедски изследования в чест на академик Стефан Младенов», Бълг. Акад. На науките, София, 1957.

⁵² Ярослав Бауэр, *Русские союзы в сопоставлении с чешскими*, sbornik praci filosofické fakulty Brněpské university, rada jazykovědna, A 5, ročník VI, Brno, 1957 (на русском языке).

⁵³ *Mai orosz nyelv*, II, Budapest, 1958 (текст дан на русском языке).

⁵⁴ *Svičné texty z ruské syntaxe*, Praha, 1959.

փաստի վրա: Օրինակ, Կ.Ի. Կիրիլենկոն «Լուի Արագոնի պոեզիայի կառույցների մասին» հոդվածում օրինակներով ցույց է տալիս, որ ֆրանսերենին նույնպես հատուկ է նախադասությունների կապակցման հավելյական ձևը⁵⁵:

Է.Ռ. Աթայանը իր հոդվածներից մեկում, վերլուծելով հին ֆրանսերենի անշաղկապ բարդ նախադասությունները, դիպուկ կերպով նկատում է, որ հին ֆրանսերենում ևս բավականաչափ տարածված են հավելյական կառույցները՝ հատկապես որոշչային և պարագայական կիրառություններով⁵⁶:

Այս տեսակետից հետաքրքրություն են ներկայացնում նաև Ե.Պ. Լիզինայի գործերը⁵⁷, որոնց մեջ անզլերենի նյութի հիման վրա քննության են առնվում որոշ շաղկապների (and և but) հավելյական նշանակությունները, ինչպես նաև հավելյական կառույցների ոճական ու շարահյուսական առանձնահատկությունները, դրանց կիրառությունները: Մակայն այդ լեզուների մասին գիտությունը դեռևս աչքի չի ընկնում հավելյական կառույցներին վերաբերող ուսումնասիրությունների առատությամբ:

⁵⁵ К.И Кириленко, *Про при днальні зв'язки в поезії Луї Арагона*, «Наукові записки Київського держ. Пед. інституту іноземних мов», т. I, 1957.

⁵⁶ Э.Р. Атаян, *Бессоюзные сложные предложения в старофранцузском языке* «Вопросы лексикологии и синтаксиса романо-германских языков», Е, 1963.

⁵⁷ Е.П. Лыгина, *К вопросу о присоединительных конструкциях и их стилистическом использовании в современном английском языке*, М., 1956; *Стилистическое использование союзов and и but в просоединительных конструкциях в современном английском языке*, М., 1952.

ՀԱՎԵԼԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՅՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հայտնի է, որ լեզվական միավորներն իրար են միանում երկու տիպի շարահյուսական հարաբերությամբ՝ համադասական և ստորադասական: Հավելական կառույցները, որպես շարահյուսական կապի տեսակ, արտահայտում են թե՛ համադասական, թե՛ ստորադասական հարաբերություն: Այս առումով էլ հավելական կառույցների բնորոշ առանձնահատկությունները քննելիս ամենից առաջ պետք է նշել ինչպես համադասություն դրսևորող մյուս տեսակներից, այնպես էլ ստորադասությունից ունեցած դրանց տարբերություններն ու բնութագրական հատկանիշները:

Համադասական հարաբերության մեջ կարող են լինել և՛ բառերը, և՛ նախադասությունները: Ուստի և առանձին-առանձին քննենք, թե հավելական կառույցներն ինչպես են համադասություն արտահայտում, ինչ առանձնահատկություններ են դրսևորում: Նախ՝ բառերի համադասության մասին: Սովորաբար համադաս բառերն իրար են միանում.

1. շարահարությամբ կամ պարզ թվարկումով: Այսպիսի դեպքերում բանավոր խոսքում նրանք միավորվում են թվարկման համապատասխան հնչերանգի միջոցով, իսկ գրավոր խոսքում նրանց միջև դրվում է ստորակետ (Գարունը, ամառը, աշունը, ձմեռը տարվա եղանակներն են):

2. Շաղկապներով (Արամն ու Աշոտը ընկերներ են):

3. Ե՛վ շարահարությամբ, և՛ շաղկապներով, ընդ որում, շաղկապով հիմնականում միանում է վերջին համադաս

բառը (Յավը, վիշտն ու հոգսը կեղեքում են հոգին), կամ թվարկվող երկանդամը (Օխելն ու իմելը, անքնությունն ու գերհոգնածությունը առողջության թշնամիներն են):

Ակնհայտ է, որ համադաս բառերը թե՛ իմաստային առումով, թե՛ քերականական դրսևորմամբ, թե՛ հնչերանգով հանդես են գալիս հաղորդակցական մեկ ամբողջական միավորի ներսում՝ որպես նախադասության բազմակի անդամներ:

Այլ է պատկերը հավելական կառույցի ժամանակ: Այսպես.

Այնտեղ էին հորեղբայրը, մեղվանոցը, տանձենին և արևածաղիկը:

Այնտեղ էին հորեղբայրը, մեղվանոցը, տանձենին: Եվ արևածաղիկը (37, 241):

Առաջին օրինակում գործ ունենք սովորական համադաս բառերի հետ, որոնք մեկ պարզ նախադասության ներսում իրար են կապվում որպես բազմակի անդամներ: Իսկ երկրորդ օրինակում համադաս բառերից մեկը հանդես չի գալիս նույն նախադասության ներսում, հաջորդում է տևական դադարից հետո, առանձնացված: Հենց այս առանձնացումն էլ այն գլխավոր հատկանիշն է, որով հավելական կառույցով դրսևորված համադասությունը տարբերվում է բառերի սովորական համադասությունից:

Կամ նա իմ ուրախությունն էր: Տխրությունը: Իմ հանգիստն ու անհանգստությունը: Եվ իմ սարսափը (60, 52): Ես կկոտրեմ ձեր դիմադրությունը: Եվ համառությունը (48, 6): Փոքր-ինչ հուսալքվելու դեպքում ձերուկը կգլորվեր պատից: Վախից: Յավից ու հոգնածությունից (11, 3, 1975):

Բերված օրինակներից պարզորեն երևում է, որ համադաս անդամների առանձնացվածության շնորհիվ վերջին-

ներս ստացել են հավելական երանգ՝ վերածվելով հավելական կառույցի:

Այս առանձնացումը պետք է դիտել հետևյալ կողմերից.

1. իմաստային առանձնացում (որն իմաստային նոր նրբերանգ է հաղորդում, սովորական համադաս բառերից մեկը մյուսի համեմատությամբ հանդես է գալիս որպես հավելում, ճշգրտում, լրացուցիչ հաղորդում):

2. քերականական-հնչերանգային առանձնացում (որը բնորոշվում է քերականական, արտասանական յուրահատկություններով. բանավոր խոսքում դա դրսևորվում է հավելվող մասի տևական դադարից հետո հաջորդման միջոցով, իսկ գրավոր խոսքում այն ձևավորվում է համապատասխան կետադրական նշանի, հիմնականում՝ վերջակետի օգնությամբ):

Մյուս էական տարբերությունը պայմանավորված է հավելական շաղկապի առկայությամբ. եթե համադաս անդամը հիմնական մասին է միանում հավելական շաղկապով, ուրեմն այն հավելվող մասն է: Ընդ որում, այն կարող է դրվել ստորակետից հետո՝ հանդես գալով հաղորդակցական մեկ ամբողջական միավորի ներսում.

Մայրը ներս մտավ, տղան էլ ներս մտավ (37, 256):

Հավելական շաղկապով միացած մասը կարող է դրվել նաև վերջակետից հետո, առանձնացված.

Մայրը մեղք էր: Եվ մոր կողքին Մարիամը մեղք էր: Եվ նրանց մոտ լուռ Արմենուհին մեղք էր: Եվ տանձենու դեմ ախպերիկը մեղք էր (37, 266):

Ճիշտ է, այս դեպքում դրանք կարող են ձեռք բերել ինքնուրույն նախադասության արժեք:

Ինչպես տեսնում ենք, հավելման կարգով դրսևորված համադասության և բառերի սովորական համադասության

տարբերությունը պայմանավորված է հետևյալ գլխավոր հատկանիշներով.

ա. իմաստային, հնչերանգային, քերականական առանձնացումով,

բ. հավելական շաղկապի առկայությամբ:

Այժմ դիտարկենք, թե նախադասությունների կամ բարդ նախադասության բաղադրիչների միջև ինչպես է դրսևորվում համադասությունը: Բնական է, որ քննության առարկան ամենից առաջ պետք է լինի բարդ համադասական նախադասությունը: Իսկ բարդ համադասական նախադասության բաղադրիչները միմյանց են միանում տարբեր հարաբերությամբ միավորական, ներհակակական, տրոհական և հավելական: Ինչ տեղ է գրավում հավելական կառույցը այս մյուս տեսակների շարքում, ինչ յուրահատկություններ է հանդես բերում:

Անկախ այն բանից՝ բարդ համադասական նախադասության բաղադրիչները միավորում են համասեռ երևույթներ (միավորական հարաբերություն), արտահայտում են հակադրություն (ներհակական հարաբերություն), թե այդ երևույթներից միայն մեկն է իրական, հնարավոր դիտվում (տրոհական հարաբերություն), բոլոր դեպքերում այդ բաղադրիչներն իրար նկատմամբ միանգամայն համագոր են, քերականական կախում չունեն միմյանցից: Իսկ հավելական կառույցի ժամանակ բաղադրիչների հարաբերությունը փոքր-ինչ այլ է. Իմ եղբայրն իմ տունն է եկել, և դա մեծ ուրախություն է մեզ համար (7, 36):

Այս դեպքում արդեն բաղադրիչների համագոր հարաբերությունը իմաստային առումով կարծես խախտվում է, նրանցից մեկը դառնում է հիմնական արտահայտություն (իմ եղբայրն իմ տունն է եկել), իսկ մյուսը դրա նկատմամբ համարվում է լրացուցիչ բացատրություն, իմաստային,

վերաբերմունքային հավելում (և դա մեծ ուրախություն է մեզ համար):

Այս երևույթն ավելի ցայտուն ձևով կարելի է դիտել նույն օրինակի վրա: Այսպես. 1. Ամպը գորգոռում է, կայծակը որոտում: 2. Ամպը գորգոռում է, իսկ կայծակը՝ որոտում: 3. Կամ ամպն է գորգոռում, կամ կայծակն է որոտում: 4. Ամպը գորգոռում է, նաև կայծակն է որոտում:

Բերված չորս նախադասություններում ընդհանուրն այն է, որ բոլորն էլ բարդ համադասական նախադասություններ են՝ իրենց համադաս բաղադրիչներով: Սակայն առաջին երեք նախադասություններում այդ համադաս բաղադրիչները միանգամայն համագոր են, քերականական կախման մեջ չեն իրարից, հավասար արժեք ունեն և ըստ միմյանց նկատմամբ դրսևորած հարաբերության առանձնանում են որպես միավորական, ներհակական, տրոհական նախադասություններ, իսկ վերջին օրինակում այդ համադաս բաղադրիչներից մեկն, այնուամենայնիվ, իմաստային տեսակետից համարվում է՝ առաջնային, հիմնական, իսկ մյուսը դրա նկատմամբ հանդես է գալիս որպես հավելում, լրացուցիչ ասված խոսք:

Իհարկե, հավելական կառույցը կարող է արտահայտել նաև համադասություն ցույց տվող մյուս տեսակներին հատուկ հարաբերություններ, այսինքն այն հավելական նշանակության հետ միասին կարող է ունենալ միավորականության, ներհակության ու տրոհության երկրորդական գաղափար: Դա կատարվում է կամ որևէ հավելական շաղկապի հաջորդական կրկնությամբ, կամ հավելական շաղկապի և այլ նշանակություն ունեցող շաղկապների (միավորիչ, ներհակական, տրոհական) համատեղ գործածությամբ, և ուղեկցվում է համապատասխան քերականական դրսևորմամբ. բանավոր խոսքում՝ առանձնացված

արտասանությամբ, տարբերվող հնչերանգով, գրավոր խոսքում՝ անհրաժեշտ կետադրական նշաններով: Օրինակներ.

Չկա որսկան Մանվելը: Եվ Թումասը չկա: Եվ նրա աղջիկը (26, 50): Մասիսն էր առաջին, խրոխտ ու սառն, բայց և ջերմացնող (57, 10): Իր զավակը Սահակի տարիքը պիտի ունենար, եթե այն գիշեր Սարիամը խենթանար: Եվ կամ կրկնվեր գիշերը (ԳԹ):

Օրինակներից երևում է, որ նախադասությունների կամ նրանց բաղադրիչների միջև դրսևորված հավելական հարաբերության կողքին կան նաև միավորության, ներհակության ու տրոհության տարրեր, և այդ տարբեր հարաբերությունների ներթափանցումներում երբեմն դժվար է լինում որոշել, թե որն է գլխավորը: Նման փաստերը վկայում են հավելական կառույցների կողմից բազմազան նշանակություններ դրսևորելու հատկության մասին:

Հավելական կառույցը կարող է արտահայտել նաև ստորադասական հարաբերություն՝ հանդես բերելով որոշակի առանձնահատկություններ: Որո՞նք են դրանք: Հավելական կառույցով ինչպե՞ս է դրսևորվում բառերի ստորադասությունը և այն ինչո՞վ է տարբերվում բառերի սովորական ստորադասությունից:

Հենց սկզբից նշենք, որ այս դեպքում էլ գլխավոր տարբերությունը կապակցության անդամներից մեկի, առանձնացումն է: Բառերի սովորական ստորադասության ժամանակ կապակցության անդամները (լրացում-լրացյալը) դրվում են կողք կողքի և միանում են անմիջականորեն, ինչպես պիոներական ճամբար, խոսել սիրո մասին և այլն, իսկ հավելական կառույցի դեպքում այդ անդամների միացումն անմիջականորեն չի դրսևորվում, գերադաս անդամը՝ լրացյալը, մնում է հիմնական արտահայտության

մեջ, իսկ նրա լրացումը (որոշիչ, խնդիր, պարագա) դրվում է տևական դադարից հետո՝ հանդես գալով որպես հավելում:

Այստեղ կառուցվելու է ճամբար: Պիոներական:

Ուզում եմ խոսել քեզ հետ: Միտք մասին:

Եթե գերադաս անդամն ունի մեկից ավելի լրացումներ, ապա կարող են առանձնացվել ինչպես բոլոր լրացումները, այնպես էլ դրանցից յուրաքանչյուրը: Օրինակներ:

Չատվում է հատկապես մի երեկո: Տաք, թանձր ու խորհրդավոր մի երեկո (56, 76): Պարում էին ավելի լավ, ճիշտ: Եվ կատաղի (46, 215): Նման կիրառությունները հիմնականում հատուկ են գեղարվեստական և խոսակցական ոճերին:

Նախադասությունների կամ նրանց բաղադրիչների միջև ստորադասություն ցույց տալիս հավելվող մասը հանդես է գալիս որպես երկրորդական նախադասություն՝ պահպանելով նաև իր բնորոշ գծերը: Այսպես, սովորական ստորադասության ժամանակ բաղադրիչների միջև ստորադասական հարաբերությունն արտահայտված է անմիջականորեն, այսինքն երկու առարկայական փաստերից կամ երևույթներից մեկը (երկրորդական նախադասություն) իր արտահայտած իմաստով անմիջականորեն ստորադասված է մյուսին (գլխավոր նախադասությանը), լրացնում է նրա միտքը և քերականորեն կախման մեջ է նրանից որպես վերջինիս քերականական լրացում: Այլ է բաղադրիչների հարաբերությունը, երբ երկրորդական նախադասությունն արտահայտված է հավելական միավորով: Այդ դեպքում էլ, իհարկե, բաղադրիչների միջև պահպանվում է քերականական լրացման ու լրացյալի հարաբերությունը, սակայն երկրորդական նախադասությունն իր բովանդակությամբ ոչ թե անմիջականորեն է ստորադասվում գլխավորին, այլ դառնում է հավելված ստորադասություն, լրացուցիչ բա-

ցատրություն, ձեռք է բերում կողմնակի հաղորդման նշանակություն: Այսպես.

Հանդիպեցին գյուղից դուրս, մատուռի մոտ, ուր որ պայմանավորվել էին հավաքվել (58, 3, 1974): Պետք է վերջնական համաձայնության գալ, որի համար էլ քեզ մոտ եմ եկել (48, 175):

Սակայն այսպիսի կիրառություններում հավելման հարաբերությունը համեմատաբար ցայտուն չի դրսևորվում, քան այն դեպքերում, երբ հավելվող մասն արտահայտվում է առանձնացված, կարծես ինքնուրույն դարձած երկրորդական նախադասության տեսքով:

Համոզված են: Միայն թե ապացույցներ են պետք (10, 94): Կգնայի: Թե շատ սիրելի: Թե խենթի պես սիրելի (46, 55):

Այս օրինակներում երկրորդական նախադասությունները հանդես են գալիս ինքնուրույն նախադասությունների տեսքով, որի շնորհիվ էլ դարձել են հավելական, ձեռք են բերել առավել ինքնուրույնություն, և քերականական կապվածությունն էլ գլխավորից համեմատաբար թույլ է:

Հավելական կառույցում հանդես եկող երկրորդական նախադասությունը մյուսներից տարբերվում է և իր շարադասությամբ: Այն բացառապես դրվում է հիմնական մասից հետո, մինչդեռ մյուսները կարող են դրվել թե՛ գլխավոր նախադասությունից առաջ, թե՛ նրանից հետո, թե՛ նրա ներսում: Բացի այդ, բոլոր երկրորդական նախադասությունները չէ, որ կարող են արտահայտվել հավելական կառույցով:

Ես կարծում եմ, որ պետք է գնալ:

Հայտնի է, որ Հայաստանը քարերի երկիր է:

Ընդգծված նախադասությունները չեն կարող լինել հավելական նախադասություն: Իսկ ո՞ր երկրորդական

նախադասություններն են օժտված հավելական կառույցի մաս դառնալու հատկությամբ: Այս հարցի որոշման համար բանալի կարող են ծառայել բարդ նախադասության քերականական բնույթի վերաբերյալ Ն.Ս. Պոսպելովի որոշ դիտարկումները: Այսպես, Ն.Ս. Պոսպելովը նշում է բարդ նախադասության զարգացման երկու ուղի:

Առաջին ուղին երկրորդական նախադասությունների առաջացումն է գլխավոր նախադասության ընդարձակված անդամներից. բայց երկրորդական նախադասությունները «չեն նույնանում երկրորդական անդամների հետ, այլ ստանում են իրենց հատուկ շարահյուսական գործառությունը»⁵⁸: Տվյալ դեպքում կունենանք միանդամ բարդ ստորադասական նախադասություն: Օրինակ.

«Դա այն գունդն էր, ուր ընկավ Սերյոժան» (Ֆադեև):

Բարդ ստորադասական նախադասության զարգացման մյուս ուղին երկու այնպիսի դատողությունների միացումն է, որոնք տալիս են «ոչ թե դատողության մեկ բարդ ձև, այլ երկու փոխկապակցված դատողություններ, որոնք արտահայտում են որակական անցումը պարզից բարդին, ստորինից բարձրագույնին»⁵⁹: Այս դեպքում էլ կունենանք երկանդամ բարդ ստորադասական նախադասություններ, ինչպես. «Եթե պապը գնում էր տանից, տատիկը խոհանոցում կազմակերպում էր հետաքրքիր հավաքներ» (Գորկի)⁶⁰:

Այնուհետև Պոսպելովը նշում է, որ երկանդամ համարվում են այնպիսի բարդ ստորադասական միավոր-

⁵⁸ Н.С. Поспелов, *О грамматической природе сложного предложения*, сб. «Вопросы синтаксиса современного русского языка», М., 1950, стр. 328.

⁵⁹ Ն.Ս. Պոսպելով, նշվ. աշխ., էջ 331:

⁶⁰ Օրինակները վերցված են Ն. Պոսպելովի հոդվածից:

ները, որոնց երկրորդական նախադասությունները մեծ մասամբ ցույց են տալիս պատճառ, պայման, հետևանք և այլն, այսինքն պարագայական երկրորդական նախադասություններ են: Իսկ միանդամ բարդ միավորներում դրանք լինում են հիմնականում որոշիչ, խնդիր երկրորդական նախադասություններ:

Հիմք ընդունելով այս բնութագրությունները՝ Լ.Գ. Խատիաշվիլին եզրակացնում է. «Հավելական կառույց կարող է դառնալ այնպիսի երկրորդական նախադասությունը, որը հանդիսանում է երկանդամ բարդ ստորադասական միավորի մաս»⁶¹:

Այս տեսակետը մենք ևս ընդունում ենք, սակայն մի փոքրիկ վերապահությամբ: Բոլորովին էլ սրանից չպետք է բխեցնել, թե հավելական կառույցով կարող են արտահայտվել միայն պարագայական երկրորդական նախադասությունները:

Ուրեմն, ի՞նչ բնորոշ գծեր են հատուկ հավելական կառույցներին: Ինչպես տեսանք, ընդհանրապես համադասության ժամանակ արտահայտության բաղադրիչ մասերը շարահյուսորեն, քերականորեն համագոր միավորներ են, իսկ ստորադասության ժամանակ այդ մասերի միջև կա քերականական լրացման ու լրացյալի հարաբերություն: Եվ եթե հավելական կառույցով արտահայտված համադասության ժամանակ կարծես խախտվում է բաղադրիչ մասերի այդ համագորությունը (նրանցից մեկը դառնում է առաջնային, հիմնական, իսկ մյուսը՝ իմաստային, վերաբերմունքային հավելում), ապա հավելական կառույցով դրսևորված ստորադասության ժամանակ տեղի է ունենում

⁶¹ Լ.Գ. Хатиашвили, *Присоединительные связи в русском языке*, Тбилиси, 1963, стр. 93.

հակառակը՝ կարծես խախտվում է քերականական լրացման-լրացյալի սերտ հարաբերությունը (թույլ է լինում քերականական կապը նրանց միջև, և հավելվող մասը համեմատաբար ինքնուրույն է դառնում):

Բացի այդ: Թե՛ համադասության, թե՛ ստորադասության ժամանակ հենց սկզբից առկա են արտահայտության երկու (կամ ավելի) բաղադրիչները, որոնք, նայած հանգամանքների կամ արտահայտած նշանակության, միանում են շարահյուսական կապի այս կամ այն տեսակով (համադասական կամ ստորադասական): Իսկ հավելական կառույցի դեպքում երկրորդ բաղադրիչը հենց սկզբից առկա չէ: Այսպես.

Միմոնյանը ժպտում է, և դա հարզանքի ժպիտ է՝ ուսուցչին ուղղված (3, 15): Ուռկանը լիքն է դուրս գալիս, և և էս շատ են ուրախանում (5, 82):

Բերված օրինակներից երևում է, որ հավելական կառույցների դեպքում երկրորդ բաղադրիչն առաջանում է խոսքի ընթացքում (նախորդ բաղադրիչի արտաբերության ժամանակ կամ նրա ավարտից անմիջապես հետո) և իր արտահայտած իմաստով էլ նախորդի համար դառնում է լրացուցիչ հաղորդում, գլխում ծագած հանկարծակի միտք, ասվածի ճշգրտում, բացատրություն:

Հավելական կառույցների մյուս կարևոր առանձնահատկությունը հիմնական արտահայտությունից նրանց ունեցած ընդհատվածությունն է: Դրանք դրվում են տևական դադարից հետո և առանձնացվում են թե՛ տրամաբանական շեշտով, թե՛ հնչերանգով: Հենց սրանով էլ պայմանավորված է հավելական կառույցների կառուցվածքային-արտասանական զուգահեռականության ինքնատիպությունը: Եթե ընդհանրապես համադասության և ստորադասության ժամանակ բաղադրիչների միջև կա կառուցվածքային

զուգահեռականություն, և անցումը մի բաղադրիչից մյուսին կատարվում է սահուն արտասանությամբ, ապա հավելական կառույցների ժամանակ այդ զուգահեռականությունը խախտվում է, և դրանց արտասանությունը նույն սահունությունը չունի, ընդհատված է, դադարով անջատված:

Գրավոր խոսքում այդ դադարի տևողությունը հաղորդվում է կետադրական տարբեր նշանների օգնությամբ (ստորակետ, վերջակետ, բազմակետ և այլն) և պայմանավորված է հիմնական ու հավելվող մասերի միջև եղած տրամաբանական կապի անհատական ընկալումով:

Դարձավ անգերագանցելի հեծյալ: Նաև ճանաչեց մարդկանց (24, 437): Աստված էս սաղ աշխարհն է, մենք էլ աստծու մեջ ենք... վատ մարդիկ էլ սատանաներն են (27, 16):

Հավելական կառույցների համար բնութագրական է նաև ինքնատիպ դիֆամեդեդիականությունը: Նշենք հետևյալ հիմնական հատկանիշները.

ա) հավելական կառույցից առաջ դիտվում է ձայնի տոնի, երանգի, բարձրության և խոսքի տեմպի փոփոխություն.

բ) դադարի առկայություն հիմնական մասի և հավելվող մասի միջև.

գ) հավելվող մասի արտասանությունը տարբերվող հնչերանգով:

Հավելական կառույցների հնչերանգային և ռիթմամեդեդիական առանձնահատկությունների մասին խոսվում է Լ.Վ. Շչերբայի, Ն.Վ. Չերեմիսինայի աշխատություններում: Այս առումով հարկ է նշել նաև Վ.Ֆ. Միլկի «Հավելման հնչերանգը ժամանակակից ռուսաց լեզվում» և «Հավելական կառույցների հնչերանգը անգլերենում և ռուսերենում» ուսումնասիրությունները, որոնցում, փորձական հետազո-

տությունների հիման վրա, հեղինակը նշում է հավելական կառուցվածքների հնչերանգային հետևյալ կողմերը.

«1. Հավելվող մասն առանձնանում է հիմնական տոնի բարձրության և շարժման փոփոխությամբ. այն կարող է տարբերվել ինչպես առաջին մասի համեմատությամբ ունեցած ավել կամ պակաս բարձրությամբ, այնպես էլ ուրիշ ռեգիստրով (տոնայնությամբ)՝ ավելի բարձր կամ ցածր:

2. Հավելվող մասը սովորաբար առանձնանում է արտահայտության առաջին մասի համեմատությամբ ունեցած մեծ կամ փոքր արդյունաստվությամբ:

3. Հավելվող մասը կարող է ընդգծվել դանդաղ կամ արագ արտասանությամբ:

4. Հավելվող մասը հաճախ էլ առանձնանում է իր հատուկ երանգով»⁶²:

Հավելական կառույցների առանձնահատկությունների մասին խոսելիս պետք է նշել նաև նրանց եղանակավորությունը: Այս քերականական կարգը տարբեր չափերով հատուկ է գրեթե յուրաքանչյուր արտահայտության: Խոսքի մեջ այն դրսևորվում է բառական, ձևաբանական, շարահյուսական, հնչերանգային և այլ միջոցներով: Հավելական կառույցների առանձնահատկությունները՝ հարուստ հնչերանգը, խոսքի տեմպի, ձայնի տոնի փոփոխությունը, լրացուցիչ հաղորդման, բացատրության, գնահատման, ճշգրտման նշանակությունները լայն հնարավորություն են տալիս եղանակավորության դրսևորման համար:

⁶² В.Ф. Мильк, *Интонация присоединения в современном русском языке*, «Ученые записки I Московского пед. института иностранных языков», т. XVIII, 1960, стр. 244.

Ընկերները հաճախ էին պարսավում նրան: Եվ իրավացիորեն (Ավ.):

Այս օրինակում պարզ երևում է խոսողի վերաբերմունքն իր հաղորդած փաստի, իրողության նկատմամբ, այն է՝ հաստատում և բավարարվածություն: Նկատվում է նաև հավելական կառույցների բնորոշ գծերից մեկը՝ բառերի դասավորության հատուկ կարգը (մասնավորապես և իրավացիորեն պարագայի գատվածությունը պարսավում էին ստորոգյալից): Այս կապակցությամբ տեղին է նշել, որ ինչքան էլ թե՛ համադասությունն ընդհանրապես, թե՛ ստորադասությունը, և թե՛ հավելական կառույցները շարահյուսական, քերականական կարգի կապի տեսակներ են, այնուամենայնիվ պետք է շեշտել վերջիններիս իմաստային կողմը, այսինքն, որ սրանք իմաստային-քերականական կապի տեսակ են:

Հավելական կառույցների եղանակավորությունը միշտ չէ, որ կարող է ցայտունորեն ընդգծվել, երևալ: Այսպես.

Նրան օգնություն է անհրաժեշտ: Անհապաղ:

Այս օրինակում տեքստից դուրս և առանց խոսակցական հնչերանգի դժվար է որոշել, թե ինչպիսին է խոսողի վերաբերմունքը. հաստատական-հավանական է, հեզնական-ժխտական է, թե՛ բոլորովին այլ վերաբերմունք է դրսևորված: Եղանակավորությունը հատկապես ուժեղ է արտահայտվում շաղկապավոր հավելական կառույցների ժամանակ: Այս նկատի ունի Վ. Վինոգրադովը, երբ նշում է, որ շաղկապի անհամեմատ լայն շարահյուսական գործածության հնարավորությունը ապահովվում է եղանակավորության անսահմանափակության, տրամաբանական և հուզական նշանակությունների զուգակցման ազատության

շնորհիվ⁶³: Հենց այս հանգամանքն է, որ նպաստում է համադասական և ստորադասական շաղկապների գործածությանը հավելական նշանակությամբ ամենատարբեր երանգներով ու գործառությամբ (այս կառույցների եղանակավորության այլ նրբությունների մասին կխոսվի ըստ հաղորդակցական տեսակների դասակարգման ժամանակ):

Հավելական կառույցները սահմանազատվում են նաև բնույթով իրենց համանման շարահյուսական այնպիսի միավորներից, ինչպիսիք են միջանկյալ նախադասություններն ու բառերը, նախադասության բազմակի անդամները, թերի նախադասությունը: Մի քանի խոսք այդ մասին:

Հավելական կառույցները, ինչպես և հիմնական արտահայտության մեջ ընկած միջանկյալ կապակցությունները, ունեն լրացուցիչ հաղորդման նշանակություն և հիմնական մասից բաժանված են դադարով: Հենց այս ընդհանրությունն էլ երբեմն պատճառ է դառնում դրանց համընկնմանը, նույնացմանը:

Մակայն, եթե միջանկյալ կապակցությունները քերականորեն ուղղակի կապված չեն այն նախադասության անդամների հետ, որի կազմի մեջ մտնում են, ապա հավելվող մասերը ավելի սերտ են միացած հիմնական մասին և քերականորեն մեկ ընդհանրություն են կազմում նրա հետ: Այս բանն իր արտահայտությունն է ստանում համապատասխան կետադրական նշանների միջոցով. Ստորակետ-գիծ, փակագծեր, ստորակետ (միջանկյալ կապակցություններում) և հիմնականում ստորակետ (հավելական կառույցների ժամանակ):

⁶³ В.В. Виноградов, *Русский язык*, М., 1947, стр. 712.

Բացի այդ, հավելվող մասերը դրվում են միայն հիմնական մասից հետո, մինչդեռ միջանկյալ կապակցությունները կարող են դրվել նախադասության և՛ սկզբում, և՛ վերջում, և՛ նրա մեջ:

Թերևս ասենք նաև, որ հետադաս միջանկյալ կապակցությունը գրեթե միշտ ունենում է հավելական կառույցի արժեք: Այսպես.

Հեռվում, այսինքն գետից այն կողմ, իսկ գետն այստեղ հազիվ երեսուն-քառասուն մետր էր, նույն ավերակներն էին (46, 216):

Բերված օրինակում միջանկյալ կապակցությունը հավելական բնույթ կատանա, եթե այն դրվի հիմնական մասից հետո, նախադասության վերջում:

Հմմտ. Հեռվում, այսինքն գետից այն կողմ, նույն ավերակներն էին, իսկ գետն այստեղ հազիվ երեսուն-քառասուն մետր էր:

Իրենց իմաստային և քերականական ինքնուրույնությամբ երբեմն հավելական կառույցներին մերձենում են նաև նախադասության բազմակի անդամները, բայց եթե դրանք բնութագրվում են հիմնական արտահայտության ներսում հնչերանգային առանձնացումով, ապա հավելական կառույցները բնութագրվում են հիմնական և հավելվող մասերի միջև եղած ընդհատվածությամբ: Վերջիններս արտասանվում են տևական դադարից հետո, որը նրանց հաղորդում է իմաստային և քերականական ավելի մեծ ինքնուրույնություն: Գրավոր խոսքում բազմակի անդամներն իրարից անջատվում են ստորակետով, իսկ դրանցով դրսևորված հավելական միավորները հիմնականում հաջորդում են միայն վերջակետից հետո: Ինչպես.

Հողից հանեց քարերը: Վանքեր շինեց: Բերդեր: Տներ ու կամուրջներ: Ավաղ, նաև գերեզմաններ (46, 109):

Այսպիսի կիրառությունները խոսքին տալիս են մեծ հուզականություն, հանդիսավորություն, իմաստային սաստկացում:

Հաճախ նկատվում է նաև թերի նախադասությունների ու հավելական կառույցների համընկնում: Այսպես.

Խմեցին բոլորը: Նաև ջահելները: Աղջիկներն էլ (46, 215):

Տվյալ դեպքում ընդգծված մասերը թերի նախադասություններ են, որովհետև լրիվ չեն արտահայտված դրանց անդամները, բայց և միաժամանակ հավելվող մասեր են, քանի որ հիմնական մտքի նկատմամբ հանդես են գալիս որպես լրացուցիչ հավելում: Մակայն այսպիսի համընկնումը դրանց նույնացման պատճառ չպետք է դառնա: Դրանք շարահյուսական միանգամայն տարբեր երևույթներ են իրենց բնորոշ գծերով ու առանձնահատկություններով: Ճիշտ է, թերի նախադասությունն էլ վերականգնվում է ի հաշիվ նախորդ արտահայտության, բայց միշտ չէ, որ նա կարող է ունենալ հավելման, լրացման այն նշանակությունը, ինչ ունի հավելական կառույցը: Ուղղակի, հարցն այն է, որ թերի նախադասությունը գործառությամբ հաճախ հանդես է գալիս որպես հավելում, լրացուցիչ ասված միտք, բացատրություն՝ դառնալով հավելական կառույց, կամ հակառակը՝ չի արտահայտվում, պակասում է հավելվող մասի որևէ անդամը, այսինքն վերջինս դրսևորվում է որպես թերի նախադասություն: Այնպես որ, եթե հավելական միավորը կառուցվածքային որևէ հատկանիշով կարող է համընկնել թերի նախադասությանը (ոչ լրիվ անդամների առկայություն), ապա կարող է պահպանել նաև իր իմաստային-բերականական գլխավոր հատկանիշը՝ հավելում արտահայտելը:

Անհրաժեշտ ենք համարում մի քանի խոսք ասել նաև հավելական կառույցների և նախադասության մասնատման (парцелляция) փոխհարաբերությունների մասին:

Նախադասության մասնատումն իր այժմյան ըմբռնումով հայ քերականագիտության մեջ գրեթե քննության չի առնվել: Ռուս լեզվաբանության մեջ էլ դրա ուսումնասիրությունը երկար պատմություն չունի: Մինչև «парцелляция» (մասնատում) տերմինի առաջանալը նախադասության մասնատման դեպքերը քննվում էին հավելական կառույցների հետ միասնաբար: Այժմ այն արդեն գոյություն ունի և գործածվում է հավելում տերմինի հետ զուգահեռաբար: Դրանց փոխհարաբերությունների վերաբերյալ ռուս լեզվաբանության մեջ նկատվում է երկու հիմնական մոտեցում:

1. Մի խումբ լեզվաբաններ հավելումն ու մասնատումը դիտարկում են որպես նույնատիպ, նույնական երևույթներ:

2. Մի խումբ լեզվաբաններ էլ առանձնացնում են դրանք համարելով տարբեր երևույթներ:

Այս երկրորդ տեսակետը առաջ է քաշված Ա.Պ. Սկովորոդնիկովի⁶⁴, Վ.Ա. Բելոշապկովայի⁶⁵, Վ.Կ. Պոկուսաենկովի⁶⁶, Ե.Բ. Թոպուրիձեի⁶⁷ և ուրիշների կողմից:

⁶⁴ А.П. Сковородников, *О соотношении понятий "парцелляция" и "присоединение"*, "Вопросы языкознания", № 1, 1978. О классификации парцеллированных предложений в современном русском литературном языке, "Филологические науки", № 2, 1978.

⁶⁵ В.А. Белошапкова, *Сложное предложение в современном русском языке*, М., 1967.

⁶⁶ В.К. Покусаенко, *К вопросу о парцелляции сложных бессоюзных предложений*, Ростов-на-Дону, 1973.

⁶⁷ Е.Б. Топуридзе, *К вопросу о разграничении явлений присоединения и парцелляции в русском языке*, "Актуальные вопросы

Ա.Պ. Սկովորոդնիկովն, օրինակ, իր հոդվածներից մեկում, նշում է հավելման և մասնատման մի շարք տարբերություններ: Մեջբերենք դրանցից մի քանիսը.

«1. Հավելումը սկզբունքորեն նախադասության կայունական (ստատիկ) հայեցակետի երևույթ է: Դա քերականական կարգ է, որ ունի ինքնուրույն քերականական նշանակություն (լրացուցիչ հաղորդման նշանակություն) և ինքնուրույն քերականական ձև (արտահայտվում է հատուկ շաղկապներով, շաղկապական միացություններով և ձևական այլ միջոցներով): Դրա հետ մեկտեղ այն ունի դաշտային կառուցվածք, որի մեջ առանձնացվում են կենտրոնական (հիմնական) և լրացուցիչ (պերիֆերիկ) գոտիներ:

2. Մասնատումը նախադասության շարժնթացային (դինամիկ) հայեցակետի երևույթ է: Դա ոճական հնարք է, արտահայտության մասնատում՝ ինքնուրույն արտահայտության ձևով և նախադասության նման կառուցված, կամ որ նույնն է՝ հուզական նպատակներով նախադասության հանդես գալը երկու կամ մի քանի հնչադասությունների (ֆրազների) ձևով: Մասնատումը կարող է դրսևորվել պարզ և բարդ նախադասությունների տարբեր տիպերում, այդ թվում և այն նախադասություններում, որոնք արտահայտում են հավելական հարաբերություն:

3. Կենտրոնական գոտում հավելումն ու մասնատումը միշտ ձևականորեն տարբեր են, նույնիսկ այն ժամանակ, երբ հանդես են գալիս նույն արտահայտության մեջ: Լրացուցիչ գոտում դրանք գտնվում են ձևով իրարից չտարբերվող դիրքերում: Նման դեպքերում դրանց առանձնացման համար

теории исторического и современного синтаксиса русского языка”, Барнаул, 1967.

անհրաժեշտ է իրադրահենքային (կոնտեքստային) իմաստային վերլուծություն»⁶⁸:

Մասնատման առանձնահատկությունների և նրա տարբեր տեսակների քննությանն ու դասակարգման հարցերին են նվիրված նաև Յու.Վ. Վաննիկովի⁶⁹, Ե.Ա. Իվանչիկովայի⁷⁰, Մ.Ա. Ավլասեիչի⁷¹, Գ.Ն. Ռիբակովայի⁷² և ուրիշ լեզվաբանների մի շարք աշխատություններ:

Սակայն, ինչքան էլ համոզիչ լինեն հավելումն ու մասնատումն առանձնացնող լեզվաբանների փաստարկումները, ռուս լեզվաբանության մեջ դրանց վերաբերյալ դեռևս միասնական տեսակետ չկա: Նույնիսկ դրանց նույնությունը ժխտող մի քանի լեզվաբաններ մասնատումը համարում են հավելական հարաբերության մասնավոր դրսևորում⁷³:

⁶⁸ А.П. Сковородников, *О соотношении понятий "парцелляция" и "присоединение"*, "Вопросы языкознания", № 1, 1978, стр. 128.

⁶⁹ Ю.В. Ванников, *Синтаксические особенности русской речи (явление парцелляции)*, М., 1969. Явление парцелляции в современном русском языке, М., 1965.

⁷⁰ Е.А. Иванчикова, *Парцелляция, ее коммуникативно-экспрессивные и синтаксические функции*, "Морфология и синтаксис современного русского литературного языка", М., 1968.

⁷¹ М.А. Авласевич, *О парцелляции в современном русском литературном языке*, «Вестник Белорусского университета», № 1, 1973.

⁷² Г.Н. Рыбакова, *Парцелляция сложноподчиненного предложения в современном русском языке*, М., 1965.

⁷³ Ж.Е. Петрашевская, *К вопросу о парцелляции как приеме экспрессивного синтаксиса*, «Проблемы грамматики и стилистики английского языка», М., 1973. В.Н. Стрельцов, *О природе парцелляции*, «Уч. зап. МОПИ им. Н.К. Крупской», 249, вып. 25, 1972.

Ահա, հաշվի առնելով դրանց վերաբերյալ միասնական տեսակետի բացակայությունը, ինչպես նաև մեր ձեռքի տակ եղած նյութերը, մենք հավելումն ու մասնատումը քննում ենք միասնաբար՝ վերջինս դիտարկելով որպես հավելական հարաբերության դրսևորման տեսակ: Բայց դա դեռ չի նշանակում, թե մենք բացարձակապես նույնացնում ենք այդ երկու քերականական հասկացությունները կամ մեքենաբար ընդունում ենք արդեն պատրաստի տեսակետերից մեկը: Մենք, այդպես վարվելով, առաջնորդվում ենք հետևյալ էական դրույթներով.

ա) խոսքի սերման բուն գործընթացի համար մենք հակված չենք ընդունելի համարելու «մասնատում» տերմինը: Դա նշանակում է, թե մենք խոսելիս նախ ամբողջությամբ, բոլոր հնարավոր բաղադրիչների առկայությամբ ձևավորում ենք հաղորդակցական միավորը, ապա սկսում ենք այն մասնատել և նոր միայն հաղորդակցվել: Մինչդեռ սովորաբար այդպես չէ. հաղորդակցվելիս մենք ասում ենք մի միտք, ապա միայն ասվածի կապակցությամբ կարող ենք հավելել որևէ նոր մանրամասն, գլխում ծագած որևէ նոր միտք, հանկարծակի հիշված որևէ իրողություն և այլն:

բ) Մասնատումը առավելապես գրավոր խոսքին, և հատկապես գեղարվեստական խոսքին հատուկ երևույթ է որպես ոճական յուրատեսակ հնարք, երբ կա ընտրության, հաղորդակցական միավորի ամբողջական ձևավորման, ապա դրա մեկ կամ մի քանի անդամների մասնատման հնարավորություն: Բայց այս դեպքում էլ, մեր կարծիքով, այդ մասնատման երևույթի ամբողջությամբ ձևավորվելու գործում վճռական դեր է կատարում այդ մասնատված անդամի հավելումը, այսինքն տեղի է ունենում մասնատում, ապա կրկին հավելում՝ կամ այդ մասնատված անդամի իմաստը, նշանակությունը շեշտելու, սաստկացնելու, կամ էլ

լրացուցիչ տեղեկություն, լրացուցիչ իրողություն դիտարկելու նպատակադրումով:

Տարակարծություններ կան նաև հավելական կառույցների ծավալի որոշման հարցում, այսինքն՝ ամբողջ հաղորդակցական միավորի (նախադասություն, շարահյուսական բարդ, ամբողջական միավոր) ո՞ր մասը համարել հավելական կառույց: Մի խումբ լեզվաբաններ հավելական են համարում հենց այն մասը, որը միանում է հիմնական բաղադրիչին որպես հավելում, իսկ մյուսներն էլ ամբողջ արտահայտությունն են դիտում որպես այդպիսին:

Հարցն այն է, որ հավելական հարաբերությամբ կարող են կապվել ոչ միայն նախադասության անդամները, այլև նախադասությունները, պարբերությունները, նույնիսկ խոսքի առանձին հատվածները: Անկախ դրանից՝ նրանք ներառում են երկու պարտադիր բաղկացուցիչներ՝ հիմնական մաս (արտահայտություն) և հավելվող մաս: Ուստի և հավելական կառույցը այդ երկու մասերի միացյալ ամբողջությունն է:

Տարբեր են կարծիքները նաև այն հարցում, թե երբ է առաջանում հավելվող մասը խոսքից առա՞ջ, խոսքից հետո՞, թե՞ խոսքի ընթացքում: Ճիշտ և ընդունելի պետք է համարել այն տեսակետը, ըստ որի հավելվող մասն առաջանում է նախորդ արտահայտության արտաբերության ընթացքում կամ նրա ավարտից անմիջապես հետո:

Ասվածից չպիտի բխեցնել, թե այն չի կարող բովանդակել կարևոր, էական հաղորդում:

Իհարկե, բանավոր խոսքում հավելվող մասը միշտ էլ առաջանում է խոսքի ընթացքում կամ նրանից հետո և այն արտասանության հենց սկզբից նկատի առնված չէ: Մակայն գրական-գեղարվեստական, գիտական գրավոր լեզվում երբեմն դրանք բովանդակում են ամենակարևոր, ամենաէական, ամենահիմնական միտքը, այն ամենը, ինչ հեղինակն

ուզում է ընդգծել, շեշտել, առանձնացնել: Նման դեպքերում է, որ հավելական կառույցները կարծես «կանխամտածված» են, այսինքն գիտակցության մեջ կան արտահայտության հենց սկզբից, այլ ոչ թե առաջանում են խոսքի ընթացքում կամ նրանից հետո: Դրա ցայտուն օրինակ կարող են ծառայել ուչ միայն-այլև շաղկապով միացած կապակցությունները:

Մակայն հավելվող մասն ինչպիսի կարևոր միտք էլ բովանդակի, ինչպիսի «կանխամտածվածություն» էլ ունենա և, թեկուզ, գիտակցության մեջ էլ հիմնական արտահայտության հետ նույն մակարդակին լինի, միևնույնն է, նրա քերականական-կառուցվածքային դրսևորումը այնպիսին է, որ հավելվող մասը հիմնական արտահայտության հետ չի մնում իմաստային նույն մակարդակի վրա:

Իսկ այժմ, ելնելով հավելական կառույցների էական հատկանիշներից և շարահյուսական մի շարք համանման միավորների հետ նրանց համեմատության արդյունքներից, փորձենք տալ հավելական կառույցների սահմանումը:

Ասենք, որ սահմանումն էլ բավականաչափ շատ են ու տարաբնույթ: Օրինակ, Վ.Վ. Վինոգրադովը գրում է. «Հավելական կարելի է անվանել այն կառույցները, որոնց բաղադրիչները տեղակայված չեն իմաստային մեկ հարթության վրա, տրամաբանորեն չեն միավորվում ամբողջականության մեջ, չնայած բարդ պատկերացմանը, բայց կազմում են հաջորդական հավելումների շղթա, որոնց իմաստային հարաբերությունը նախատեսվում (կոահիվում) է ոչ թե շաղկապներից, այլ եզրակացվում է ակնարկներից, հասկացություններից կամ առարկայական նշանակությունների հակադրությունից»⁷⁴:

⁷⁴ В.В. Виноградов, *Стиль «Пиковой дамы»*, էջ 140:

Ահա և Մ.Վ. Կարպենկոյի սահմանումը. «Հավելական կառույցի տակ, մեր կարծիքով, պետք է հասկանալ հատուկ հնչերանգով (կենդանի խոսակցական լեզվի հնչերանգն արտացոլող) երկու կամ մի քանի մասերից բաղկացած շարահյուսական կառուցվածքները. ընդ որում, դրանցից առաջին մասը (հիմնականը) քերականորեն և իմաստային տեսակետից անկախ է, իսկ հաջորդներն անմիջականորեն հարում են առաջինին, քերականական կախում ունեն նրանից, իսկ իմաստով ներկայացնում են առաջին հայացքից չպատճառաբանված լրացում, ճշգրտում, բացատրություն և պարզաբանում՝ կառուցվածքի հիմնական մասի համեմատությամբ»⁷⁵:

Ս.Գ. Աբրահամյանը բարդ նախադասության բաղադրիչների միջև հավելական է կոչում այն հարաբերությունը, որի դեպքում «նախադասության հիմնական մասին ավելանում է մի բաղադրիչ նախադասություն, որը իմաստային ու կառուցվածքային տեսակետից հիմնական մասի հետ չի ձուլվում, չի գտնվում նույն մակարդակի վրա, այլ մի տեսակ հավելում է նախորդ՝ հիմնական մասի վրա»⁷⁶:

Թերևս անհրաժեշտություն չկա ավելացնելու մեջբերումների թիվը, որովհետև դրանք շատ են ու բազմազան, և դրանցից ամեն մեկը յուրովի բովանդակում ու արտացոլում է հավելական կառույցների հիմնական օրինաչափություններն ու բնորոշ գծերը: Բայց գրեթե բոլոր սահմանումներում էլ նկատվում է այն ընդհանրությունը, որ հավելվող (հաջորդող) մասերը հանդես են գալիս որպես լրացուցիչ հաղորդում,

⁷⁵ М.В. Карпенко, *Присоединительные конструкции в современном русском языке*, Черновцы, 1961, էջ 140:

⁷⁶ Ս.Գ. Աբրահամյան, Վ.Դ. Առաքելյան, Վ.Ա. Քոսյան, *Հայոց լեզու*, Երկրորդ մաս, Ե, 1975, էջ 345:

ճշգրտում, բացատրություն՝ առնված հիմնական մտքի համեմատությամբ:

Ի նկատի ունենալով եղած սահմանումները, ինչպես նաև հավելական կառույցների էությունն ու հիմնական առանձնահատկությունները, մենք հավելական ենք համարում այն կառույցները, որոնցում հավելվող մասը, միանալով արտահայտության հիմնական մասին, բովանդակում է լրացուցիչ հաղորդում, ճշգրտում, բացատրություն, եզրակացություն, գնահատություն՝ հանդես գալով որպես իմաստային կամ վերաբերմունքային հավելում, առանձնացվում է տևական դադարով ու հատուկ հնչեքանգով և սովորաբար առաջանում է հիմնական մասի արտաբերության ընթացքում կամ նրա ավարտից անմիջապես հետո:

Ի մի բերելով ասվածը՝ հավելական կառույցների համար կարող ենք նշել հետևյալ հիմնական առանձնահատկությունները.

1. Հավելական կառույցները բնութագրվում են նախ իրենց իմաստային կողմով. դա այն է, որ հիմնական մասի հետ իմաստային մեկ մակարդակի վրա չգտնվելով միանում են նրան որպես լրացուցիչ հաղորդում, բացատրություն, ճշգրտում, իմաստային ու վերաբերմունքային հավելում:

2. Կառուցվածքային առումով դրանք միշտ երկմաս են՝ ա) հիմնական մաս (արտահայտություն) և բ) հավելվող մաս՝ անկախ հաղորդակցական միավորի կազմում ընդգրկված բաղադրիչների քանակից:

3. Հիմնական մասի և հավելվողի միացումն իրականացվում է տևական դադարից հետո, առանձնացումով:

4. Հենց այս գլխավոր առանձնահատկություններով էլ պայմանավորված են հավելական կառույցների մյուս կարևոր հատկանիշները՝ կառուցվածքային-արտասանական

զուգահեռականության ինքնատիպությունը, բառերի դասավորության յուրահատուկ կարգը, ռիթմամեղեդիական և հնչերանգային համապատասխան դրսևորումը, եղանակավորության բազմազանությունը, ոչ միայն բուն հավելական, այլև համադասական և ստորադասական որոշ շաղկապների կիրառությունը հավելական երանգով, դրանց կողմից ինչպես լրացուցիչ, այնպես էլ էական, կարևոր հաղորդում կատարելու հնարավորությունը, իմաստային տեսակետից հիմնական մասի արտասանության ընթացքում կամ նրա ավարտից անմիջապես հետո առաջանալը, շարահյուսական տեսակետից միշտ հիմնական մասից հետո դրվելը և այլն:

Իհարկե, նշված հատկանիշները չեն կարող սպառիչ լինել, բայց բավական են ընդհանուր գծերով հավելական կառույցները բնութագրելու համար:

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ՀԱՎԵԼԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Հավելական կառույցներն առանձնանում են իրենց իմաստային, կառուցվածքային, քերականական հատկանիշներով, գործառությամբ, և դրանց դասակարգման համար խիստ կարևոր է այդ տարբեր հատկանիշների, դրանց փոխկապակցվածության ու միասնության հաշվառումը, սկզբունքի ճիշտ ընտրությունը:

Հայ լեզվաբանության մեջ հավելական կառույցների համակարգված և հանգամանակից դասակարգում չի կատարվել:

Ռուս լեզվաբանությունը այս տեսակետից բավականաչափ նյութեր է կուտակել և հարուստ փորձ ունի: Վ.Վ. Վինոգրադովը, Ա.Ն. Գվոզդևը, Մ.Վ. Կարաչենկոն, Ս.Ե. Կրյուչկովը, Ս.Պ. Վելիչուկը, Գ.Օ. Վինոկուրը, Ն.Ս. Վալգինան և շատ ուրիշ լեզվաբաններ (նրանց ուսումնասիրությունները նշված են շարադրանքի տողատակերում և մատենագիտական ցանկում) զբաղվել են հավելական կառույցների դասակարգման հարցերով, դրանց տարբեր սկզբունքների ու տեսակների քննությամբ: Եվ ինչքան էլ տարատեսակ լինեն այդ դասակարգումները, այնուամենայնիվ միավորվում են որոշ ընդհանուր, էական հատկանիշների շուրջը, ինչպիսիք են հիմնական մտքին միանալու միջոցները, շարահյուսական, կառուցվածքային յուրահատկությունները:

Ելնելով եղած դասակարգումներից, ինչպես նաև մեր սեփական դիտարկումներից, հավելական կառույցների

դասակարգման համար հիմք են ընտրում հետևյալ կարևոր հատկանիշները.

ա) կառուցվածքը,

բ) հիմնական մտքին միանալու միջոցը,

գ) հավելվող մասի կատարած շարահյուսական պաշտոնը,

դ) արտահայտած իմաստն ու դրսևորած շարահյուսական հարաբերությունը,

ե) հաղորդակցական տեսակն ու եղանակավորությունը:

Ա. ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ ԸՍՏ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ

Ամենից առաջ աչքի է ընկնում հավելական հարաբերությունն արտահայտող միավորների կառուցվածքային բազմազանությունը, և նրանց կառուցվածքային այս տարբեր տեսակների դասակարգման ժամանակ պետք է նկատի ունենալ թե՛ այն ընդհանուր կառուցվածքը, որում դրսևորվել է հավելական հարաբերությունը, թե՛ հենց հավելական միավորի կառուցվածքը:

Ըստ այն հատկանշի, թե ինչ ընդհանուր կառուցվածքում, ինչ կազմությամբ է արտահայտված հավելական կառույցը, առանձնանում են երկու տարբեր խմբեր.

1. մեկ նախադասության ներսում, նրա սահմաններում հանդես եկող հավելումներ:

2. Ինքնուրույն նախադասությունների, խոսքի առանձին հատվածների կամ մասերի միջև հանդես եկող հավելումներ:

Նախադասության ներսում հանդես եկող հավելումները մի դեպքում կարող են իրար միացնել նախադասության անդամները, այսինքն գործածվել նույն նախադասության սահմաններում, մյուս դեպքում՝ իրար միացնել բարդ նախադասության բաղադրիչները, այսինքն՝ գործածվել բարդ նախադասության սահմաններում:

Նախադասության ներսում հավելական հարաբերությունը դրսևորվում է հավելական շաղկապների օգնությամբ, որոնց միջոցով նախադասության անդամներից որևէ մեկը կապվում է ընդհանուր շղթային որպես հավելում.

Մենք նորից սկսեցինք պարել, այն էլ լրջորեն (40, 67): Տղան աչքի ընկավ իր վարժ ընթերցումով, ինչպես նաև դուրեկան ձայնով (57, 4):

Երբեմն նախադասության անդամներից որևէ մեկը հանդես է գալիս տևական դադարից (գրավոր խոսքում միջակետից կամ վերջակետից) հետո, առանձնացված, որպես լրացուցիչ հաղորդում: Այն ձևականորեն ինքնուրույն նախադասության տեսք է ստանում նմանվելով թերի նախադասությանը, բայց առանց հիմնական մասի անհասկանալի է լինում նրա իմաստը: Օրինակներ.

Երգեց: Վատ և տհաճ ձայնով: Սկզբից մինչև վերջ (19, 295): Նա մեծ էր ինձանից: 13 տարով (24, 30): Հմմտ. նա 13 տարով մեծ էր ինձանից:

Բարդ նախադասության սահմաններում հավելական հարաբերությունը կարող է հանդես գալ թե՛ բարդ համադասական, թե՛ բարդ ստորադասական կառուցվածքներում:

Բարդ համադասական նախադասության բաղադրիչներն իրար հետ կապվում են տարբեր հարաբերություններով, որոնցից մեկն էլ հենց հավելական հարաբերությունն է: Այս դեպքում էլ, իհարկե, մեծ դեր են կատարում հավելական շաղկապները: Ինչպես.

Անկարող էր եղբորն ասելու ճշմարտությունը, և դա գայրացնում էր նրան (40, 17): Ոչ միայն գոհ է նրա խելքից ու առաքինությունից, այլև առանց որդու խորհրդի ոչինչ չի անում (7, 40):

Հավելական հարաբերությունը երբեմն զուգորդվում է նաև բարդ համադասական նախադասության բաղադրիչների միջև դրսևորվող այլ հարաբերությունների հետ: Այսպես, մի դեպքում հավելական իմաստը կարող է ունենալ միավորիչ նշանակություն.

Ճաշից մի-մի կտոր ուտելիք պահեցին, ինքն էլ պահեց (ԳԹ):

Մի այլ դեպքում հավելական իմաստին կարող է զուգակցվել ներհակական նշանակությունը.

Նա հեշտությամբ չի վաստակում իր մի կտոր հացը, սակայն և առույգ է, ուրախ (50, 341): Նրա խորաթափանց միտքը հասկանում էր այդ, բայց նաև չէր ուզում ենթարկվել (62, 491):

Պատահում է, որ հավելյալան հարաբերությունը ունենում է նաև տրոհական նշանակություն.

Մարերում կլինի, թաքստոցներում, կամ միացել է ուրիշի խմբերի, և կամ ի՞նչ իմանաս, փախստական մարդ է (11, 11, 75):

Բարդ ստորադասական նախադասության ներսում նույնպես կարող է հանդես գալ հավելյալան հարաբերությունը իմաստային, խնդրային և պարագայական տարբեր կիրառություններով: Օրինակներ.

Եկավ ուշ երեկոյան, եբբ որ խոստացել էր զալ (ՀԶ): Այլևս չի պարտադրում իր ընկերակցությունը, որից անչափ ուրախ եմ (61, 72):

Հավելյալան հարաբերությունը կարող է դրսևորվել ոչ միայն մեկ նախադասության ներսում լինի պարզ, թե բարդ: Ինչպես արդեն ասվել է, հավելյալան հարաբերությամբ կապվում են նաև առանձին, ինքնուրույն նախադասություններ: Ընդ որում, կարող են միանալ պարզ նախադասությունները.

Միտքը խառնում էր: Կծկումներն էլ ավելի սաստկացան (56, 137): Մայրը միայն իր որդուն էր սիրում: Եվ դա ինչպիսի դաժան սեր էր (50, 509): Գեղեցիկ վայր է: Նաև աղբյուրներ շատ կան (24, 492):

Մովորաբար այսպիսի դեպքերում հավելվող նախադասությունը դրվում է անմիջապես նախորդից հետո: Բայց պատահում է նաև, որ դրանք իրարից բաժանված են լինում որևէ ուրիշ նախադասությամբ կամ որևէ միջանկյալ կապակցությամբ.

Նրանք գնացին: Կտուրի վրա մնացինք Հագրոն և ես: Տուն գնաց և այն փոքրիկ տղան (8, 135): Բոլորը ժպտում էին: Չարմանքի մեջ էին միայն բռնվածները: Ժպտում էր նաև սպան (49, 79):

Հավելական հարաբերությամբ կարող են կապվել ոչ միայն ինքնուրույն պարզ նախադասությունները: Հաճախ միացող եզրերից մեկը լինում է պարզ, մյուսը՝ բարդ նախադասություն: Ընդ որում, մի դեպքում պարզ կարող է լինել նախորդ եզրը, իսկ հաջորդ մասը ներկայացնում է որևէ բարդ նախադասություն, որն իր կազմում ունի հավելում.

Իմ զենքը վրձինն է: Բրիչն էլ է իմ զենքը, երբ քանդակում է (ԳԹ):

Բոլորը քարացան: Անսպասելիությունից շշմեց և գեներայր, որ շվարած հայացքը զցեց ներկաների վրա (49, 229):

Մի այլ դեպքում նախորդ եզրը կարող է լինել որևէ բարդ նախադասություն, իսկ հավելվող մասը՝ պարզ.

Մի զարմանալի ժպիտ ուներ, որ երևում էր այն բուպեին, երբ բոլորովին չէիր սպասում: Աչքերն էլ տարօրինակ էին (11, 195): Ոչ ինքն է ունեցել սմոկինգ, ոչ էլ շրջապատից որևէ մեկը: Նույնիսկ չեն երազել այդ մասին (19, 23):

Հաճախ է պատահում նաև, որ հավելական հարաբերությամբ կապված երկու եզրերն էլ լինում են ինքնուրույն բարդ նախադասություններ.

Չեմ ուզում լսել, որովհետև նրանից սպասելի չէ նման բան: Չեմ էլ ուզում հավատալ, քանի որ դա բարբաջանք է (19, 10): Մենք լսել էինք, որ նրանց գյուղը մատուռի ստորոտում է: Լսել էինք նաև, որ նրանց գյուղի տակից առատ ջուր է գալիս (22, 100):

Երբեմն էլ տարբեր կազմություն ունեցող առանձին նախադասություններ միանալով ստեղծում են խոսքի ամբողջական մաս, հատված՝ արտահայտված հավելումների հաջորդական շղթայով.

Ես վաղուց վարժվել եմ ուշադրություն չդարձնել այն ժամանակին, որ ուրիշինն է և ոչ թե իմը: Դու էլ... Սյուններն էլ... Ու վարժվել ենք նաև ոչ միայն չնկատել ուրիշների համար այդքան նրազ անցնող ժամանակը, այլև այն ամենը, ինչ կատարվում է աշխարհում (56, 58):

Այսպիսի հաջորդական միացումներով հավելական հարաբերություն կարող է դրսևորվել ոչ միայն շարահյուսական բարդ ամբողջական միավորի ներսում, այլև խոսքի առանձին հատվածների, պարբերությունների, մասերի և նույնիսկ առանձին գլուխների միջև:

Թնդում է սիրտդ նրանց հետ:

Եվ ուզում ես գնալ նրանց բոլորի հետ:

Գնալ նրանց հետ, ուր որ գնում են նրանք, սրտով և հոգով, բոլորանվեր գնալ նրանց հետ:

Եվ երանի ես տալիս նրանց, ովքեր գործում են, որովհետև նրանք են կռում կամքերը, և կամքերն են, որ ստեղծում են մեծագույն ժողովուրդներ:

Երանի նրանց, որ սալ են ծեծում հզոր բազկով:

Երանի նրանց, որ ակոս են քաշում և ցորեն թաղում:

Երանի նրանց, որ քար են կտրում և տուն շինում, երանի նրանց, որ ծառ են տնկում և առու փորում:

Եվ երանի նրանց, որ սովորում են և սովորեցնում:

Որովհետև նրանք են շինում մեր նյութական և հոգեկան հացը:

Որովհետև նրանք են կերտում բոլորի համար արդար հայրենիքը:

Որովհետև նրանք են դարձնում մեր վաղն ու իրականը (23, 297):

Այսպիսի կիրառությունները ժամանակակից հայերենում բավականաչափ տարածված են և նոր օրինակներով դրա հաստատումը կարող է շատ էջեր զբաղեցնել, որը նպատակահարմար չէ, ուստի բավարարվենք միայն այս մեկ օրինակով: Եվ դա էլ քիչ չէ՝ համոզվելու համար, թե հավելական կառույցները խոսքի առանձին հատվածների, մասերի միացման ինչպիսի գործուն տեսակներ են:

Հավելական միավորների կառուցվածքային դասակարգման ելակետային մյուս հատկանիշը հենց հավելվող մասի կազմությունն է: Ըստ դրա կարելի է առանձնացնել հետևյալ տեսակները.

1. Բառով արտահայտված հավելվող մաս.

Ուրիշ ոչ մեկի, ինքն իրեն է խաբում: Եվ անգորությունից (10, 103): Ես Դիկի հետ պետք է գնամ. ձիով (24, 514): Խախտել են սահմանները: Ինքնագլուխ: Դավադրաբար (56, 75):

2. Բառակապակցությամբ արտահայտված հավելվող մաս: Որպես այդպիսիք ազատորեն կարող են հանդել գավանական կապակցությունները.

Ծառուկյանը պահարանից լիմոն հանեց: Մեկ հատ (37, 103): Եվ հանկարծ պառավը, բարձր ու սուր ձայնով, երգեց մի հին երգ: Սիրային երգ (19, 210):

Բայական, կապական բաղադրիչներով և այլ խոսքի մասերով կազմված բառակապակցություններն էլ ունեն նման կիրառություններ.

Մնում էր ապավինել նրան: Հավատալ քնկերոջը (48, 42): Սովորում, զվարճանում ու ապրում էր մաքուր օդում. և առանց լարվածության (24, 445): Ստացիր: Կտրիճության համար: Ռուսական հոգու համար (4, 85):

3. Նախադասությամբ արտահայտված հավելվող մաս: Ընդ որում, ինչպես նշվել է, այդ նախադասությունը կարող է ունենալ ամենատարբեր կառուցվածքներ: Այն մի դեպքում կարող է լինել պարզ.

Սպանել էին: Եվ սպանել էին իր աչքի առաջ (3, 98):
Անձանոթը ժպտաց: Նաև մտերմաբար աչքով արեց (56, 7):

Հավելվող մասն իր կազմությամբ կարող է համընկնել թե՛ բարդ համադասական, թե՛ բարդ ստորադասական նախադասություններին.

... Եվ մայրս էլ բարձրանում էր կտուրը, որպեսզի տեսնի արագիլը (22, 85): ... Ինձ թվաց նաև, որ իմ ոտները կտրվեցին գետնից (22, 149):

Կամ՝ Ստիպված կլինես սիրել ինձ: Եվ ոչ միայն սիրել, այլև մանկացնել իմ սպիտակ ալիքները (62, 547): Չայրույթից պոռթկացել եմ երբեմն, նաև կոպտել եմ, բայց և ինձ են կոպտել (2, 3):

Անդեմ նախադասությունները նույնպես կարող են արտահայտվել հավելլական կառույցով: Այդպիսի կիրառությամբ հանդես են գալիս.

ա) բայական անդեմ նախադասությունները.

Ինչքան երազանքներ կան երջանկության մասին: Եվ դրանցից հրաժարվել (50, 211): Ոչինչ լուրջ չպետք է ընդունել: Եվ մոռանալ ու կրել անհոգ ցինիզմի այդ դիմակը: Եվ օգտվել կյանքից ու ծիծաղել կյանքի վրա (10, 467):

բ) անվանական անդեմ նախադասությունները.

Ամառ, հեղձուցիչ օդ, հրկիզող արև: Եվ ոտքեր (3, 8):
Ծարավ, սով: Եվ արևահարություն, ուժասպառություն (3, 9):

Հաճախ էլ հավելլական կառույցի մեջ պակասում է որևէ անդամը, և այն իր կազմությամբ համընկնում է թերի նախադասությանը: Նման դեպքերն անհամեմատ շատ են ժամանակակից հայերենում: Եվ դա կապված է խոսքի

համառոտության, կոնկրետության ու դինամիկ զարգացման սկզբունքի հետ: Իսկապես, հաճախ ավելորդ և խոսքի հաղորդման տեսակետից անհարկի է դառնում հավելվող մասում կրկնել այն բոլոր անդամները, որոնք նշված են հիմնական արտահայտության մեջ (էլ չենք ասում, որ հիմնական արտահայտությունն էլ հաճախ նույն սկզբունքով ձևավորվում է թերի կազմությամբ):

Աչքերը մի պահ ջերմացան: Նաև ժպտացին (60, 26):

Հմմտ. – Նրա աչքերը մի պահ նաև ժպտացին:

Ամփոփելով ասվածը, կրկին նշենք, որ հավելական հարաբերությունն օժտված է ոչ միայն ամենատարբեր կառուցվածքներում հանդես գալու և խոսքի տարբեր միավորներ կապակցելու հատկությամբ, այլև աչքի է ընկնում հենց հավելվող մասի կառուցվածքային բազմազանությամբ:

Բ. ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ ԸՍՏ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍԻՆ ՄԻԱՆԱԼՈՒ ՄԻՋՈՑԻ

Այս սկզբունքը նպատակ ունի ամենից առաջ բացահայտելու, թե ինչ միջոցներով է տեղի ունենում հավելվող և հիմնական մասերի շարահյուսական կապը: Իսկ այդ կապը դրսևորվում է երկու ձևով.

1. շաղկապներով կամ շաղկապական բառերով,
2. շարահարությամբ:

Ուստի և, ըստ այս սկզբունքի, նախ առանձնանում են հավելյալական կառույցների երկու մեծ խմբեր՝ շաղկապավոր և անշաղկապ:

1. ՇԱՂԿԱՊԱՎՈՐ ՀԱՎԵԼԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ

Սրանց մի խմբի մեջ է միավորում այն հանգամանքը, որ կապը նախորդ մասի հետ տեղի է ունենում շաղկապների օգնությամբ: Բայց քանի որ որպես միացման միջոց կարող են հանդես գալ և համադասական, և ստորադասական, և բուն հավելյալական շաղկապները, ապա սրանք ևս իրենց հերթին լինում են երեք հիմնական տեսակի. 1. համադասական շաղկապներով, 2. ստորադասական շաղկապներով, 3. հավելյալական շաղկապներով ու շաղկապական բառերով հավելյալական կառույցներ:

1.1. ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ ՇԱՂԿԱՊՆԵՐՈՎ

Համադասական շաղկապների միջոցով համադասական հարաբերությունը կարող է դրսևորվել բառերի, նախադասությունների և խոսք կազմող առանձին հատվածների, մասերի միջև:

Հավելական նշանակությամբ գործածվելիս համադասական շաղկապները պահպանում են ընդգրկման այս շրջանակները, այսինքն նրանց միջոցով հավելական հարաբերությունը նույնպես դրսևորվում է թե՛ նախադասության անդամների, թե՛ նախադասությունների, թե՛ խոսք կազմող հատվածների, մասերի միջև:

Համադասական շաղկապներն ունեն իմաստային ատրիբեր հատկանիշներ: Ըստ այդ իմաստային հատկանիշների էլ նրանք կարող են արտահայտել համադասություն տարբեր հարաբերություններով և լինում են հետևյալ տեսակների՝ միավորիչ, ներհակական, տրոհական և հավելական:

Մի կողմ թողնելով հավելական շաղկապները (որոնք կքննարկվեն համապատասխան բաժնում), ասենք, որ համադասական մյուս տեսակի շաղկապներից բոլորը չէ, որ հավասարապես կարող են արտահայտել հավելական հարաբերություն, իսկ արտահայտողներն էլ չունեն հավասարաչափ կիրառություն և միատեսակ ակտիվություն: Համադասական շաղկապներից հավելական կառույցների կազմավորմանը հիմնականում կարող են մասնակցել և, ու, իսկ, բայց, սակայն, կամ շաղկապները:

ԵՎ ՈՒ շաղկապներ

Այս շաղկապներն ունեն իմաստային, կիրառական ընդհանրություն, այսինքն ունեն նույն իմաստը (միավորիչ) և կարող են ազատորեն գործածվել միմյանց փոխարեն՝ առանց փոփոխելու արտահայտած հարաբերության նշանակությունը: Եվ քանի որ միավորության իմաստը իր մեջ պարունակում է նաև նոր միտք, նոր փաստ հավելելու, լրացուցիչ հաղորդում կատարելու նշանակություն, այս շաղկապները լայնորեն գործածվում են նաև հավելական կառույցների հետ:

Իհարկե, կա մի նուրբ տարբերություն այս շաղկապների միջև⁷⁷: Դա այն է, որ ու շաղկապը սովորաբար գործածվում է ավելի սերտ հարաբերություններ արտահայտելու համար, ավելի փոքր միավորներ կապելու համար, իսկ և շաղկապը միավորում է համեմատաբար մեծ ծավալի լեզվական միավորներ: Այս բանը նկատվում է նաև, երբ նրանք գործածվում են հավելական նշանակությամբ: Այսպես.

Նորից ծիծաղեցին, և դա պառավին իսկի դուր չեկավ (37, 162): Շատ լավ է փեսացուի համար: Եվ հաճելի էլ տղա է (11, 30): Ծառն ինքը պիտի կովի հիվանդության դեմ, Մարիամ, ու ցրտի (ԳԹ):

Ինչպես երևում է բերված օրինակներից, և շաղկապն իրար է միացրել նախադասություններ, իսկ ու-ն նախադասության անդամներ: Սակայն այս երևույթը բացարձակ չէ, և երբեմն կարող է տեղի ունենալ հակառակը. և-ով կարող են

⁷⁷ Այդ մասին նշել են Մ.Աբեղյանը, Ս.Աբրահամյանը, Վ.Առաքելյանը, Գ.Գարեգինյանը և ուրիշ լեզվաբաններ:

միանալ նախադասության անդամները, իսկ ու-ով՝ նախադասությունները: Ինչպես.

Ձեռներեց էր այդ Տոսբան: Եվ միշտ կիրթ: Եվ միշտ գոռոզ (66, 317): Անցյալում եղել է, բայց շատ հստակադեպ. ու եղել է շատ-շատ վաղուց (24, 726): Մարեն երկու տղա ունի, հինգ աղջիկ: Ու յոթի աչքերն էլ բաց կապույտ են (46, 229):

Ահա, հաշվի առնելով այս շաղկապների իմաստային, կիրառական ընդհանրությունները և աշխատանքի ծավալը չընդարձակելու համար, մենք այդ շաղկապները որպես հավելական կառույցների միացման միջոց, քննում ենք ոչ թե անջատ-անջատ, այլ միասնաբար և նրանց արտահայտած նշանակություններն էլ դիտում ենք միասնական, քանի որ այս տեսակետից դրանք համարժեք են:

Եվ, ու շաղկապներով հավելական կառույցները հարուստ են նշանակությունների բազմազնությամբ: Դրանք կարելի է միավորել հետևյալ հիմնական խմբերում⁷⁸.

1. Սովորական հավելում, երբ հիմնական արտահայտությանը հավելվում է որևէ նոր միտք, նոր տեղեկություն:

Պինդ, անսահման պինդ եմ ես քեզ բռնել: Եվ դու չես կարող գնալ (50, 226): Ավելի են սեղմվում իրար, թևերն ավելի են պրկվում, և պահը դառնում է հավիտենական (22, 123): Ծաղիկներից սքանչելի նեկտար եմ հավաքել և մեղուներից

⁷⁸ Ինչպես այս, այնպես էլ ուրիշ շաղկապներով հավելական կառույցների արտահայտած նշանակությունների դասակարգումը, որ կատարվում է քննության ժամանակ, չպետք է համարել բացարձակ: Այդ նշանակությունները կարող են հանդես գալ և անջատ-անջատ, և միասնաբար, մի հանգամանք, որ ինքնին բացառում է դրանց բացարձակ սահմանազատումը: Պարզապես այդպիսի դասակարգումը կատարվում է նյութը հեշտ մատուցելու, այդ բազմապիսի նշանակությունները ավելի ցայտուն, ավելի ընդգծված հատկանիշների շուրջը բնեռելու, համախմբելու համար:

քաղցրագին մեղր: Եվ վարդերից ննջարան եմ հարդարել քեզ համար (23, 203):

Հավելական իմաստն ավելի է շեշտվում, երբ այս շաղկապներին միանում են հավելական ուրիշ շաղկապներ կամ շաղկապական բառեր.

Խոսում էր այն ամենի մասին, ինչի նկատմամբ ինքն անտարբեր էր, և այն էլ ինչքան անտարբեր (50, 316): Բայց գլուխը դատարկ է: Ու գրպանը նույնպես (48, 41): Ոչխարի թամբն անցյալ ունի և ապագա. ու նաև դա այնպիսի մի բան է, որի մասին կարելի է վիճել (11, 66):

Հավելվող մասի մեջ բովանդակվող լրացուցիչ հաղորդումը, ճշգրտումը, դիտողությունը կարող են վերաբերել ինչպես ամբողջ նախորդ ասվածին, այսինքն ամբողջ հիմնական արտահայտությանը, այնպես էլ նրա որևէ առանձին անդամին: Եվ եթե լրացվում է ամբողջ նախադասությունը, ապա հավելվող մասի սկզբում կարող է դրվել որևէ դերանուն (սովորաբար այդ, դա), որը փոխարինում է նախորդ նախադասությանը: Ինչպես.

Փայտածուխ է պետք, և դա երկար գործ է (3, 62): Չեմ հիշում, ո՞ր բանաստեղծն է ասում՝ «թշվառությունը մենակ չի գալիս», - և այդ ճիշտ է (41, 34):

Այսպիսի կառուցվածքներն իրենց նշանակությամբ շատ մոտ են ստորադասական կառուցվածքներին:

Հմմտ. Նա ընդունակ էր միայն մեքենագրուհի լինելու: Եվ դա բացարձակ ճշմարտություն է (19, 302): Եվ՝ Նա ընդունակ էր միայն մեքենագրուհի լինելու, որը բացարձակ ճշմարտություն է:

Իսկ երբ լրացվում է հիմնական արտահայտության որևէ անդամը, հավելվող մասի մեջ այդ անդամը կարող է կրկնվել. Ընդ որում, կրկնվող անդամին նույնպես կարող է

միանալ որևէ դերանուն (ցուցական): Կարող է կրկնվել անվանական անդամը: Ինչպես.

Կար անցյալ: Եվ այդ անցյալում՝ վիլանկյան մի ողբերգություն (56, 216): Նա գիտեր ինչ բան է տառապանքը, և տառապանք այս մարդը ուներ (11, 276): Իսկ իրենք անզեն են, անգիտակ, թե ինչ է կատարվում աշխարհում. ու աշխարհը Կիլիկիան է (3, 70):

Կարող է կրկնվել և բայական անդամը, մի երևույթ, որը շատ տարածված է հայոց լեզվում: Օրինակներ.

Ապա քարից քամեց մետաքս ու բյուրեղ: Եվ քամեց անարատ, լուսաթրթիռ երգ (31, 204): Բարդիներն օրորվում էին, և օրորվում էր նրանց ստվերը (35, 315):

Նման դեպքերում երբեմն նախորդ նախադասության բայական անդամը հավելվող մասի մեջ կրկնվելիս վերածվում է անվանական անդամի.

Տերևները հրճվանքով թրթռում էին, և այդ թրթռումը լեցուն էր լույսով (35, 307): Նա ժպտում էր, և այդ ժպիտն այնքան գրավիչ էր (61, 304):

Հավելում, լրացուցիչ հաղորդում, ճշգրտում կատարելու համար հաճախ և, ու շաղկապները նույնպես կրկնվում են, և այդ կրկնությամբ կարող է ստացվել հավելումների հաջորդական շղթա: Ինչպես.

Եվ վազում էր մանր քայլերով, և ոսկե մազերի ոլորներն էր քամին թրթռացնում, և թրթռացնում էր մերկ մարմինը հազիվ ծածկող շորի արյունոտված ծվենները (7, 35): Ու լուռ էր: Ու քնկերները բոլորն էլ լուռ էին: Ու էլ ոչ մի բան չկար ասելու (11, 9, 1975):

Որոտաց Բողդիխանը, և բովանդակ ապարանքը դողողաց, և նրա դաժան աչքերի դեղին ծովերը փոթորկեցին (23, 125): Հետո տասներկու տարի... Եվ ինչ տարիներ... Եվ նրանց մեջ խոնարհի դեմքը, ցանկապատի փշերի արանքից

երկու մանրիկ աչքեր, որպես սև ձիթապտուղ, և բարակ, կարմիր շրթունքներ (8, 35):

Ինչպես երևում է բերված օրինակներից, շաղկապների կրկնությամբ կառուցված հաջորդական հավելումները հարուստ են տարբեր նրբիմաստներով, արտահայտում են տարբեր հարաբերություններ (սովորական հավելում, լրացուցիչ մտքի հաղորդում, բացատրություն, ճշգրտում և այլն): Դա բխում է այս շաղկապների իմաստային տարբեր նրբերանգներ ունենալու հատկանշից և տարբեր հարաբերություն արտահայտող միավորներ կապակցելու կարողությունից:

Հավելումների հաջորդական շղթա ստեղծելիս և, ու շաղկապները կարող են հանդես գալ և միասնաբար.

- Դու լավն ես, - կերկերուն ձայնով ասաց Ուրսուլան:

- Շնորհակալություն, մելաստրա:

- Ու դեռ երիտասարդ:

- Այո, մելաստրա: Եվ դա իմ դժբախտությունն է (56, 17):

Ձիուն պողպատասանձ է հագցված, ու ինչպիսի սանձ, և Պառլան էլ կարողանում է վարվել նրա հետ (24, 518):

Այս շաղկապների կրկնությամբ հավելվող մասերը կարող են արտահայտել և թվարկում. ընդ որում, դա կարող է լինել պարզ թվարկում.

Եվ բազում հուշադրյուրներ: Եվ Սարդարապատը: Եվ Աղվերանի հանգստյան ողջ կոմպլեքսը (58, 11, 1975): Շագանակագույն, շագանակագույն խոպոպներ... Եվ աղջկական շառագույն ամոթխածություն... Եվ դողացող շուրթեր (56, 69):

Երբեմն այս թվարկումով հավելվող մասերը կարող են բխել նախորդ նախադասության որևէ անդամից լինելով նրա բովանդակության բացահայտումը, մասնավորումը, ճշգրտումը:

Բոլորը անցնում է - և լավը, և վատը, և մենք ինքներս (50, 574): Նրա մոտ ամեն ինչ մի տեսակ կոշտ ու կոպիտ է ստացվում. և բրիչը, որով փորում էր, և գերանդին, և մանգաղը (58, 1, 1976): Այս աշխարհում ամեն ինչ անցողիկ է. և ճարած պատերը, և քո քայլերից դողացող ծոմոված հատակները (48, 35):

Այս օրինակներում հիմնական մասի բոլորը, ամեն ինչ անդամների իմաստի տակ իսկապես կարելի է հասկանալ ամեն ինչ, սակայն թվարկումով հավելվող մասերը հենց կոնկրետացնում, մասնավորում ու ճշգրտում են այդ անդամների իմաստը՝ հանդես գալով որպես դրանց բովանդակության բացահայտություն: Այսինքն ամբողջը մասնավորվում է: Բայց կարող է տեղի ունենալ և հակառակ երևույթը, երբ թվարկվում են հավելվող մասնավոր փաստերը, երևույթները, ապա դրանց իմաստն ամբողջանում, ընդհանրացվում է մեկ անդամի մեջ.

Եվ ավլում էր, թափ տալիս, կարում, և լվանում էր, արդուկում, և պահում էր մոր ծծկեր երեխային, - և այդ բոլորը հարատև ծիծաղով ու աղմուկով (4, 76):

Երբեմն այս շաղկապներով հավելվող մասերը թվարկման ամբողջ շրթային միանում են որպես թվարկման յուրաքանչյուր առանձին մասից բխած արդյունք, հետևություն.

Մեկ որոտում էր սիրտը նրա ծովի պես ու ավերից դուրս շառաչում, և նա համբուրում էր բոլորին, բոլորին, մեկ ակիքները նրա ծով սրտի թափվում էին իր կրծքի վրա և հառաչում, և արտասվում էր նա մեղմ ու հեզ (23, 34):

Այս թվարկումը կարող է ունենալ և ժխտական նշանակություն.

Նրա հաչոցն այլևս ահավոր արձագանք չուներ, և ոչ էլ կախված ժայռերն էին տձև (8, 24): Նրանք դեռ չգիտեին, ոչ

Թումաս Էֆենդու սատանայական կարգադրությունները, ոչ հիսնապետի խուզարկությունները, և ոչ էլ զինվորների արած անկարգությունները (62, 178):

2. Այս շաղկապներով միացած կառույցները հավելական իմաստի հետ միասին կարող են ունենալ նաև հետևության, բացատրության, ընդհանրացման նշանակություն: Օրինակներ.

Արդարությունն այնքան է պետք, որքան անարդարությունը, և դա ևս աստծու անխախտ օրենքն է (58, 2, 1975): Յուրտը սառեցնում է ձյունը, կարծրացնում, և հետևաբար, ձյունը սկսում է ոտների տակ ճգրտալ, խշխշալ (22, 119): Ուժ: Եվ հզոր է նա, ով ուժ ունի (3, 111):

3. Այս շաղկապներով կառույցներին հատուկ է նաև պայմանի, հիմունքի, պատճառահետևանքային հարաբերություններ արտահայտելը.

Կանաչեցրու այդ սարը. և սերս քոնը կլինի առհավետ (31, 256): Յուրաքանչյուրն ուներ իր նախասիրությունները: Եվ ըստ այդ նախասիրությունների էլ հանձնեցին իրենց գործերը (Ավ): Առաջ է շարժվում ռուսական բանակը: Եվ դրանից խուճապ է առաջանում հակառակորդի շարքերում (4, 119): Աղջիկը վախեցավ: Ու նրա շուրթերը սկսեցին դողալ (56, 13):

4. Հավելվող մասը կարող է հանդես գալ և որպես նախորդ արտահայտության մտքի շարունակություն, զարգացում: Այդպիսի կիրառություններն էլ շատ են տարածված ժամանակակից հայերենում:

Դրանք բոլորն էլ մարդիկ էին, որոնք անպայման ուզում էին որևէ բան կորցրած լինել: Եվ հաջողությամբ կորցնում էին ամենաթանկագինը (56, 9): Արթնանում էին չհասկանալով, որ արթնացել են, քնում էին չհասկանալով, որ քնի մեջ են: Ու ճչում էին վախից, վեր թռչում (25, 124): Դու ինձ

կատես: Եվ ատելությունը քեզ ուժ կտա (19, 47): Ամենալավ այգին ու բանջարանոցն այդ պատի ներսն են: Ու ամենալավ գոմը՝ կարմիր տանիքով, կաղնեհատակ, չոր (37, 144):

5. Եվ, ու շաղկապներով հավելական կառույցների եղանակավորության անսահմանափակությունը հնարավորություն է տալիս դրանց գործածվելու որպես նախորդ ասվածի գնահատություն՝ խոսողի վերաբերմունքային բազմատեսակ նշանակություններով և տարբեր հնչեքանգային դրսևորումներով: Խոսողի կողմից ասվածին գնահատություն տալը, դրա նկատմամբ վերաբերմունք հայտնելը կարող է կատարվել հարցման միջոցով: Ընդ որում, այդ հարցումը կարող է անմիջականորեն բխել ասվածի իմաստից, ինչպես.

Ինչքան է նա սրտի ավյուն վատնել, սիրելով, ցանկանալով, տանջվելով, - և ու՛մ համար, ինչի՞ համար (50, 446): Ես քեզ երբեք արժանի չեմ եղել տեսնելու ոչ կյանքում, ոչ երազում. և ինչպե՞ս կարող է ինձ պես մի հողածին տեսնել քեզ (23, 13):

Երբեմն էլ այս հարցումը անմիջականորեն չի բխում ասվածի իմաստից, այլ հավելվում է որպես զվխում հանկարծակի ծագած միտք.

Ինչքան շատ ժամանակ է անցել այն օրից: Եվ մի՞թե հնարավոր է այդքան նման երկու դեմք, նույնիսկ նույն շրթունքները (8, 8): Նա ուզում էր սերը ձեռք բերել ինչպես ողորմածություն: Դա վատ տակտիկա էր: Եվ ինչպե՞ս նա չէր կարողանում ոչինչ թաքցնել (50, 31):

Վերաբերմունք, գնահատություն տրվում է նաև բացականչությամբ.

Որտե՞ղ էին մտքերը, որ աստղին նայելով՝ չէր նկատել նրա տեղաշարժը: Եվ ի՛նչ գողտրիկ աստղ էր (3, 81):

Վտանգավոր է մեծամասնության դեմ գնալ: Եվ ինչպիսի՛ մեծամասնության (11, 280):

Եվ, ու շաղկապներով հավելյալ կառույցները կարող են արտահայտել և հրաման, հորդոր, թելադրանք:

Ասա՛ թող ձայնը կտրի: Եվ շու՛տ (66, 80): Հենց այս մասին պիտի հաշիվ տաս: Եվ ա՛նպատճառ այսօր (43, 499):

Խոսողի վերաբերմունքը կարող է դրսևորվել և սովորական, պատմողական հնչերանգով: Ինչպես.

Հոգնած տղաների նայվածքում զայրույթ կա, կարմրած մի հուսահատություն: Եվ դա լավ չէ (3, 100):

6. Եվ, ու շաղկապներով հավելյալ կառույցները կարող են ունենալ նաև այլ նշանակություններ: Այսպես, երբեմն դրանք ծառայում են որպես անցումնային օղակ նոր միտք սկսելու համար, այսինքն նախապատրաստում են նոր մտքի հաղորդումը.

Ծանր վիճակի մեջ ենք, - ասաց Վիլկերը, - պատերազմ, գեստապո, ավերակներ: Եվ դեռ այս բոլորը ոչինչ (15, 111): Ա՛հ, բոլորն էլ միանման են՝ դյուրազգաց եսամոլներ, առիթ են փնտրում մի օյին սարքելու: Եվ դա դեռ բոլորը չէ (6, 12):

Այս շաղկապներով կապակցությունները կարող են արտահայտել հակադրություն, անսպասելի, չնախատեսված արդյունք.

Երկար ժամանակ նրա պայքարը հենց դրա դեմ էր: Ու հիմա ինքն էր այդ անում (11, 3, 1976): Չէր ուզում, մտադիր չէր. և գնաց (ԵԵ):

Հմմտ. Չէր ուզում, մտադիր չէր, բայց գնաց:

Կարող են ցույց տալ և ժամանակային տարբեր հարաբերություններ (միաժամանակություն, տարաժամանակություն): Օրինակներ.

Եվ համբուրեց Ադամ Լիլիթի ստինքները. և սարսուռն շրթներով համբուրեց կնիքները ստինքների (23, 205): Փայլ է

ունեցել այդ կինը, - շարունակեց նա, - թագավորին արժանի փայլ: Եվ ինչքան էլ հանգիստ է պահում իրեն (11, 172):

Մեր կողմից քննվեցին և, ու շաղկապներով հավելական կառույցների հիմնական նշանակությունները: Իհարկե, դրանք այսքանով չեն սահմանափակվում, սակայն այսքանն էլ բավական է համոզվելու համար, թե որքան գործուն են այս շաղկապները ժամանակակից հայոց լեզվում որպես հավելական կառույցների միացման միջոց, և թե որքան բազմազան են նրանց դրսևորած հարաբերությունները:

ԻՍԿ շաղկապ

Իսկ-ի հիմնական նշանակությունը ներհակական հարաբերություն արտահայտելն է, սակայն կարող է կազմել նաև հավելական կառույցներ, և այդպիսի դեպքերում հաջորդ բաղադրիչի կապակցումը նախորդի հետ կատարվում է ոչ թե հակադրության, ներհակության կարգով, այլ լրացուցիչ միտք, դիտողություն, գնահատություն, հաղորդում անելու կարգով:

Իսկ շաղկապով հավելական կառույցները կարող են ունենալ տարբեր նշանակություններ:

1. Սովորական հավելման ժամանակ երբեմն կարող են միասնաբար հանդես գալ և՛ ներհակական, և՛ հավելական հարաբերությունները: Դա սովորաբար տեղի է ունենում թվարկումների ժամանակ կամ նոր փաստերի, իրողությունների ավելացման դեպքում:

Մի քանի րոպե ևս, և ինքը վեր կենալով դուրս կգնար փողոց: Իսկ փողոցը մեծ մխիթարող էր, մեծ բարեկամ (ԳԹ): Ամեն անգամ, երբ հիշում էի նրան, արտասուքը խեղդում էր ինձ: Իսկ նրան հիշում էի ամեն ժամ, ամեն վայրկյան (43, 528):

Երբեմն թվարկվող անդամը կարող է հիմնական մտքին հավելվել սաստկացման, առանձնացման երանգով.

Մտքով կասկած չէր անցնում ժուլիենի իսկական զգացմունքների մասին, իսկ առավել ևս՝ իր զգացմունքների (50, 345): Օրենքի ներկայացուցիչները սպասել չեն սիրում: Իսկ առավել ևս կանայք (56, 72):

Իսկ շաղկապով հավելական կառույցները թվարկման երանգով կարող են արտահայտել իրար հաջորդող գործողություն, նկարագրական հաջորդականություն: Ինչպես.

Տանից դուրս թռավ տերտերը, իսկ նրա ետևից կլինը, իսկ նրանցից հետո՝ ողջ հավաքվածները (5, 38): Գետի այն կողմում այգին է, իսկ այգու դիմաց՝ տունը, իսկ տան կողքին՝ մեծ ավազանը (22, 56):

Նման կառուցվածքները հիմնականում ոճական արժեք ունեն, և եթե դրանց բաղադրիչները շատ են, յուրաքանչյուր հաջորդ կապակցությունը միանում է միայն իր անմիջական նախորդին՝ ստեղծելով թվարկումների հաջորդաբար աճող շարք:

2. Երբեմն իսկ շաղկապով կառույցները բովանդակում են պատճառային կապ:

Այնպես դժվարությամբ ես վերադառնում, որ մենք խղճում ենք քեզ: Իսկ այդ խղճահարությունը տառապանք է պատճառում (11, 3, 1975): Անհարմար զգաց, որ ուշացրել է մեկիքի պատասխանը: Իսկ ուշացրել էր, որովհետև մտքի մեջ կատաղել էր Շարիֆ-խանի դեմ (7, 131):

Այսպիսի դեպքերում իսկ շաղկապին կարող են միանալ որոշ ցուցական դերանուններ ու որոշ կապեր կամ կապական բառեր: Այսպես.

Այդ թուրքերն, ախար, շատ մեղրասեր ժողովուրդ են: Իսկ մեղրասեր են այն պատճառով, որ մեղու պահել չգիտեն

(37, 113): Հարգում էր նրան, կարեկցում էր, իսկ դա համակրանքի զգացում էր ծնում (50, 345):

Այդ պատճառական կապը երբեմն դրսևորվում է շատ յուրօրինակ ձևով, ոչ անմիջական.

Նա զգվում էր ինձանից: Որովհետև պիջակս յուղոտ է: Իսկ քիթս փտած բադրիջանի է նման (43, 495):

Հմետ. նա զգվում էր ինձանից, որովհետև պիջակս յուղոտ է, իսկ քիթս ձտած բադրիջանի է նման:

3. Ժամանակակից հայերենում գործածական են նաև իսկ շաղկապով այնպիսի հավելական կառույցները, որոնք հանդես են գալիս որպես ընդհանրացում կամ հետևություն՝ հիմնական մտքից բխած: Մասնավոր փաստը, միտքը, իրողությունը առիթ են դառնում լայն ընդհանրացում կամ հետևություն կատարելու համար:

Տուր գիտակցություն իր կոչման, իր նպատակի, իր արժեքի, իսկ գիտակցությունն ազատության աղբյուրն է, ստրկության մահը (23, 108): Նա կբուժի քո դստերն իր ցավից, որ ալարկոտություն է կոչվում: Իսկ ով ալարի՝ ոչ դալարի (31, 222): Հասկանալ՝ նշանակում է բացատրել: Իսկ երբ սիրում էս, բացատրելու կարիք չկա (50, 117):

Նման դեպքերում ընդհանրացում կամ հետևություն կատարելու եզրը, հիմքը հիմնական արտահայտության այն անդամն է, որին վերաբերում է հավելվող մասը, և որը սովորաբար կրկնվում է:

4. Իսկ շաղկապով միացած կառույցները կարող են բովանդակել և լրացուցիչ տվյալ, լրացուցիչ միտք՝ հիմնական մասում նշված փաստի կամ մտքի վերաբերյալ.

Այն ժամանակ ոչ թե քեռուս տանն էինք ապրում, այլ մեր սեփական խրճիթում, իսկ մեր խրճիթը գյուղի ծայրին էր (5, 20): Նրանք հարուստ են, իսկ տղամարդիկ հիմա հարուստ կանայք են փնտրում (58, 1, 1976):

- Դու ինչո՞վ պիտի կովես, կտրիճ:

- Պնդոցից՝ քարերով, նետով, գետնի վրա՝ կացնով, եթե ինձ թուր չհասնի: Իսկ կացինս լավն է (7, 74):

Այս լրացուցիչ տվյալի, լրացուցիչ մտքի հաղորդումը կարող է լինել և նշված փաստի, իրողության բացատրությունը, կոնկրետացումը, ճշգրտումը:

Իմ կարծիքով հայրենասիրություն ասածը լոկ գաղափար չէ, այլ առաջին հերթին՝ գործ: Իսկ ամենամեծ գործը երկրի համար լավ, առողջ ընտանիք ստեղծելն է (22): Ես ապստամբների հետ եմ, որովհետև միշտ սիրել եմ հերոսականը: Իսկ հերոսականը ոչ թե ապստամբությունը ճնշելն է, այլ ապստամբելը (38, 42):

Որոշ դեպքերում էլ հավելումը դրսևորվում է որպես մտքի զարգացում, շարունակություն, դատողության ընդարձակում: Այսպես.

Իսկ եթե մնաս՝ կանիծես ինձ: Կանիծես: Իսկ երբ ինձ անիծում են, ես սարսափելի երագներ եմ տեսնում (11, 3, 1975): Նրանց ես եմ վարձելու և ես էլ վրնդելու եմ: Իսկ դրա համար դրամի կարիք կունենամ (24, 441): Հարկավոր է ոչ մի բան չանել ու չտանջվել այն մտքից, որ այսօր երկուշաբթի է, իսկ բաց թողած երկուշաբթին կարող է շատ թանկ նստել մեզ վրա (48, 5):

5. Իսկ շաղկապով հավելական կառույցների միջոցով կարող են արտահայտվել խոսողի տարբեր տեսակի վերաբերմունքները նշված իրողությունների նկատմամբ, գանահատությունը, հավանությունը, հաստատումը կամ ժխտումը և այլն: Այսպես.

Քո սովերն ընկնում է իմ դեղատան նախասրահի վրա: Իսկ դա չափազանց տհաճ բան է (56, 25): Միրեինք միջև մեր կյանքի վերջին օրը: Եվ իրար հետ էլ նույն օրը մեռնեինք: Իսկ դրանից մեծ երջանկություն չկա (56, 117):

ԲԱՅՑ շաղկապ

Բայց-ը նույնպես ներհակական է, ինչպես և իսկ-ը, սակայն սրանում շատ ավելի ուժեղ է արտահայտված ներհակական նշանակությունը, այդ պատճառով էլ այն համեմատաբար ավելի քիչ է հանդես գալիս որպես հավելյական կառույցների միացման միջոց և որպես այդպիսին ավելի քիչ կիրառություններ ունի:

1. Բայց շաղկապով միացած հավելվող մասերը կարող են բովանդակել լրացուցիչ հաղորդում, տեղեկություն, նախորդ մասի բացատրություն, ճշգրտում: Եվ քանի որ, ինչպես արդեն ասվեց, այս շաղկապում շատ ուժեղ է արտահայտված ներհակական նշանակությունը, միացող մասի հավելյական հատկանշին զուգորդվում է և ներհակության հատկանիշը: Այսպես.

Իր հայարտությանը և հույսին սոցիալիզմի ուղու վրա դրեց, բայց հույժ ուղղամիտ սոցիալիզմի (50, 156): Դեռ ժամանակ կա: Բայց կարճ ժամանակ (24, 642): Նա չպայտցով համբուրում է թշերս և ինձ հանձնում տալոջը, որը նույնպես համբուրում է. բայց ճակատս (46, 36): Մի անգամ արդեն նրան հարցրել եմ: Բայց ուրիշ առիթով (64, 403):

2. Բայց շաղկապի ուժեղ արտահայտված ներհակական նշանակությամբ էլ պայմանավորված է այն հանգամանքը, որ երբեմն հավելյական իմաստ արտահայտելու համար այս շաղկապին միանում են այդ տեսակետից ավելի ակտիվ կամ հավելյական այլ շաղկապներ ու շաղկապական բառեր (և, ու, էլ, նաև, նույնպես, և այլն): Ինչպես.

Նա գերազանց կրթություն ունի և օժտված է արտակարգ ընդունակություններով, բայց և վարակված է մարդաստյացությամբ (47, 5): Նեղոսը քեզնից հզոր է, բայց և գթոս (23, 24): Փոքրիկ էր, լիքը, կլոր, սպիտակ ձեռներով,

բայց նաև լիքը և փոսիկներով (22, 71): Թեև երգ էր նրա ձայնը, բայց նաև խորթ էր (26, 24): Լավիս էր մոր հետ միասին՝ խղճալով ավելի շատ իրեն, քան ուրիշներին: Բայց ուրիշներին նույնպես (50, 458):

3. Երբեմն այս շաղկապով միացած կառույցները ցույց են տալիս ասվածի հակառակ արդյունքը, այսինքն հավելվող մասի բովանդակությունը կամ նախատեսված չի եղել, կամ գլխում ծագել է հանկարծակի: Ինչպես.

Ամեն ինչ կլինի: Հետո: Բայց այսօր մի գնա, լուսացնենք (46, 102): Ընդունեց ինձ, բայց շատ սառը (40, 39):

4. Այս շաղկապով հավելական կառույցներին հատուկ է նաև հավելման և ժխտման, մասնավորման իմաստների զուգորդումը: Նման դեպքերում սովորաբար հիմնական արտահայտության միտքը կամ նրա մեջ նշված իրողությունը հավելվող մասում մասնավորվում են, կոնկրետանում, այսինքն՝ միաժամանակ կատարվում է որևէ նոր փաստի, իրողության հավելում, և այդ հավելման միջոցով ժխտվում կամ մասնավորվում է հիմնական արտահայտության որևէ անդամը: Այսպիսի կառուցվածքներում բայց շաղկապին միանում է ոչ ժխտական մասնիկը: Օրինակներ.

Հետո նորից վեր կացան: Բայց ոչ բոլորը (4, 124): Լեզուն Թիֆլիսի բարբառն էր, բայց ոչ զուտ Թիֆլիսի բարբառը (41, 73):

5. Բայց շաղկապով հավելական կառույցներին բնութագրական է նաև խոսողի վերաբերմունքի դրսևորումը հաղորդածի նկատմամբ, ասվածի գնահատությունը:

Շատերն, իհարկե, չեն հավանում: Բայց դա ճաշակի ու վարժության հարց է (56, 12): Նա հասկանում էր, որ այնքան էլ լավ չէ իր կողմից այդ անելը: Բայց դա այնքան էր բնական (50, 352): Քաշում են խոհանոց կարտոֆիլ մաքրելու, կարծես անելիք ունես, պիտի անես, բայց դա ինչ գործ է (37, 142):

Ինչպես նկատվում է օրինակներից, այսպիսի դեպքերում քայց-ին միանում է որևէ ցուցական դերանուն (սա, դա, այն և այլն), որը փոխարինում է նախորդ արտահայտության մեջ նշված փաստին կամ իրողությանը, հակառակ դեպքում պետք է նորից կրկնել ասվածը.

Հմտ. Քաշում են խոհանոց կարտոֆիլ մաքրելու..., քայց խոհանոցում կարտոֆիլ մաքրելն ինչ գործ է:

ՍԱԿԱՅՆ շաղկապ

Սակայն շաղկապում նույնպես ուժեղ է արտահայտված ներհակության նշանակությունը, որի պատճառով էլ այն, ինչպես և քայց շաղկապը, շատ քիչ դեպքերում է հանդես գալիս որպես հավելական կառույցների միացման միջոց, ընդ որում՝ ավելի քիչ, քան քայցը: Դա կարելի է բացատրել այն բանով, որ ի տարբերություն քայց-ի, սակայն շաղկապը հատուկ չէ, խոսակցական լեզվին: Այնուամենայնիվ, ժամանակակից հայոց լեզվում կան սակայն շաղկապով հավելական կառույցներ, որոնք նման են քայց-ով միացածներին, միայն թե ավելի քիչ գործածական են, և նրանց արտահայտած նշանակություններն էլ համեմատաբար քիչ են:

Այս շաղկապով միացած կառույցները կարող են բովանդակել լրացուցիչ հաղորդում, տեղեկություն, ճշգրտում: Ինչպես.

Լիլիթ նայեց Ադամի խղճալի դեմքին և լիահնչուն քրքիջ արձակեց: Սակայն մի պահ (23, 191): Առավոտյան արթնացավ ծանրացած գլխով: Սակայն լավ տրամադրությամբ (58, 12, 1974):

Սակայն շաղկապն էլ քայց-ի նման հավելական իմաստով գործածվելիս պահպանում է իր ներհակական

նշանակությունը և նա նույնպես կարող է միանալ հավելյալական նշանակության տեսակետից ավելի ուժեղ շաղկապների՝ ընդգծելու համար հավելյալական իմաստը: Այսպես.

Բարի էր, ժպտերես. սակայն նաև տխուր էր (60, 52): Եվ որպես կանոնավոր մարդ, կովում էր իր հետ: Սակայն կանոնավոր մարդն էլ է մարդ, և նրան չի կարելի կրակի հետ իսպառ (50, 357):

ԿԱՍ շաղկապ

Կամ շաղկապը հավելյալական կառույցների հետ հազվադեպ է հանդես գալիս: Այս շաղկապով կառույցները հաղորդում են լրացուցիչ տեղեկություն, փաստ անջատելով այն ընդհանուր շղթայից, այսինքն հավելումը կատարվում է տրոհմամբ, առանձնացմամբ: Իսկ առանձնացման միջոց ծառայում են հնչերանգը և համապատասխան կետադրական նշանները: Օրինակներ.

Էնթան որ՝ տանը միշտ կաքավ լինի: Կամ արջի միս: Կամ եղնիկի (37, 129): Որոնում են այն, ինչ չկա: Կամ թվում է, թե չկա (56, 254): Հետաքրքիր է՝ ինչպե՞ս է նա գլուխ հանում այդ բարդ կառուցվածքից: Կամ թեկուզ հենց մերենայի ծուխը, աղմուկը (32, 11, 1974): Գուցե երկուսի հայրերն էլ նույն լեռներում են ծնվել, անցել են գաղթի նույն ճամփաներով, կիսել նույն կում ջուրը: Կամ՝ տարբեր, ի՞նչ նշանակություն ունի (76, 187):

Երբեմն այս շաղկապն արտահայտում է հավելում՝ թվարկումով, միանալով հավելյալական ուրիշ շաղկապների (և, նաև, էլ): Թվարկման դեպքում կամ շաղկապը կրկնվում է.

Կամ պառկում էր ծիրանու տակ, կամ քնում ժայռի շվարում, կամ էլ մեջքի վրա դառնում, ոտքերը ձգում (8, 51):

Այս շաղկապով կարող են միանալ և հարցում արտահայտող կապակցություններ.

Բայց արդյո՞ք Օսկարը չգիտեր, թե որտեղ է տոսայան խորհրդանշանով աղջիկը: Կամ ինչու պետք է իմանար (56, 48):

Ինչպես տեսնում ենք, համադասական շաղկապները ժամանակակից հայոց լեզվում կարող են գործածվել նաև որպես հավելական միավորների կապակցման միջոցներ: Եվ հենց այս տեսակետից էլ դրանք միանման չեն: Այդ շաղկապների մի մասը համեմատաբար ակտիվ է ու գործուն (և, ու, իսկ), հավելական կառույցների հետ ավելի հաճախ է հանդես գալիս, և, հատուկ լինելով նաև խոսակցական լեզվին, ունի գործածության լայն ոլորտ: Իսկ մի մասը (բայց, սակայն, կամ) չունի այդպիսի ակտիվություն և կիրառության ավելի նեղ շրջանակներ է ընդգրկում: Այս կապակցությամբ պետք է նշել նաև, որ ժամանակակից հայերենում նկատվում է համադասական շաղկապներով հավելական կառույցների կիրառության ոլորտների ընդլայնման միտում:

Համադասական շաղկապներով հավելական կառույցներն ունեն ամենատարբեր նշանակություններ: Այդ նշանակությունները կարող են հանդես գալ ինչպես առանձին-առանձին, այնպես էլ միասնաբար, տարբեր հարաբերությունների ներթափանցումներով, և հաճախ անհնար է լինում դրանց միջև որոշակի անջրպետ անցկացնել: Բայց բազմազանությամբ հանդերձ այդ նշանակություններն ունեն մեկ ընդհանրություն. դա այն է, որ նրանք բոլորն էլ, վերջին հաշվով, արտահայտում են հավելական հարաբերություն: Սակայն շաղկապներով միացած կառույցների նշանակությունների այս ընդհանրությունը չպետք է տարածել շաղկապների նշանակությունների վրա: Ինչքան էլ և, ու, իսկ, բայց, սակայն, կամ շաղկապներով կառույցներն ընդհան-

րանան մեկ՝ հավելական նշանակությամբ, այնուամենայնիվ և, ու շաղկապներն իրենց ընդհանուր հատկանիշով միավորիչ շաղկապներ են, իսկ, բայց, սակայն շաղկապները ներհակական, կամ-ը՝ տրոհական:

1.2. ՄՏՈՐԱՊԱՍԱԿԱՆ ՇԱՂԿԱՊՆԵՐՈՎ

Ստորադասական շաղկապները հավելական նշանակությամբ գործածվելիս կարող են կապակցել բարդ նախադասության բաղադրիչները, այսինքն հանդես գալ բարդ միավորի կազմում:

Պատճառն այն էր, որ նա մտադիր չէր այդքան շուտ թողնել պայքարի ասպարեզը, ինչպես ինքը հետո խոստովանեց (64, 262): Շուրթերն սկսեցին դողալ, և ներսում մի տհաճ սառնություն զգաց, որ պատահում էր իր հետ զայրույթի պահերին (48, 46):

Սակայն այսպիսի կիրառությունները համեմատաբար քիչ են, օգտագործվող շաղկապների թիվն էլ սահմանափակ է, և ինչպես արդեն նշվել է հավելական կառույցների ընդհանուր բնութագրության ժամանակ, ստորադասական շաղկապներով միացած կառույցները հավելական նշանակություն են ձեռք բերում հատկապես իրենց առանձնացվածության շնորհիվ, գլխավոր նախադասությունից տևական դադարով անջատված լինելու շնորհիվ: Խոսակցական լեզվում այդ անջատվածությունը դրսևորվում է համապատասխան հնչերանգով, ձայնի բարձրության և տեմբրի համապատասխան փոփոխություններով, իսկ գրավոր խոսքում՝ վերջակետի, միջակետի կամ կախման կետերի միջոցով: Հենց սրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ ստորադասական շաղկապներով հավե-

լական կառույցները հիմնականում դրվում են վերջակետից հետո:

Այս առումով պետք է նշել նաև հետևյալը. թվում է, թե բոլոր ստորադասական շաղկապներն էլ կարող են հանդես գալ որպես հավելական կառույցների միացման միջոցներ՝ դրվելով վերջակետից հետո: Սակայն այդպես չէ: Դա պարզապես վկայում է, որ այս շաղկապները հավելական կառույցների հետ գործածվելու ներունակ մեծ հնարավորություններ ունեն:

Դրանց քննության ընթացքում ելնում ենք մեր ձեռքի տակ եղած նյութերից և հիմնականում նշում ենք դրանց գլխավոր կիրառությունները:

Ստորադասական շաղկապները բազմազան նշանակություններ ունեն և ըստ իրենց արտահայտած իմաստի լինում են տարբեր տեսակի: Ուստի և քննենք, թե դրանք ինչպես են արտահայտում հավելական իմաստ:

1. Ամենաակտիվն այս տեսակետից որ շաղկապն է: Վերջինս կարող է ձևավորել հավելական կառույցներ մեկնության իմաստով.

Հոգնածությունը ամեն ինչ մոռացնել էր տվել: Ամեն ինչ: Որ մարդ էս, որ հեռվում հայրենիք ունես, հարազատներ (ԳԹ): Գրում էս, որ ինձ շատ էս կարոտել: Որ բոլորդ եք կարոտել: Որ ամեն օր հիշում եք (11, 9, 1975):

Այս շաղկապով կառույցները կարող են արտահայտել հարցում.

Ինչու՞ մեռավ նա, ինչու՞: Որ ինձ պատժի՞, որ վրե՞ժ լուծի ինձնից (41, 265): Ինչու՞ են դողում մատներս այս ծով ուրախությունից: Որ էս ժամանակի խոր ծալքերից մի թույլ գրիչով վե՞ր հանեցի իմ մանկության ընկեր Անդոյի հերոսական դեմքը (8, 124):

Երբեմն որ շաղկապով հավելվող կառույցը կարող է լինել տրված հարցի բացատրությունը կամ բովանդակել լրացուցիչ տվյալ, ճշգրտում՝ հարցման առնչությամբ: Այսպես.

Մի թե նա չի հասկանում, որ դա նրա պարտքն է: Որ նրանից ավելի լավ այդ գործից ոչ որ գլուխ չի հանի (64, 382): Վարագավանքի պահակ կարմիր շունը հիշում է: Որ միասին գնացել էինք: Որ քեզ հետս տարել էի (37, 128): Նանի, էն, որ լվացել էիր ու ր է... Որ լվացել էիր, էդտեղ փռած էր (37, 136):

Որ շաղկապով միացած կառույցները կարող են արտահայտել ժամանակային հարաբերություն.

Հենրիկ որդին քաղաքում ուրիշ կանանց հետ է: Ինքը գիտի՝ դա երբվանից է սկսվել. որ ծխել սկսեց (37, 198):

- Օ՛, էդ մի քանի տարի հետո, - խորհրդավոր փսփսաց տղան: - Որ պսակվենք, նոր պետք կգա (46, 94):

Այս շաղկապով հավելյալ կառույցները կարող են արտահայտել և պատճառահետևանքային հարաբերություն.

Երևի նաև ծիծաղում էս նրա վրա, որ այդքան բարի է: Որ դյուրահավատ է այդքան (50, 247): Իսկ մեղավորը էս էի, որ լքել էի նրան: Որ ամենադժվարին պահին թողել էի նրան մենակ (62, 564):

Որ շաղկապով կառույցների նմանատիպ կիրառությունները բնորոշ են հատկապես իռոսակցական լեզվին:

Այս շաղկապով կառույցները կարող են ցույց տալ նպատակ.

Մարդը վազում էր ամպամած երկնքի տակ, վազում էր շնչասպառ: Որ հեռանա ամպերից: Որ հասնի մարուր երկնքի (11, 3, 1975): Ու այդ երգի ռիթմի տակ գործվում են կտորեղենի մետրերը: Որ դառնան հետո ծաղկազարդ երես-

սրբիչներ (Ն.): Նրանք կարծում են, որ մենք էլ հենց դրա համար ենք ստեղծված: Որ մեզ ֆրոացնեն (64, 142):

Կարող են և արտահայտել պայման: Օրինակներ.

Խեղդում եմ, ոնց եմ խեղդում: Որ ժամացույց վիներ՝ մի ժամից ավելի խեղդում եմ (37, 114): Հեքիաթի թագավորին թախտից չեն գցել, իսկ Նիկոլին գցել են: Որ չես հասկանում՝ մեջ մի ընկի (5, 133):

2. Հավելական կառույցները կարող են կազմվել նաև ժամանակի իմաստ ունեցող ստորադասական շաղկապներով (երբ, մինչև, քանի դեռ, հենց, հենց որ և այլն): Դրանք մի դեպքում կարող են արտահայտել ընդհանրական ժամանակ կամ ցույց տալ գերադաս նախադասության և հավելվող մասի գործողությունների, եղելությունների միաժամանակություն.

Գիտե՛ս, զինվոր, թե երբ է մեռնում կենդանի արարածը: Երբ կատարում է իր պարտքը: Երբ սերունդ է թողնում (ԳԹ): Դա այն է, երբ ինչ-որ բան բռնում է ձեր շնչառությունը... Երբ սիրտը տրոփում է ինչպես ջիզիթի երիվարը լեռնանցքում: Երբ կուրծքը լցվում է ուրախությամբ... (22):

Մի այլ դեպքում այդ կառույցների միջոցով դրսևորվում է տարածամանակություն, այսինքն հավելվող մասում արտահայտված գործողությունը, իրողությունն ու երևույթը նախորդում կամ հաջորդում են գերադաս նախադասության մեջ նշված գործողությանը, իրողությանն ու երևույթին.

Պահեստից մի քիչ պանրից, յուղից դուրս գրի, յուլա գնանք: Մինչև բերրը բաշխենք (53, 231): Միայն այդպես պետք է վարվել: Քանի դեռ բուրբը չեն հասկացել գործի կարևորությունը (40, 32): Պատրաստ էր բացահայտելու ողջ ճշմարտությունը: չենց որ նորից անմեղություն խաղա (ԵԵ):

3. Պայմանի ստորադասական շաղկապներից հավելական կառույցների հետ ավելի հաճախակի գործածվում է եթե շաղկապը.

Հիմա՝ ուղիղ ճանապարհով դեպի տուն: Եթե, իհարկե, «կնիկը տուն թողնի» (11, 8, 1975): Իսկական ջենտլմենը իսկույն երևում է: Եթե նույնիսկ մի քիչ խմած է (ԳԹ):

Եթե-ին իր իմաստով շատ մոտ է թե շաղկապը, սակայն վերջինս (պայմանի իմաստով) ավելի բնորոշ է ժողովրդախոսակցական լեզվին և գիտական, հրապարակախոսական խոսքի մեջ քիչ է գործածվում:

Կտեսնես, պատերազմից հետո ավելի վատ կլինի... Թե ողջ մնանք (66, 61): Անպայման կբերեմ: Թե քեզ լավ պահես: Թե իսկոք մնաս (ԵԵ):

Պայմանի եթե միայն, միայն թե շաղկապները հավելական կառույցների հետ գործածվելիս մասնավորում, սահմանափակում են այդ պայմանը, այն տարբերությամբ միայն, որ առաջինը մասնավորման հետ նաև շեշտում է պայմանը, իսկ երկրորդը հաղորդում է նաև զիջական որոշ երանգ.

Իսկ երբ ձեռքը դրամ էր ընկնում, առաջին իսկ պատահած մարդը կարող էր այն կորզել. եթե միայն որևէ խղճահարույց պատմություն աներ (64, 155): Հենց ոտքով էլ կգնա: Միայն թե հիմա դեռ չորանալ է պետք (32, 9, 1975):

4. Որպես հավելական կառույցների միացման միջոց հանդես են գալիս նաև պատճառի ու հիմունքի ստորադասական շաղկապները: Ամենատարածվածը որովհետև շաղկապն է.

Ծառերն ինչու՞ են հիվանդանում, գիտե՞ս, Մարիամ: Որովհետև տնկիներն են հիվանդ: Կորիզները: Որովհետև, չգիտեմ երբ, ճղակոտոր են արել (ԳԹ): Դարբին Գևորգը գյուղամեջով գնում էր մենակ, որովհետև տղա չունեցավ:

Որովհետև աղջիկ էլ չունեցավ (46, 238): Իմ ինքնասիրությունը բնավ էլ վիրավորված չէ, կյանքումս երբեք այսքան լավ չեմ գգացել: Որովհետև գիտեմ ճշմարտությունը (64, 142):

Երբեմն այս շաղկապը անմիջապես չի հաջորդում վերջակետին: Նրանից առաջ կարող է դրվել որևէ ուրիշ բառ.

Պիտի չհարցնեմ պատճառը: Պարզապես, որովհետև գիտեմ պատճառը (38, 429):

Որպես կապակցման միջոց կարող է հանդես գալ և քանի որ շաղկապը.

Քսանհինգ հազար վճարել բեռնակիր հովատակին՝ խենթություն է: Քանի որ բեռնակիր ձին բեռնակիր ձի է (24, 460):

Իսկ մանավանդ (որ), նամանավանդ (որ) շաղկապները հավելվող կապակցություններին տալիս են ընդգծման, սաստկացման երանգ.

Ես շատ կուզենայի պատմել նրանցից ամենաուրախի մասին: Մանավանդ որ բոլորս էլ, ինչքան նկատել եմ, նախընտրում ենք ուրախ պատմություններ (19, 5): Ջահել աղջիկը հիմի իրավունք չունի կինո գնալու: Մանավանդ հեռուստացույց էլ ունեք, փառք աստծու (46, 17):

Երբեմն սրանց միանում են ուրիշ շաղկապներ (եթե, երբ և այլն): Այդպիսի դեպքերում այս շաղկապների արտահայտած պատճառահիմունքային նշանակությանը զուգակցվում է նաև միացած շաղկապների արտահայտած իմաստը.

Եթե նա քո կողքին է, անպայման մի թևով կփաթաթվի քեզ: Մանավանդ եթե առաջին անգամ ես նրանց տանը (46, 229): Նրան արգելում էին իրենց մոտ եկած հյուրերի հետ տեսնվել: Մանավանդ երբ որ նրանք երիտասարդներ էին լինում (62, 563):

5. Նպատակի ստորադասական շաղկապներից հավելական կառույցների հետ գործածվում է գերազանցապես որպեսզի շաղկապը:

Հենց այդպիսին պետք է լինի դերյուտը՝ վառ, հետաքրքիր, հիշվող: Որպեսզի մայրաքաղաքի մեծ ազդագրի վրա առաջին անգամ հայտնված անունը ցանկանաս պահել հիշողությանդ մեջ:

Միայն թե շաղկապը նույնպես կարող է միացնել հավելական կառույցներ՝ ցույց տալով նպատակի մասնավորում, սահմանափակում և դրանով իսկ ընդգծել այդ մասնավորված նպատակը:

Ամեն բանի համաձայն եմ, ամեն բան կտանեն: Միայն թե իմ ձեռք բարուր լինի (53, 267):

Ավելի հազվադեպ են ինչ է թե, թե ինչ է շաղկապներով կառույցները: Մրանք հիմնականում խոսակցական բնույթ ունեն և այդտեղից էլ անցել են գրական լեզվին: Այս շաղկապներով միացած կառույցները ցույց են տալիս նպատակ, որն այնքան էլ կարևոր չի համարվում կամ հանուն որի չարժե, որ կատարվի գերադաս նախադասությամբ նշված գործողությունը կամ իրողությունը:

Դա այն մարդն է, որ կարողության կեսը տվեց հեքիմին: Ինչ է թե սա բուժի հիվանդությունը (53, 76): Մոդուն: Ամբողջ օրը հենց միայն նրան հաճոյանալով է զբաղված: Թե ինչ է աչք մտնի (58, 8, 1975):

6. Ջիջական շաղկապներով միացած կառույցներն արտահայտում են զիջական իմաստ և ցույց են տալիս, որ գերադաս նախադասությամբ նշված գործողությունը, իրողությունը չեն բխում հավելվող մասի մտքից: Նման կիրառություններով կարող են հանդես գալ զիջական թեև, չնայած, թեպետ և այլ շաղկապներ:

Բայց եթե սովորություն է, ի՞նչ կարող ես անել: Թեև դա ծայր աստիճան դժվար բան է (24, 513): Տեմպերը դեռևս գոհացուցիչ չեն: Չնայած անցյալ տարվա համեմատությամբ աշխատանքներն ընթանում են հաջող (Ն.): Դուրս եկա դպրոցից և աշխատանքի անցա բաղադրի ավտոձեռնարկություններից մեկում: Թեպետ մայրս համաձայն չէր (Ն.):

Ինչպես երևում է բերված նախադասություններից, գերադաս մասում արտահայտված իմաստը, նրանում նշված գործողությունը, իրողությունը ոչ թե բխում են հավելվող նախադասության իմաստից, այլ հակառակ են դրան:

7. Մակաբերական շաղկապներով միանում են այնպիսի նախադասություններ, որոնց բովանդակությունը ~~ե~~ակաբերվում, բխեցվում է նախորդ ասվածի իմաստից: Այս շաղկապներով հավելական կառույցները հանդես են գալիս որպես նախորդ ասվածի հիման վրա կատարված տրամաբանական հետևություն, եզրակացություն, որպես հիմնական արտահայտությունից մակաբերված դատողություն: Ինչպես.

Մուրճի պոչն է երևում միայն, իսկ գլուխը թաղվել է կավահողում: Ուրեմն մուրճն ահագին ծանր է (10, 62): Աստված ինքն է սահմանել ամուսնությունը. այնպես որ այդ բանը ամոթ չի համարվում (20, 60): Մարդ լինելու ձգտումը նույնքան մեծ հաճույք էր պատճառում: Ուստի նա վճռեց կուսակցական դպրոց գնալ (55, 20):

Պետք է նշել, որ այս շաղկապներից ուրեմն-ը հատուկ է ժողովրդախոսակցական լեզվին, իսկ մյուսներն ավելի գրքային բնույթ ունեն:

Հաճախ այս շաղկապներին կարող է միանալ նաև և-ը՝ կազմելով այսպիսով նոր բաղադրյալ շաղկապներ.

Դա ամենակարճ, ամենահարմար ճանապարհն է. ուստի և այնտեղից անցնում էին ամեն տեսակ մարդիկ, և շատ հարուստներ (20, 49): Թե չկա՝ ավելի վատ. ուրեմն և անարդար գործն աշխարհի մարդոց ձեռաց գործն է (10, 93): Այն, ինչ թատերգություն ենք անվանում, ոչ այլ ինչ է, եթե ոչ մարդագիտություն իր լայն առումով. հետևաբար և մարդագետ պետք է լինի դերասանը... (65, 9):

8. Համեմատության շաղկապներով միացած հավելական կառույցների միջոցով գերադաս նախատեսության մեջ արտահայտված գործողությունը, առարկան, հատկանիշը և այլն համեմատվում են մեկ այլ գործողության, առարկայի, հատկանշի հետ: Եվ, ինչպես նշում է Ս.Աբրահամյանը⁷⁹, այս շաղկապներով կատարվող համեմատությունը երկու տարբեր բնույթ ունի.

1. Համապատասխանության ու նմանության,

2. անհամապատասխանության ու տարբերության:

Համապատասխանության ու նմանության հարաբերությամբ համեմատություն են արտահայտում ասես (թե), կարծես (թե), ոնց (որ), ինչպես (որ) շաղկապներով հավելական կառույցները: Ընդ որում, ասես թե, ոնց որ, ինչպես որ բաղադրյալ ձևերն առավելապես հատկանշական են ժողովրդախոսակցական լեզվին, իսկ մյուսները գրքային բնույթի են:

Չյունը ճոճում էր նրանց ոտների տակ: Ասես թե տրտնջում էր ձյունը (55, 27): Գյուղի գործերից չէին խոսում, որ նա մի բան հասկանար: Ոնց որ հրեշտակներ էին, իջել էին երկնքից (53, 55):

⁷⁹ Ս.Գ. Աբրահամյան, *Ճամանակակից հայերենի քերականություն*, Ե, 1965, էջ 221:

Իսկ քան, քան թե շաղկապներով հավելական կառույցներն արտահայտում են համեմատություն տարբերության ու անհամապատասխանության հարաբերությամբ: Ինչպես.

Դա ինձ՝ մրցավարիս, ավելի էր զայրացնում, քան նրան: Քան նրա բոլոր երկրպագուներին (ՀՖ): Եվ ավելի լավ չէ՞, արդյոք, թեկուզ այսպես տառապել, քան թե լինել ստորացված: Քան թե դառնալ ծիծաղելի (11, 160):

9. Ստորադասական կառուցվածքներում որպես հավելական միավորների միացման միջոց հանդես են գալիս նաև բացահայտման շաղկապները՝ այսինքն, այն է:

Մի դեպքում սրանց միջոցով կարող է բացահայտվել ամբողջ հիմնական արտահայտությունը, ինչպես.

Այժմ հարկավոր էր անցնել գործի: Այսինքն՝ սկսել խողովակների տեղադրումը (ՄՀ):

Մի այլ դեպքում այդ բացահայտումը կարող է վերաբերել գերադաս նախադասության որևէ անդամի.

Երկյուղածությամբ մոտեցանք այդ կիսաքանդ ավերակին: Այսինքն մեր նախկին տանը (ԳԹ):

Այսպիսով, ժամանակակից հայոց լեզվում ստորադասական շաղկապներն էլ կարող են ծառայել որպես հավելական կառույցների միացման միջոցներ, և դրանց հիմնական առանձնահատկությունը տևական դադարից հետո հաջորդելն է: Մի հանգամանք, որ կրկին հաստատում, ցույց է տալիս հավելական կառույցների ընդհատական բնույթը:

Ստորադասական շաղկապներով հավելական կառույցները նույնպես հանդես են գալիս որպես լրացուցիչ հաղորդում, դիտողություն, ճշգրտում, բացատրություն և այլն, մի բան, որ հավելական կառույցների իմաստային հիմնական հատկանիշն է: Բացի այդ, ինչպես նկատեցինք,

ստորադասական շաղկապներով հավելական կառույցները իմաստային այս հիմնական հատկանշի հետ միասին կարող են արտահայտել նաև այլ հարաբերություններ (ժամանակային, պատճառահիմունքային, նպատակի, զիջական և այլն), որը բխում է շաղկապների բուն իմաստից:

Պետք է նշել նաև, որ տեսականորեն ինչքան էլ բոլոր ստորադասական շաղկապներն ունեն հնարավորություններ հավելական կառույցների հետ հանդես գալու համար, ապա գործնականում դրանք միանգամայն տարբեր են: Մի խումբ շաղկապներ (որ, որովհետև, եթե, երբ) ավելի հաճախակի են հանդիպում և անհամեմատ շատ կիրառություններ ունեն:

Այս շաղկապներն առանձնանում են նաև իրենց բնույթով: Դրանց մի մասը շատ ավելի հասուկ է ժողովրդախոսակցական լեզվին, իսկ մյուսները գերազանցապես գրքային բնույթ ունեն:

1.3. ՀԱՎԵԼԱԿԱՆ ՇԱՂԿԱՊՆԵՐՈՎ

Հավելական կառույցների իմաստային բազմազանությունը, ոճական, գործառական և քերականական առանձնահատկությունները հիմք են դարձել, որ լեզվում աստիճանաբար առանձնանա ոչ միայն շաղկապների, այլև առանձին բառերի որոշակի խումբ, որը ծառայում է հավելական հարաբերություն արտահայտելուն:

Շաղկապների և բառերի այս խումբը, ինչքան էլ միասնական է մեկ ընդհանուր հատկանշով, այն է ցույց տալ հավելական հարաբերություն, այնուամենայնիվ տարափեղկվում է երկու հիմնական տեսակների. 1. հավելական շաղկապներ, 2. շաղկապական արժեք ունեցող լեզվական այլ միջոցներ:

Հավելական են այն շաղկապները, որոնց իմաստային, ոճական և գործառական հիմնական արժեքը հավելական հարաբերություն արտահայտելն է, այսինքն դրանք բացառապես հանդես են գալիս հավելական կառույցների հետ և այլ կիրառություն գրեթե չունեն:

Իմաստային և քերականական ընդհանրություն ունենալով հանդերձ (արտահայտում են հավելական հարաբերություն և ծառայում են որպես հավելական կառույցների միացման միջոց)՝ այս շաղկապներն իրարից տարբերվում են իրենց կազմությամբ՝ լինում են պարզ և բաղադրյալ:

Անկախ այն բանից՝ այս շաղկապները բառեր են միացնում, նախադասություններ, թե խոսքի առանձին հատվածներ, սրանց դրսևորած հարաբերությունը միշտ հավելական է: Այս շաղկապները սովորաբար ավելի սերտ կապի մեջ են գտնվում կառույցի որևէ անդամի հետ, որը սրանց շնորհիվ որոշակիորեն առանձնանում է մյուսներից, շեշտվում: Էլ, ևս շաղկապները հիմնականում դրվում են կապակցության այդ շեշտված անդամից հետո:

ԷԼ շաղկապը

Այս շաղկապով միացած կառույցները ցույց են տալիս փաստերի, իրողությունների, մտքերի հավելում: Ինչպես.

Արդեն վաղուց փտել է լաջվարդն էլ, ոսկե մամուռի նման մարմինն էլ (8, 46): Բայց վրեժն էլ նպատակ ունի, նահատակությունն էլ, համոզմունքն էլ (3,144): Թրջված տեղերը դարձել են թափանցիկ ու շողում են: Այտերն էլ են շողում, բաց թևերն էլ (35, 290): Ինչ նախշուն ուսեր ունես, Մերի: Երեսդ էլ է նախշուն, բոյդ էլ: Երանի քեզ (26, 11):

Այս շաղկապով կառույցների տարածված կիրառություններից է այն դեպքը, երբ հիմնական արտահայ-

-տության որևէ անդամը կրկնվում է, և հավելվող փաստերը հանդես են գալիս որպես այդ կրկնվող անդամի հետ անբաժանելիորեն կապված միասնություն:

Նա չուխան շարտեց, չուխայի հետ էլ՝ ավելորդ մտքերը (8, 7): Վիրավոր արջի ամբողջ զայրույթով իրեն է քաշել գանգի մորթին, մորթու հետ էլ գլխի մազերը, ունքերը, աչքերը (8, 19):

Միայն այս շաղկապի կրկնությամբ երբեմն ստացվում է տարբեր կառույցների մի հաջորդական շղթա, որը կարող է լինել ինչպես որևէ ամբողջական միտք, այնպես էլ որևէ նկարագրություն, պատկեր:

Ընտանիքով՝ կինն ու երեք երեխան նստած, սար էին բարձրանում. խուրջինն էլ տակները վառարանն էլ կողքից կախած. հավերն էլ թամբից կապած (37, 83): Դու մեզնից վարժ ես կարդում, լավ էլ ձայն ունես... Դու տերտեր էլ կղառնաս, վարդապետ էլ կձեռնադրվես (57, 4):

Շատ բնորոշ է և այս շաղկապի կրկնության միջոցով թվարկում արտահայտելը, մի բան, որ շատ ցայտուն է երևում ժողովրդախոսակցական լեզվում կամ այդ ոճի գրական ստեղծագործություններում, ընդ որում, միայն այսպիսի կիրառությունների ժամանակ է էլ շաղկապը դրվում կառույցից կամ նրա շեշտված անդամից առաջ:

Գալիս են ու էս տունը պահում. էլ արջեր, էլ գայլեր, էլ փղեր, էլ աղվեսներ, ո՞ր մեկն ասեմ ասեմ (33, 111): էլ գող փիտ, էլ քաչալ շուն (21, 223): էլ գերմանացի, էլ ֆրանսիացի, էլ անգլիացի: Յուրաքանչյուրը խփեց իր ծնկան (59, 82):

Ժխտական կառուցվածքներում նույնպես էլ շաղկապը կարող է հանդես գալ որպես կապակցման միջոց: Միայն թե այս դեպքում դրա հավելական իմաստը զուգակցվում է կառուցվածքի ընդհանուր ժխտական իմաստին, այսինքն էլ շաղկապով հավելվում են այնպիսի փաստեր, իրո-

դուրսններ, որոնք ժխտվում են՝ պայմանավորված հիմնական արտահայտության բովանդակությամբ: Այդ հավելում-ժխտումը կարող է կատարվել ժխտական ոչ մասնիկի և էլ շաղկապի միասին գործածությամբ.

Թուղթ չէր խաղում, ոչ էլ շախմատ, ոչ էլ բիլիարդ, ոչ էլ նարդի (43, 53): Անտեսանելի է հայոց զանգը: Դա ոչ երկնքից է կախվում, ոչ էլ երկրի խորքերում է (31, 213):

Այդ հավելում-ժխտումը կարող է դրսևորվել նաև էլ շաղկապի ու բայի կամ օժանդակ բայի ժխտական ձևերով: Օրինակներ.

Ազարիան չէր տեսնում նրա արցունքները, ժպիտն էլ չէր տեսնում (26, 54): Երիտասարդը բեղեր չունեի, բարձրահասակ էլ չէր (60, 39): Նա տուն չունեի, կին էլ չունեի, հարազատներ էլ (4, 92):

Հարցական կառուցվածքներում նույնպես էլ շաղկապը կարող է ազատորեն գործածվել:

Բանտում օդը ծանր է, չէ՞, ներքնակն էլ կոպիտ է, չէ՞ (19, 275): Ուր նրանք են սավառնում, դու նրանց հետ ես: Մի քտո էլ է նրանց հետ ճախրում (23, 30):

Ինչպես արդեն նշվել է, էլ շաղկապը ավելի սերտ հարաբերության մեջ է լինում նախադասության այն անդամի հետ, որին անմիջապես կապվում է: Ահա, հենց այս հատկությամբ էլ տարատեսակ ու տարաբնույթ են էլ շաղկապի կիրառությունները: Միանալով տարբեր բառերի՝ այն կարող է արտահայտել տարբեր իրողություններ: Այսպես, գործածվելով ժամանակ ցույց տվող բառերի ու մակբայների հետ, այն կարող է մատնանշել ժամանակ.

Եվ հանուն դրա նրանք շատ բան էին զոհաբերում: Երբեմն էլ կյանք (12, 20): Մայլի առեղը Անդրյին դուր չէկավ. դեռ ծառը կտրելիս էլ դուր չէր եկել (37, 159):

Այս շաղկապը կարող է գործածվել չափ ու քանակ ցույց տվող բառերի հետ՝ այդպիսով մատնանշելով չափ ու քանակ.

Նրանք կյանքում ընդամենը մի քանի անգամ են միս կերել: Մի քանի անգամ էլ ձուկ են կերել (Ա.վ.): Մի քանի բաժակ էլ դատարկեցին, մի քիչ էլ ուրախացան, մի քիչ էլ տխրեցին (46, 213):

Այս նույն կարգով էլ շաղկապը, միանալով ուրիշ բառերի, կարող է մատնանշել տեղ, ձև և այլն:

Ի տարբերություն հավելական մյուս շաղկապների, էլ-ը օժտված չէ այլ շաղկապների հետ ազատորեն միանալու հատկությամբ: Այս տեսակետից նա չեզոք է: Թերևս բացառություն է կազմում կամ շաղկապի հետ համատեղ գործածությունը, այն էլ թվարկումների դեպքում (կամ եկել է, կամ էլ կգա): Այս կապակցությամբ պետք է նշել, սակայն, որ էլ շաղկապը մեկ թվականի հետ ոչ միայն հաճախակի հանդիպում է ժողովրդախոսակցական լեզվում, այլև գրական լեզվում, և դրանց այդ միասնական գործածությունը (մեկ էլ) կարծես ինքնուրույն շաղկապական արժեք է ձեռք բերել.

Կյանքս արդեն անցել է, ինձ մնում է միայն աղջիկներիս վրա ուրախանամ, մեկ էլ նրանց հարսանիքին պարզամ (11, 9, 1975): Լոռությունը խանգարում էին ճագարները միայն, մեկ էլ արտույտների երգն էր լսվում (11, 89):

Էլ շաղկապի մասին պետք է ասել նաև, որ թե՛ ծագմամբ, թե՛ բնությամբ այն ավելի հատուկ է ժողովրդախոսակցական լեզվին և վերջինիս միջոցով էլ հենց անցել է գրական լեզվի մեջ:

ԵՎՍ շաղկապը

Այս շաղկապն իր գործածության ոլորտներով, կիրառությունների բազմազանությամբ բավական զիջում է նախորդին: Գերազանցապես զրքային բնույթ ունի և համեմատաբար քիչ է հանդիպում:

Կարող է արտահայտել փաստերի, իրողությունների հավելում.

Մտայլ էր Եղիշը: Հոնքերը մթազնած էին, չածիլված դեմքը ևս (26, 36):

Գործածվելով առավել մակբայի հետ՝ ասվածին հաղորդում է սաստկացում: Այդ դեպքում դրանով միացած մասը առանձնացվում է, ձեռք բերում որոշակի շեշտվածություն.

Ես անկարող եմ երաժշտությամբ զբաղվել, առավել ևս՝ ստեղծագործել (58, 12, 1974):

Իր իմաստային արժեքով այս շաղկապը շատ մոտ է նույնպես, նմանապես դերանուններին և գրեթե միշտ ևս-ը կարելի է փոխարինել դրանցով: Այսպես.

Ոչինչ չգիտենք նրա մասին, ևս ևս ձեր մասին ոչինչ չգիտի (12, 36):

Հմմտ. ... նա նույնպես ձեր մասին ոչինչ չգիտի:

Եվս շաղկապը կարող է փաստերի, իրողությունների հավելում արտահայտել նաև կրկնությամբ՝ գործառությամբ նմանվելով էի մակբային.

Եվս մի փարչ չափից ավել, Եվս մի գավ թունդից ըմպում

Ու սիրտն ի սեր ուրախության գլխի դեմ է ապստամբում (59, 123):

Հմմտ. էի մի փարչ, էի մի գավ...

Բաղադրյալ հավելական շաղկապները նույնպես ունեն հավելական իմաստ և արտահայտում են հավելական հարբերություն քառերի, նախադասությունների և խոսքի առանձին հատվածների միջև: Հենց այդ ընդհանուր հատկանշով էլ նրանք միավորվում են մեկ խմբի մեջ: Բաղադրյալ հավելական շաղկապներն են՝ նաև, այլև, ինչպես և, ինչպես նաև, նույնպես և, նույնպես էլ, այն էլ, ոչ միայն... այլև, ինչպես... այնպես և և այլն:

Ինչպես դժվար չէ նկատել, այս շաղկապներն իրենց հերթին առանձնանում են որպես կցական (նաև, այլև) և որպես հարադրական (ինչպես նաև, նույնպես էլ և այլն) բաղադրյալներ: Իհարկե, հարադրական բաղադրյալների մեջ էլ պետք է առանձնացնել զուգադրական շաղկապները (ոչ միայն... այլ նաև, ինչպես... այնպես էլ և այլն):

Ահա, հաշվի առնելով նաև այս շաղկապների երանգային-կիրառական տարբերություններն ու մասնավոր հատկանիշները՝ նպատակահարմար ենք գտնում բաղադրյալ հավելական շաղկապների քննությունը կատարել ըստ այս առանձնացված խմբերի:

Կցական բաղադրյալներն են՝ նաև, այլև:

ՆԱԵՎ շաղկապը

Սրանով միացած կառույցներում ասվածին հավելվում է նոր միտք, որևէ նոր փաստ կամ իրողություն: Ինչպես.

Ես մտածում եմ Ներսես Աշտարակցու պետական խելքի, նաև բազկի քաջության մասին (7, 201): Խնդրանք ու վախ կար նրա աչքերի մեջ, նաև անձնապես վշտացած լինելու մի զգացում (11, 73): Ավտոյի թափքում մի նորաբնակի վերջին իրերն էին, նաև մի խնոցի (10, 61):

Հավելյալական կառույցների հետ այս շաղկապի տարածված կիրառություններից է այն դեպքը, երբ որպես բաղադրիչների կապակցման միջոց, շաղկապի հետ միասին հանդես է գալիս որևէ ընդհանուր անդամ: Այդ ընդհանուր անդամը մի դեպքում կարող է կրկնվել:

Չափազանց ցավում եմ ձեր կողմերում տարածված խոզաժանտախտի լուրը լսելով: Ցավում եմ նաև, որ հնարավոր եք համարում դրա պատասխանատվությունն ինձ վրա դնելը (24, 39): Գիտեք, որ նա արնախում է, ինչպես կատաղած շունը: Գիտեք նաև, որ պճնամուլ է, շվայտ ու շռայլ (7, 87): Ներսեսը զոջացել էր իր արարքը: Չոջացել էր նաև որսկան Մանվելը (26, 50): Կյանքը դեկավարողը միայն սերը չէ: Կյանքը դեկավարվում է նաև փողով (50, 301):

Մի այլ դեպքում այդ ընդհանուր անդամը կարող է պարզապես գեղջվել: Նման դեպքերում նրա հնարավոր կրկնությունը հասկացվում է մտքից:

Ծիծաղում է երկրաբանության վրա, նաև բժշկության վրա, նաև գրականության վրա (46, 70): Նրա հետ ինքն իրեն ուժեղ ու հպարտ էր զգում, նաև բախտավոր (26, 24): Վեհ բնության մեջ ապրող մարդն էլ վեհ է լինում, նաև խիզախ ու չքնկճվող (26, 33):

Նաև շաղկապով հիմնական արտահայտությանը միացած մասը կարող է դրվել ինչպես շարահյուսական մեկ միավորի ներսում, այնպես էլ նրանից դուրս՝ վերջակետից հետո, և լինել կամ նախադասության անդամ, կամ առանձին ամբողջական նախադասություն:

Ակամա ոտքի ելավ, տնքաց ու անորոշ հայիոյեց: Նաև բեռնատարի համագյուղացի վարորդի նկատմամբ հարազատություն զգաց (10, 61): Կոմբինատում անբավարար է կազմակերպվում բանվորների սննդի մատակարարումը: Նաև հանգիստը (Մետ.):

Այս շաղկապով կապակցությունները կարող են արտահայտել և հարցում.

Բոլորը գնացե՞լ են: Նաև դիրեկտորը (Մետ.): Ասում ես՝ դե՞մ եղան: Նաև դու՞ ես դեմ այդ կարծիքին (Ն.):

Այս շաղկապով հարցական կառուցվածքներում հանդես եկող հավելվող մասը կարող է լինել և հիմնական հարցման պատասխանը՝ հավելական երանգով.

Ինչու՞ միայն պանդոկը: Նաև դեղատունը: Նաև էկեղեցին (56, 319): Հո չեի՞ թողնի, որ իմ ապագա կնոջը ծեծեն, փողերը գողանան: Նաև մեղալիդնը տանեն (19, 19):

Երբեմն այս շաղկապին միանում են ուրիշ շաղկապներ կամ վերաբերականներ, և նման դեպքերում կառույցի հավելական նշանակությանը զուգակցվում է իմաստային այն նրբերանգը, որն արտահայտելու հատկանիշով օժտված է նաև-ին միացած մյուս շաղկապը կամ վերաբերականը: Օրինակներ.

Անկեղծորեն ուզում ենք պատմել մեր մաքուր սիրտ, նաև մանավանդ մեր հուսախաբությունների մասին (11, 11, 1975): Մի անորոշ ցավ խլրտաց իմ հոգում. ու նաև ափսոսանքի ավելի ազնիվ մի զգացում (11, 473): Պիտի ջանար և, ով գիտե, գուցե նաև կարողանար դեռ ուժեղ ու հասուն պահել զերդաստանը (11, 144):

ԱՅԼԵՎ շաղկապը

Սա շատ նման է նաև-ին, նրա պես արտահայտում է հավելում: Սակայն, եթե նաև-ը ցույց է տալիս փաստերի և իրողությունների պարզ հավելում, ապա այլև-ը հավելական իմաստի հետ ունի նաև որոշ սաստկական երանգ.

Նա աչքերը փակում էր երազելու համար, այլև չտեսնելու համար այն, ինչ չէր ուզում տեսնել (2, 178):

Այլև շաղկապը նաև-ից տարբերվում է նա մի քանի հատկանիշներով: Նաև-ը բավական ազատ է իր գործածության տեղի առումով, այսինքն այն կարող է դրվել ինչպես հավելվող մասից առաջ, այնպես էլ հետո: Մինչդեռ այլև-ը չունի այս ազատությունը: Այն դրվում է միայն հավելվող մասից առաջ:

Բացի այդ, նաև շաղկապը, որպես կապակցման միջոց, կարող է իրար միացնել ինչպես նույն նախադասության բաղադրիչները, այնպես էլ առանձին նախադասություններ ու խոսքի տարբեր հատվածներ: Սրանով էլ պայմանավորված է այն հանգամանքը, որ նաև շաղկապը տևական դադարից (վերջակետից) հետո անհամեմատ շատ գործածություններ ունի:

Իսկ այլև շաղկապը գերազանցապես կապակցում է միևնույն նախադասության բաղադրիչներ և քիչ է պատահում, որ այն գործածվի տևական դադարից (վերջակետից) հետո, այսինքն կապակցի առանձին ինքնուրույն նախադասություններ: Ինչպես.

Լուսեղուսից մինչև հիմա լեռներն ի վեր մազլցելով քարե տներ էինք կերտում, աղբյուրների քարե գուռ, մանուկների քարե օրորոց ու մահիճ տաշում: Այլև խորընկա ձորերի պտունկից-պտունկ բարձրաթռիչք կամուրջներ էինք կամարում (31, 200):

Այլև-ը ոչ միայն...այլև գուգադրական շաղկապի կազմում հանդես է գալիս որպես բաղադրիչ, որպես կապակցման մի եզր և այս դեպքում ավելի է շեշտվում նրա սաստկական իմաստը: Բայց այդ մասին կխոսվի քիչ հետո՝ գուգադրական նշված շաղկապի քննության ընթացքում:

Չարադրավոր կազմությամբ հավելական շաղկապները նույնպես լայնորեն գործածվում են ժամանակակից

հայերենում: Դրանք ամենից առաջ այն էլ, նույնպես և (էլ), նմանապես և (էլ), ինչպես և (նաև) և այլ շաղկապներն են:

ՆՈՒՅՆՊԵՍ ԵՎ (ԷՆ). ՆՄԱՆԱՊԵՍ ԵՎ (ԷՆ)
շաղկապները

Իհարկե, նույնպես, նմանապես դերանվանական ձևերը առանց և, էլ շաղկապների օգնության էլ հաճախ են արտահայտում հավելում հանդես գալով որպես հավելական կառույցների միացման միջոց.

Ի՞նչն է եղել այս անգամ յակերի հեռանալու պատճառը: Գայլերը չէ, շնագայլերը նույնպես (11, 3, 1975):

- Ի՞նչ խաբար, - հարցուց կինը, - նմանապես ուրախա-նայով (62, 539):

Մակայն նման դեպքերում կառույցի արժեքը մի տեսակ երկփեղկված է լինում: Այն արտահայտում է և՛ հավելում, և՛ միաժամանակ պահպանում է դերանվանական այն իմաստը, որ ունեն նույնպես, նմանապես բառերը: Ու որոշ դեպքերում դժվար է լինում որոշել կապակցության հիմնական իմաստային արժեքը:

Հավելական իմաստը շեշտվում, ավելի ցայտուն է դառնում այն ժամանակ, երբ նույնպես, նմանապես բառերին միանում են ավելի ակտիվ և, էլ շաղկապները: Եվ այդ դեպքում միացող կառույցը գերազանցապես հավելական բնույթի է լինում: Ինչպես.

Նրանց բերաններում կրակի մեջ կարմրացրած երկաթե գերաններ են կոխում, նույնպես և գլխներին կարմրացրած երկաթե արախչիներ են դնում (62, 528): Նա երբեք միայն չէր նվազում: Նմանապես էլ երբեք միայն չէր երգում (ՀՀ):

Անշուշտ, բերված օրինակներում դերանվանական իմաստը կա, բայց և, էլ շաղկապները ավելի շեշտում են հավելական հարաբերությունը:

ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ (ԵՎ) շաղկապը

Առանց ևև, և շաղկապների էլ ինչպես-ը հնչերանգային, շարահյուսական որոշ առանձնահատկությունների շնորհիվ (հիմնականում տևական դադարից, վերջակետից հետո) կարող է կազմել հավելական կառույց.

Գնում էր ծանր ու մոլորուն քայլերով և շարունակ շուրջը նայելով: Ինչպես տան հասցե որոնող օտարական (20, 34):

Սակայն այսպիսի հազվադեպ կիրառությունները չեն կարող փոխել ինչպես-ի բնույթը: Այն մնում է դարձյալ համեմատություն արտահայտող միջոց և այլ հարց է, որ երբեմն կարող է գործածվել որպես հավելական կառույցների միացման միջոց: Իսկ երբ ինչպես-ը հանդես է գալիս ևև, և շաղկապների հետ համատեղ, արդեն գործ ունենք մի նոր բաղադրյալ շաղկապի հետ, որը թե իմաստով, թե գործառությամբ հավելական շաղկապ է, որի հիմնական դերը հավելական հարաբերություն արտահայտող միավորների կապակցելն է: Եվ որպես այդպիսին ինչպես ևև (և) շաղկապը կարող է ցույց տալ փաստերի, իրողությունների ավելացում, քանակական աճ, պարզ հավելում.

Նա մենակ մարդ է, զբաղվում է որսորդությամբ, ինչպես ևև քժկությամբ (55, 40): Կանչեց նրանց ետևից՝ վիշտը մոռացած (19, 165): Երբ փաստված են հասունացած սիրո բոլոր նշանները, չեն կարող թաքնված լինել ձայնի

նրբերանգներն ու սիրային նոտաները, ինչպես և փոխադարձ հայացքների ենթագիտակցական քննադրությունները (24, 726):

Այս շաղկապը կարող է կապակցել ինչպես նույն նախադասության բաղադրիչները, այնպես էլ հանդես գալ առանձնացված հնչերանգով (վերջակետից հետո), այսինքն կապակցել առանձին նախադասություններ.

Նրա պարտքն էլ պարտավորվելն է: Ինչպես նաև հնձվորի պարտքն է սարվորին կարտոֆիլ տանել (37, 133): Դա ինձնից կխլի երեք տարի: Ինչպես և յուրաքանչյուր միջնակարգ դպրոց (24, 441):

Բազմազան են այս շաղկապով միացած կառույցների իմաստային և շարահյուսական տարբեր կիրառությունները: Մանրամասների մեջ չխորանալով՝ ասենք միայն, որ դրանք կարող են արտահայտել պատճառ՝ Լալիս էր իր միայնության, ինչպես նաև անկարողության պատճառով (Ավ.), նպատակ՝ Գնալու էր այգիների վերակառուցումն ավարտելու, ինչպես նաև հեկտարները հարստացնելու հարցերը քոջորեն լուծելու (ՄՀ), ձև՝ Այստեղ ու այնտեղ են վազվզում գրքերի կապոցներով, ինչպես նաև հանդեսների վերջին համարները ձեռքներին (24, 489), տեղ՝ նրանք եղել են այս կողմերում, ինչպես և այս գյուղում (ԵԵ) և այլն:

ԱՅՆ ԷԼ, ԵՎ ԱՅՆ շաղկապները

Ի տարբերություն նախորդների, որոնք արտահայտում են հիմնականում պարզ հավելում, սրանք ունեն իմաստային որոշ առանձնահատկություն: Այս շաղկապները կատարում են ասվածի սահմանափակում, մասնավորում և դրա շնորհիվ սրանցով միացած կառույցները հավելական իմաստի հետ միասին ձեռք են բերում սաստկական երանգ: Այսպես.

Հրաշք չէ՞ր, միթե, որ մեր մեծ պապիկը մեր տուն եկավ, այն էլ իր դեզ մորուքը հետն առած (5, 66): Չլինի՞ մի կծու բան սախի Վայլայի մասին, այն էլ այսբան հասարակության մեջ (26, 36): Անվայել բան է, որ իր տարիքի մարդը կաշվից դուրս գա գեղեցկություն տեսնելու համար, այն էլ կնոջ մեջ (11, 485):

Այն էլ, և այն շաղկապների միջոցով կարող է կատարվել ինչպես ողջ հիմնական արտահայտության, այնպես էլ նրա որևէ անդամի ճշգրտում.

Այդ բառը ասվում է զգացմունքների մի ամբողջ աշխարհի մասին, այն էլ ծիծաղով է ասվում (50, 77): Պարտավոր եմ քեզ ասել, որովհետև հարազատ եղբայրդ եմ, այն էլ մեծ եղբայրդ (43, 494): Եվ այդ բոլորից հետո ծայրահեղ թշվառություն, աղքատություն, սև, չոր հաց – և այն ոչ միջու (41, 36):

Այն էլ շաղկապը հավելական հարաբերություն կարող է արտահայտլ առանձին նախադասությունների միջև դրվելով վերջակետից հետո.

Միայն մի մարդ է ասել ճշմարտությունը: Այն էլ երբ տանջահար էին անում նրան (12, 47): Հիմա լամպը հաստուկ պահանջագրերով են միայն վաճառում: Այն էլ ոչ անհատ մարդկանց (26, 140):

Այն էլ, և այն շաղկապների՝ հավելական կառույցների հետ հանդես գալու կիրառական մյուս դեպքերը նման են արդեն ուրիշ շաղկապների վերաբերյալ ասված կիրառություններին, ուստի և հարկ չկա ավելի մանրամասնորեն կանգ առնելու դրանց վրա, մնում է ավելացնել, որ այս շաղկապները թե՛ իմաստով, թե՛ գործածությամբ նույնն են, կարելի է ասել՝ նույն շաղկապի երկու տարբերակներն են, միայն այն էլ-ը ավելի ժողովրդախոսակցական բնույթ ունի և

հաճախակի է հանդիպում, իսկ և այն-ը գրքային է ու համեմատաբար քիչ կիրառություններ ունի:

Հարադրական հավելական շաղկապների շարքին պետք է դասել նաև բայց և, սակայն և, կամ էլ, և կամ, բայց նաև ու մի քանի այլ շաղկապներ:

Հարադրական կազմությամբ հավելական շաղկապների մեջ, ինչպես արդեն ասվել է, առանձնանում են զուգադրական շաղկապները: Սրանք ունեն իրենց իմաստային, կիրառական յուրահատկությունները: Այսպես, եթե մյուս բաղադրյալ հավելական շաղկապները, որպես կապակցման միջոցներ, կարող են հանդես գալ և՛ նույն նախադասության ներսում, և՛ առանձին, ինքնուրույն նախադասությունների միջև, ապա զուգադրական հավելական շաղկապների գլխավոր կիրառությունը մինևույն նախադասության տարբեր եզրերը կապակցելն է, այսինքն դրանք գերազանցապես գործածվում են նույն նախադասության ներսում:

Զուգադրական հավելական շաղկապներ են ուչ միայն...այլև, ինչպես...այնպես էլ (և) և այլ շաղկապները: Սրանք միմյանցից որոշակիորեն տարբերվում են հենց հավելում արտահայտելու տեսակետից էլ: Սրանցից առաջինը հավելական իմաստի հետ միասին ցույց է տալիս նաև սաստկացում, առանձնացում, իսկ երկրորդն արտահայտում է սովորական, պարզ հավելում:

ՈՉ ՄԻԱՅՆ...ԱՅԼԵՎ շաղկապը

Սրանով միացած կառույցի երկրորդ եզրն ավելի շեշտված է լինում, հատուկ ընդգծված, որը և նրան ավելի մեծ կարևորություն ու նշանակություն է հաղորդում:

Նա ոչ միայն արթուն, այլև խիստ անհանգիստ էր (7, 115): Չմեռը ոչ միայն մեզ է ահաբեկել, այլև վայրի աղավնիներին (5, 121): Ծեր լորենին, ժայռը ոչ միայն մեր առաջին անաղարտ զգացմունքների վկաներն էին, այլև զգացմունքի ոգևորիչները (58, 2, 1975):

Երբեմն այս շաղկապն իր երկրորդ եզրով կարող է միանալ սաստկական նույնիսկ վերաբերականին: Այդ դեպքում հավելված փաստերն ու իրողությունները դառնում են գերկարևոր, իբրև անսպասելի, բարձրագույն աստիճան.

Ասում էին, թե կալվածքում գիտե ոչ միայն յուրաքանչյուր խոտը, այլև նույնիսկ խոտի բարձրությունը (24, 404): Ոչ միայն չեմ ընկալում նրա ասածները, այլև նույնիսկ մոռացել եմ նրա անունը (26, 38):

Ոչ միայն...այլև շաղկապը կարող է հանդես գալ նաև այլ տարբերակներով: Շատ է տարածված ոչ միայն...այլ նաև տարբերակը:

Ձեր կյանքը, գործը դարձրեք այնպիսին, որ ոչ միայն մարդիկ ձեզ մատնացույց անեն, այլ նաև ձեր ուժը, օրինակը շատերի համար դառնա նպատակ (22): Այդ միջոցները ոչ միայն բազմաթիվ են, այլ նաև բազմազան (47, 70): Ոչ միայն չէր լսի ինձ, այլ նաև կարող էր վիրավորանք հասցնել միջամտությանս համար (41, 74):

Ինչպես երևում է բերված օրինակներից, ոչ միայն...այլ նաև-ը թե՛ գործածությամբ, թե՛ նշանակությամբ նույնական է ոչ միայն...այլև-ի հետ, միայն զիջում է նրան այն բանում, որ հավելական-սաստկական իմաստն ավելի մեղմ է արտահայտում: Թերևս այդ հարցում էլ դեր է խաղում այն հանգամանքը, որ այլև-ը գուտ հավելական շաղկապ է, իսկ այլ նաև-ը հավելական իմաստի հետ պահպանում է ներհակական նշանակությունը:

Ի դեպ, ներհակական հարաբերության և հավելական իմաստի համատեղ գործածությունն ավելի ակնառու է ոչ միայն...այլ շաղկապի դեպքում.

Աստծու կողմից իրեն շնորհված ամեն բան տրված է ոչ միայն իրեն, այլ իր միջոցով՝ ողջ մարդկությանը (24, 887): Օրիորդը ոչ միայն գեղեցիկ հայերեն էր խոսում, այլ բավական մշակված լեզվով կարողանում էր գրել և թարգմանել (62, 324): Ես գոհել եմ քեզ, սիրելի Ալմաստ, ոչ միայն իմ սիրտը, այլ իմ կյանքը և իմ ձեռքը (62, 487):

Բերված նախադասություններում բաղադրիչների միջև նկատելի է ներհակական հարաբերությունը, որը պայմանավորված է այլ ներհակական շաղկապի արտահայտած իմաստով: Մյուս կողմից էլ ոչ միայն-ի և նախադասությունների ընդհանուր մտքի շնորհիվ առկա է նաև հավելական հարաբերությունը, որ քերականորեն ամբողջական դրսևորում չի ստացել: Կարծես թե պարզապես զեղչված է ոչ միայն...այլ նաև շաղկապի երկրորդ հավելում արտահայտող եզրը (նաև) ու մնացել է միայն ներհակական այլ շաղկապը, այդ պատճառով էլ նախադասությունների բաղադրիչների հարաբերությունը երկակի բնույթ է ստացել: Ասվածն ավելի համոզիչ կլինի, եթե վերականգնենք ենթադրվող զեղջված եզրը:

Հմտ. Ես գոհել եմ քեզ, սիրելի Ալմաստ, ոչ միայն իմ սիրտը, այլ նաև իմ կյանքը և իմ ձեռքը:

Պետք է ավելացնել, որ ոչ միայն...այլ շաղկապով կապակցությունները ժամանակակից հայերենում խրախուսելի չեն, ոչ կանոնական են, ունեն սահմանափակ թվով կիրառություններ և աստիճանաբար դուրս են մղվում:

Բաղադրիչների միջև երկակի հարաբերություն է դիտվում նաև, երբ նրանք կապակցված են լինում ոչ թե...այլև շաղկապով.

Նա ոչ թե հորը, այլև մի արքայի անգամ չէր կարող սպանել (22, 146): Ես պատրաստ եմ համբուրել ոչ թե ձեր ձեռքը, այլև ձեր հողաթափերը (62, 8):

Ինչպես դժվար չէ նկատել, եթե ոչ միայն...այլ-ի դեպքում ընդհանուր կառուցվածքը հավելական է և ներհակական հարբերությունը դրսևորվում է պարզապես զուգադրական շաղկապի հավելում արտահայտող եզրի՝ նաև-ի գեղջման պատճառով, ապա ոչ թե...այլև-ի դեպքում ընդհանուր կառուցվածքը ներհակական է, և հավելական հարբերությունը դրսևորվում է պարզապես ներհակություն ցույց տվող զուգադրական շաղկապի երկրորդ եզրը (այլ) հավելում արտահայտող շաղկապով (այլև) փոխանակելու պատճառով: Այսպիսի կիրառությունները գերազանցապես խոսակցական բնույթի են, գրականում ընդունելի չեն:

Ոչ միայն...այլև հավելական զուգադրական շաղկապը կարող է ունենալ նաև տարբերակներ: Դրանք առաջանում են շնորհիվ այն բանի, որ զուգադրական շաղկապի երկրորդ եզրը կամ գեղջվում է, կամ էլ փոխարինվում է հավելում արտահայտող որևէ շաղկապով: Այս ճանապարհով մի դեպքում ստացվում է ոչ միայն...և տարբերակը.

Յուրաքանչյուր մարդու մաղթում է քաջաոռոջություն: Եվ ոչ միայն մարդուն. նույնը նա ցանկանում է և թռչունին, և ամպերին, և անձրևին, և հողին (ԳԹ):

Մի դեպքում կարող է ստացվել ոչ միայն...նաև տարբերակը.

Նա այստեղից տեսել է ոչ միայն Կարմրավորը, Օիրանավորը. ինձ թվում է նա տեսել է նաև շատ բան (46, 202):

Մի այլ դեպքում գործ ենք ունենում ոչ միայն...ել տարբերակի հետ.

Ոչ միայն հորս դրությունն է, որ նրան տանջում է. Գրիգորի դրությունն էլ պակաս մտատանջության առարկա չէ (41, 31):

Իհարկե, թվարկած տարբերակների մասին չի կարելի խոսել որպես հաստատուն, կոռ կառուցվածքի գուգադրական շաղկապների: Դրանք ավելի շուտ շաղկապների ազատ գուգորդումներ են, ազատ կապակցություններ:

Սակայն հենց այս հանգամանքն էլ (այսինքն գուգադրական շաղկապի երկրորդ եզրի զեղչումը կամ այլ շաղկապով փոխարինումը) հնարավորություն է տալիս միացնելու ոչ միայն նույն նախադասության բաղադրիչները, այլև կապակցելու առանձին, ինքնուրույն նախադասություններ:

Աննետայի համար ծանր էր ոչ միայն Միլվիայից բաժանվելը: Նա կապվել էր փոքրիկ Օդետային (50, 388): Եվրոպացիների հարստանալու անգուսպ ձգտումը իլեց հարյուր հազարավոր կոնգոցիների ոչ միայն ձեռքերը: Բնակչության ավելի քան կեսը դատապարտվեց ոչնչացման (49, 222): Ոչ միայն լավ օրինակն է ազդեցություն գործում, վատ օրինակն էլ է ազդողում (62, 123):

Բայց այսպիսի կիրառությունները, ինչքան էլ շատ լինեն դրանք, չեն ժխտում այն փաստը, որ ոչ միայն...այլև գուգադրական շաղկապը հիմնականում հանդես է գալիս նույն նախադասության կազմում և կապակցում նրա բաղադրիչները, քանի որ դրանք ոչ թե անմիջաբար ոչ միայն...այլև-ին, այլ դրա մոտավոր տարբերակներին վերաբերող կիրառություններ են:

ԻՆՉՊԵՍ...ԱՅՆՊԵՍ ԷԼ շաղկապը

Հավելում արտահայտող մյուս հիմնական զուգահրական շաղկապն է: Մրանով միացած կառույցները ցույց են տալիս փաստերի, իրողությունների սովորական հավելում:

Ինչպես մատաղ աղջիկը զգվում է սիրելեանին, այնպես էլ վարդը իր շուրթերն է բացում առավոտյան հովիկին (23, 72): Ինչպես ալիքների ոչ մի ափակոծում չի կարող պղտորել ծովի ջրերի նույնիսկ չնչին մասը, այնպես էլ Մարիաննայի հոգում չէր կարող անէանալ սերը (60, 42): Ինչպես արծիվն է ճախրում բարձր եթերում, այնպես էլ Ժիրայրն էր ճախրում երևակայության ոլորտում (57, 9):

Այս շաղկապին միանգամայն համարժեք է ինչպես...այնպես և շաղկապը, այն տարբերությամբ միայն, որ վերջինս հատուկ չէ ժողովրդախոսակցական լեզվին, գրքային բնույթ ունի և կարելի է ասել՝ նախորդի գրքային տարբերակն է:

Փողոցները զարմանալիորեն հարմար էին ինչպես սիրային, այնպես և ոճրային գործերի համար (38, 22): Ուրեմն ինչպես այս կատվի, այնպես և իր աղջկա հետ ինքը ոչ մի առնչություն չունի (11, 55):

Ինչպես...այնպես էլ շաղկապն ունի մի շարք տարբերակներ, որոնք առաջանում են մի կողմից ինչպես, այնպես բառերը համանման այլ բառերով փոխարինելու, մյուս կողմից՝ ևս, էլ, և հավելական շաղկապների հետ առանձին-առանձին զուգորդվելու շնորհիվ: Այդպիսի տարբերակ է ինչպես...նույնպես էլ (և) շաղկապը.

Ինչպես տունն է հաստատ կառուցվում քար քարի վրա դրվելով, նույնպես էլ տղան կայուն բնավորությունն ձեռք բերեց (22): Քեզանում մեռած են ինչպես մարդկային գուրթը, նույնպես և հայրական սերը (62, 576):

Շատ տարածված է նաև ինչպես...այդպես էլ (և) տարբերակը.

Ինչպես երկինքն է մաքրվում սև թուխպերից, այդպես և տխրությունն ու մոռացությունը տեղի տվեցին (58, 9, 1975): Ինչպես որ ծովին ծածկոց, երկնքին սյուն չես գտնի, այդպես էլ աշխարհում առանց ցավի մարդ չես գտնի (5, 50):

Երբեմն գուգադրական շաղկապի երկրորդ եզրի այնպես, այդպես, նույնպես բառերի զեղչումով մի դեպքում ստացվում է ինչպես...էլ տարբերակը.

Ինչպես ամեն մի իրեն հարգող զերդաստան, Ֆորսայթներն էլ ունեին ներքին մի շուկա (11, 73):

Մի այլ դեպքում առաջանում է ինչպես...ևս տարբերակը.

Ինչպես Տավորիկի շատ մասերում, Հոսնուտ գյուղի շրջակայքում ևս երկաթահանքի շատ պաշարներ կային (25, 38): Ինչպես շատ լոնդոնցիների, Մումզի համար ևս անթերիությունը սեփական մաշկի նման հարազատ ու թանկ մի բան էր (11, 92):

Պետք է ավելացնել նաև, որ եթե ոչ միայն...այլև շաղկապի որոշ տարբերակներ կարողանում են կապակցել առանձին, ինքնուրույն նախադասություններ, ապա ինչպես...այնպես էլ շաղկապն իր բոլոր տարբերակներով գերազանցապես հանդես է գալիս նույն նախադասության կազմում որպես բաղադրիչների կապակցման միջոց:

Մինչև այժմ քննվեցին հավելական շաղկապները, որոնց հիմնական գործառությունը լեզվում հավելական հարաբերություն արտահայտելն է: Մակայն, ինչպես արդեն ասվել է, հավելական հարաբերությունը կարող է դրսևորվել նաև լեզվական այլ միջոցներով: Որո՞նք են դրանք և ինչպե՞ս են հանդես գալիս որպես հավելական կառույցների միացման միջոցներ:

Ամենից առաջ պետք է առանձնացնել շաղկապական այն կապակցությունները, որոնք հավելական շաղկապներ չեն, բայց ունեն հավելական շաղկապի արժեք և ազատորեն գործածվում են այդ նշանակությամբ:

Դրանց շարքին պետք է դասել ինչքան (որքան)... այնքան (նույնքան) էլ (և) շաղկապային կապակցությունն իր տարբերակներով: Եթե ինչքան (որքան)... այնքան (նույնքան) հարաբերական-հարաբերյալով կապակցությունը չի դրսևորում հավելական հարաբերություն, ապա միացած և, էլ, ևս հավելական շաղկապների պատճառով այն ձեռք է բերում հավելական իմաստ.

Դու որքան գեղեցիկ ես իմ կարծիքով, այնքան ևս ինչլացի աղջիկ պիտի լինես (62, 523): Բուպեն ծանր էր, անշուշտ, որքան նրա, նույնքան և ինձ համար (41, 113): Ինչքան ձեր բարեկամն եմ, նույնքան էլ Օդետի (40, 43):

Բերված օրինակներում չափ ու քանակի տեսակետից համեմատության երանգին զուգակցվել է նաև հավելական նշանակությունը՝ շնորհիվ ևս, էլ, և հավելական շաղկապների:

Նոր փաստերի, իրողությունների հավելում կարող է կատարվել նաև ապա և հարադրությամբ, որը գործառությամբ շատ նման է ևս շաղկապին, բայց հավելական իմաստի հետ այն ցույց է տալիս և հաջորդականություն.

Շահին ու պալատականներին զարմացրել էին ոչ միայն աշուղներն ու նվագածուները, այլև Մելիք Իսրայելը իր փայլուն ճառերով, որ ինչոք էին ու համարձակ: Ապա և իր պարերով, սրամտություններով, վարակիչ ծիծաղով (7, 191): ...Սրբապղծություններ, ավարառություններ, ճնշումներ: Ապա և զանակոծություններ, սպանություններ, գերեվարություն և նման ամեն տեսակի բաներ (7, 112):

Ինչպես տեսնում ենք, ապա և-ով միանում են այնպիսի փաստեր, որոնք իրենց կարևորությամբ զիջում են նախորդ մասում ասվածին: Դրանք հավելվում են որպես լրացուցիչ տեղեկություններ:

Ընդ (ըստ) որում նախդրային հարադրության միջոցով կատարվում է հավելում՝ ճշգրտումով, ասվածի վերաբերյալ որևէ նոր մանրամասնի, տվյալի հաղորդումով:

Ոչ մի պատանի չի ստացել այդքան արտասովոր կրթություն. ընդ որում այդ գործն ինքն էր անձամբ ղեկավարում (24, 443): Դա իր սեփական խոզի միսն էր, ըստ որում տանը ապիստած միսը (24, 386): Սկսվեց գրույցը: Ընդ որում գրույցն ստիպված շարունակում էր միայն ինքը (50, 339):

Այս շարքում պետք է դնել նաև համ էլ շաղկապը, որը ժողովրդախոսակցական լեզվում շատ տարածված է որպես հավելվող մասերի միացման միջոց և ոճական նկատառումներով գործածվում է նաև գրական լեզվում:

Գիշերը, ցրտին շատ չես վաստակի: Համ էլ ձեռքդ ընկածը սառցակալած է լինում, ուտելու համար անպետք (11, 8, 1975):

Թվարկումների ժամանակ համ էլ-ը սովորաբար կապակցում է թվարկվող վերջին բաղադրիչը.

Համ քամի չի լինի, այ բալամ, համ ջրից նեղություն չենք կրի, համ էլ ավանից հեռու չենք (10, 120): Եկա այնպիսի մի սենյակ, որ համ հեռու էր ուսումնարանից, համ աղմկալի տեղ, համ էլ ոչ թեյ, ոչ ճաշ խոստացան (41, 72):

Վերը թվարկած շաղկապները թերևս պետք է դասել բուն հավելական շաղկապների շարքը, քանի որ ներկա դրությամբ եթե դեռևս դրանք լիարժեք հավելական շաղկապներ էլ չեն, ապա կիրառությամբ ու իմաստով միանգամայն մոտենում են նրանց:

Շաղկապներից բացի հավելյալ կառույցների միացման միջոցի դեր կարող են կատարել այլ խոսքի մասերը: Օրինակներ.

Աշունը մեզ մոտ սքանչելի է: Սքանչելի իր գույներով, բերքով, շռայլությամբ (ՄՀ): Մեծ, թե փոքր գիրք էին կարդում: Կարդում էին լարված ու կենտրոնացած (19, 294):

Առաջին օրինակում կապակցման միջոց է ածականը, երկրորդում՝ բայը: Սակայն, ինչպես նկատվում է, այստեղ մեծ դեր է կատարում կրկնությունը: Իսկ կրկնությամբ հավելյալ կառույցներ կարող են կազմել գրեթե բոլոր խոսքի մասերը, և այդպիսի կիրառությունների մասին հարկ չկա մանրամասնորեն խոսելու: Մեզ հետաքրքրում են այնպիսի խոսքի մասերն ու լեզվական միջոցները, որոնք հավելյալ կառույցներ են կազմում առանց կրկնության և առանձին վերցրած էլ ունեն հավելում, ճշգրտում կատարելու հատկություն:

Այս առումով նախ պետք է առանձնացնել որոշ դերանուններ: Դրանցից էլ ամենաակտիվը որ հարաբերական դերանունն է, որն ինչպես ուղիղ, այնպես էլ թեքված ձևերով հանդես է գալիս հավելյալ կառույցների հետ:

Տխուր էր Արփենը, որից ավելի գեղեցիկ էր երևում (26, 53): Ընկեր լեյտենանտ չի մնացել, մնացել է մի մարդ, որ գետինն է մտնում: Որի աղջիկը գնում է երաժշտական դպրոց: Որի տղան շախմատ է ուսումնասիրում (37, 61):

Ով, ովքեր հարաբերական դերանունները նույնպես կարող են գործածվել որպես հավելյալ կառույցների միացման միջոցներ.

Հանցագործներ ենք... Բոլորս... Ովքեր վայելում են երկարատև երիտասարդության հմայքները (56, 49): Հասկացիր, որ առաջին պատահածի դեմ պետք չէ ամեն ինչ այդպես բացել: Ով էլ լինի նա (58, 8, 1976):

Հավելական կառույցների հետ հաճախ են հանդիպում նաև որոշ ցուցական դերանուններ (դա, այդպես և այլն): Օրինակներ.

Մի հոգի միայն տխուր էր այդ տան մեջ. դա էր օրհորդ Հռիվսիմեն (62, 549): Դյուրեն մենակ գնաց ներս. այդպես էր կարգադրել հրամանատարը (3, 103):

Այս շարքում պետք է դասել նաև որպես-ի հավելական նշանակությամբ կիրառությունները.

Ցից ես հանում ամեն գյուղից տաս հոգի: Ջոկել պետք չէ: Որպես պատիժ, որ խրատվեն (7, 69): Բնակիչներին շենքից հանում են: Որպես նախազգուշական միջոց (66, 315):

Ժամանակակից հայերենում բավական շատ են և որոշ մակբայական ձևերով, վերաբերականներով, միջանկյալ բառերով ու կապակցություններով միացած հավելական կառույցները: Ճիշտ է, այդպիսի դեպքերում կապակցման հիմնական միջոցը շարահարությունն է, բայց այդ բառերն էլ քիչ դեր չեն կատարում:

Որպես միացման միջոց կարող է հանդես գալ նույնիսկ-ը, որը խոսքին տալիս է որոշակի շեշտվածություն, սաստկական երանգ.

Մեր կոմիտեն բողոքի բազում հեռագրեր է ստացել: Նույնիսկ հայտնի պետական գործիչներից (19, 300): Որքան երջանկություն և ուրախություն կար այդ կնոջ ձայնի մեջ, այբերում: Նույնիսկ այտերը ողողող արցունքի շիթերում (60, 38):

Անգամ, մինչև անգամ բառերը նույնպես արտահայտում են սաստկացում, առանձնացում, սահմանափակում: Դրանցով միացած կառույցներն ունենում են անսպասելիության, անհավատալիության նշանակություն:

Ահաբեկել էր բազմաթիվ միջոցներով: Մինչև անգամ կյանքին վերջ տալու հայտարարությամբ (58, 12, 1974): Ոչ մի վերքի հետք: Մինչև անգամ ճանկտուր չկար (22, 170):

Որոշ միջանկյալ բառեր նույնպես գործածվում են հավելյալ կառույցների հետ: Ինչպես.

Մի սենյակ լիքը երաժշտություն էր: Իհարկե, նաև հայկական (46, 79): Ակնհայտ է դառնում սուր միտքը, հատող լեզուն: Իմիջիպայոց, հումորով շաղախված ու մատուցված (32, 11, 1974): Հենց այստեղից էլ՝ Նադիմից, գազը հասավ Մոսկվա: Անշուշտ, ոչ անմիջապես քաղաքից (11, 9, 1975):

Երբեմն որպես միջանկյալ բառ հանդես է գալիս սսենք բայաձևը՝ կատարելով միացման միջոցի դեր.

Դու թատերական նկարիչ չես, դու դերասան ես: Ասենք, մենակ դու չէ, քո հայրն էլ է դերասան, մայրն էլ... (ԳԹ): Կարենին էլ երևի չեմ տեսնի: Ասենք, սրբագրիչ է, աշխատում է տպարանում, կգնամ, կգտնեմ (46, 40):

Այստեղ պետք է խոսել նաև ի դեպ, հա բառերով հավելյալ կառույցների մասին: Ընդ որում, ի դեպ-ի միջոցով հաղորդվում է որևէ նոր մանրամասն, լրացուցիչ տեղեկություն, կատարվում է ասվածի ճշգրտում.

Կորուլենկոն կարդում է երիտասարդ Գորկու ձեռագիրը: Ի դեպ, դեռևս ոչ թե Գորկու, այլ անհայտ Ալեքսեյ Պեշկովի (12, 88):

Իսկ հա-ով միանալու դեպքում կառույցի մեջ առկա է լինում նաև հանկարծակիության, անսպասելիության գաղափարը:

Մնացածների համար գլուխ չենք ցավացնում: Հա, մեր գեղականի իրապարհն էլ կտրվի... (57, 17): Այսպես, ուրեմն, ի՞նչ էի պատմում... Հա, կնկաս մասին (11, 9, 1975):

Բառերի մի շարք կապակցություններ նույնպես հանդես են գալիս որպես միացման միջոցներ: Ինչպես.

Տեսավ նկարը: Ավելի ճիշտ՝ տեսավ ինքն իրեն, երբ տասնչորս տարեկան էր (56, 73): Չէինք շտապում: Ավելի շուտ՝ ընկերս չէր շտապում (11, 9, 1975): Ինչ ուզում է լինի, թեկուզ չընդունվեմ: Ճիշտն ասած՝ թվում է, որ կընդունվեմ (46, 36):

Այս կարգի կապակցություններն ամենից առաջ ունեն ճշգրտելու, մասնավորում կատարելու հատկություն:

Հավելական պետք է համարել նաև բաղադրիչների այնպիսի կապակցումը, որն իրականացվում է մի բան բառամիացությամբ, որը մի կողմից ամբողջացնում է նախորդ ասվածը, ձևականորեն փոխարինում նրան, մյուս կողմից հանդես է գալիս որպես հաջորդ եզրը միացնելու միջոց.

Երբեմն Էդիտն ընկերակցում էր ինձ, մի բան, որ մեծապես բարձրացնում էր հեղինակությունս կանանց մոտ (2, 197): Միայն տարեթվերն են ճշգրիտ, մի բան, որ բոլորովին էլ կարևոր չէ: Եվ, անշուշտ, դարը, մի բան, որ շատ կարևոր է (19, 6):

Ինչպես տեսնում ենք, շաղկապավոր հավելական կառույցները ոչ միայն լայնորեն տարածված են ժամանակակից հայոց լեզվում, այլև բազմազան ու բազմաբնույթ են իրենց արտահայտած նրբիմաստներով, ունեն հարուստ կիրառություն ու տարբեր դրսևորումներ:

Բազմազան են նաև դրանց միացման միջոցները: Որպես այդպիսիք կարող են հանդես գալ թե՛ համադասական, թե՛ ստորադասական, թե՛ հավելական շաղկապները, ինչպես նաև լեզվաքերականական մի շարք այլ միջոցներ:

Իհարկե, դիտարկված կիրառությունները չեն սպառում շաղկապավոր հավելական կառույցների և նրանց միացման միջոցների ողջ բազմազանությունը: Դրանց գործածության

առանձին դեպքեր կարող են դուրս մնացած լինել, որոշ ձևեր էլ նոր են առաջանում գոյացման ընթացքի մեջ են: Մակայն, հաշվի առնելով, որ դրանք առանձնապես ցայտուն, ընդգծված տարբերություններ չպետք է ունենան արդեն քննարկված դեպքերից, բավարարվենք շաղկապավոր հավելյալ կառույցների մասին ասվածով և անցնենք անշաղկապ հավելյալ կառույցների քննությանը:

2. ԱՆՇԱՂԿԱՊ ՀԱՎԵԼԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ

Շաղկապավոր հավելյալ կառույցներից ունեցած սրանց գլխավոր տարբերությունը երևում է արդեն անվանումից, այն է՝ դրանցում հավելվող մասը հիմնական մտքին միանում է առանց շաղկապների, այսինքն շարահարությամբ: Այս դեպքում որպես միացման միջոց գլխավորապես հանդես են գալիս իմաստային և հնչերանգային հատկանիշները (գրավոր խոսքում՝ համապատասխան կետադրական նշանները):

Անշաղկապ հավելյալ կառույցները շեշտում են հավելյալ իմաստը: Դրանց միջոցով ընդգծվում է հավելվող մասի նշանակությունը, տրամաբանորեն առանձնացվում: Արտահայտչականության, հուզականության տեսակետից էլ սրանք գերազանցում են շաղկապավոր հավելյալ կառույցներին:

Միանգամայն իրավացի են այն լեզվաբանները, որոնք գտնում են, որ անշաղկապ հավելյալ կառույցը դրսևորվում է հիմնականում որպես թերի նախադասություն կամ նախադասության սահմաններից դուրս բերված որևէ

անդամ, շատ հաճախ էլ այդ անդամից կախում ունեցող բառեր⁸⁰:

Պետք է ասել նաև, որ եթե հնչերանգային ու ռիթմամեղեդիական կողմով անշաղկապ հավելական կառույցները գրեթե ձեռք են բերում ինքնուրույն նախադասության արժեք, ապա իմաստային տեսակետից դրանք գրեթե անհասկանալի են լինում առանց հիմնական մասի, որով էլ հենց պայմանավորված է նրանց նշանակությունն ու քերականական կառուցվածքը:

Տարբեր լեզվաբաններ անշաղկապ հավելական կառույցների տարբեր խմբեր են առանձնացնում:

Ն.Ս. Վալգինան, օրինակ, առանձնացնում է չորս տեսակ գտնելով, որ հիմնական արտահայտությանը կարող են միանալ.

1. բազմակի անդամներն՝ իր կազմում եղածների հետ,
2. նախադասության հիմնական անդամներին ճշգրտող անդամները,
3. լրացման բնույթով կրկնվող անդամները,
4. հիմնական անդամներն ընդարձակող, լրացնող անդամները, այսինքն այնպիսիք, որոնք բացակայում են հիմնական արտահայտությունում⁸¹:

Ե.Ս. Գալկինա-Ֆեդորովի խմբագրությամբ հրատարակված «Ժամանակակից ռուսաց լեզու» գրքում անշաղկապ հավելական կառույցները ներկայացված են երկու հիմնական տարատեսակներով.

⁸⁰ Л.Г. Шатиашвили, *Присоединительные связи в русском языке*, стр. 171.

⁸¹ Н.С. Валгина, *Присоединительные конструкции в современном русском литературном языке*, стр. 20.

1. առաջին նախադասությունում հաղորդվում է ինչ-որ փաստի արտաքին կողմը, որի բովանդակությունն ու ներքին իմաստը բացահայտվում է երկրորդ նախադասությունում:

2. Առաջին մասը կառուցված է որպես ինքնուրույն արտահայտություն. երկրորդը չունի այդպիսի ինքնուրույնություն, այլ հանդես է գալիս որպես լրացուցիչ հաղորդում առաջինի մասին⁸²:

Իսկ «Ռուսաց լեզվի քերականություն» գրքում, նայած առաջին մասի ստորոգյալի բառական նշանակությանը և երկրորդ մասի բովանդակության հետ ունեցած նրա փոխհարաբերությանը, տարբերակվում են անշաղկապ հավելական կառույցների հետևյալ տեսակները.

1. առաջին մասի ստորոգյալն արտահայտված է անանցողական բայով, գործողության կամ ընկալման նշանակությամբ, որը կատարվում է այս կամ այն ընկալումն ստանալու նպատակով (լսել, նայել, ետ դառնալ և այլն): Երկրորդ մասում մատնանշվում է այն, ինչ ընկալվում է:

2. Առաջին մասի ստորոգյալն արտահայտված է շարժում ցույց տվող բառով: Երկրորդ մասում ցույց է տրվում այդ ընկալման բովանդակությունը (ամենից շատ՝ տեսողական կամ լսողական), որով ուղեկցվում է կամ որը հետևում է այդ շարժմանը:

3. Առաջին մասի ստորոգյալն արտահայտված է կոնկրետ գործողություն ցույց տվող բայով: Երկրորդ մասում բացահայտվում է այդ գործողության բովանդակությունը կամ ներքին միտքը:

4. Առաջին մասի ստորոգյալն ունի անցյալում կատարված գործողության վիճակի կամ նշանի նշանակություն:

⁸² *Современный русский язык*, (под ред. проф. Е.М.Галкиной-Федорук), М, 1957, стр. 424.

Երկրորդ մասում բացահայտվում է այդ վիճակի կամ նշանի կոնկրետ բովանդակությունը⁸³:

Վ. Առաքելյանն իր «Հայերենի շարահյուսություն» գրքում անշաղկապ հավելական կառույցները խմբավորում է հաշվի առնելով ինչպես նախորդ մասի ստորոգյալի դրսևորման, այնպես էլ հավելվող մասի իմաստային հատկանիշները: Ըստ այդմ էլ նա նշում է, որ հիմնական մասի ստորոգյալը սովորաբար դրսևորվում է տեսողական, լսողական ընկալում, շարժում կամ գործողություն ցույց տվող որևէ բայով, իսկ հավելվող միավորը հանդես է գալիս որպես այդ ընկալումների, շարժման կամ գործողության պարզաբանումը, բացահայտումը կամ մեկնությունը⁸⁴:

Ն. Պառնասյանն անշաղկապ հավելական կառույցները բաժանելով երկու մեծ խմբի՝ 1. համադասություն և 2. ստորադասություն արտահայտող հավելական կառույցների, այնուհետև առանձնացնում է դրանց տարբեր տեսակներ՝ «ըստ անշաղկապ նախադասության երկրորդ մասի գլխավոր նախադասության բովանդակության, հատկապես ստորոգյալի հետ ունեցած իմաստային հարաբերության»⁸⁵:

Միանգամայն համամիտ լինելով եղած դասակարգումներին և հիմք ընդունելով դրանք, ինչպես նաև ելնելով մեր սեփական դիտարկումներից ու հավաքած նյութերից, անշաղկապ հավելական կառույցների մեջ առանձնացնում

⁸³ *Грамматика русского языка*, АН СССР, М, 1965, стр. 398-401.

⁸⁴ Վ. Դ. Առաքելյան, *Հայերենի շարահյուսություն*, Ե., 1964, էջ 384-385:

⁸⁵ Ն. Ա. Պառնասյան, *Անշաղկապ բարդ նախադասությունները ժամանակակից հայերենում*, ժող. «Լեզվի և ոճի հարցեր» հ. 2, Ե., 1964, էջ 146:

ենք իմաստային-կառուցվածքային հետևյալ հիմնական տեսակները.

1. Անշաղկապ հավելական կառույցը կարող է լինել հիմնական արտահայտության որևէ անդամի բացատրությունը: Այսպիսի կառուցվածքները նմանվում են մեկնական, բացատրական տիպի կառուցվածքներին, բայց նրանցից տարբերվում են մեկից մյուսին ավելի կտրուկ անցումով: Ընդ որում, կարող է բացահայտվել հիմնական արտահայտության ենթական.

Բայց մի ուրիշ մանրուք անմիջապես հանգստացրեց նրան. գուլպաները կարկատված էին և բավական կոպիտ (19, 18): Ինձ անհանգստացնում է մի բան. աշխատանքի տեղավորել կարմիր յարանգայում: Վերջին կարմիր յարանգայում (32, 4, 1975): (Բացահայտված են մանրուք և մի բան ենթակաները):

Ավելի հաճախ միացած կառույցով տրվող բացատրությունը վերաբերում է ստորոգյալին.

Պատկած էի. անգամ կոշիկներս հագիս էին (41, 88): Աննետան ուրախացել էր. երջանիկ անցյալը նույնպես հառնել էր նրա առաջ (50, 339):

Բացի գլխավոր անդամներից կարող են բացահայտվել նաև հիմնական արտահայտության երկրորդական անդամները.

Նա այդ գործի բոլոր տվյալներն ունի. կանոնավոր դիմագծեր, լավ առողջություն, մշտաժպիտ և նվիրված (66, 7): Երգ էր որոնում: Հոր սիրած երգը, որ կորցրել էր (46, 180): Պետք է որ բոլոր կանանց մայրը վայրի կատու եղած լինի. փոքրիկ իմաստուն, տխուր ու խորամանկ կատու (24, 496):

Երբեմն միացած կառույցը կարող է լինել ոչ թե որևէ անդամի, այլ ամբողջ նախորդ մասի բացահայտումը.

Այստեղ հրաշք տեղի ունեցավ: 20-րդ դարի հրաշքը: Յամալում անսահման քանակությամբ բնական գազ հայտնաբերեցին (11, 9, 1975): Ամենից շատ դա էր հարկավոր: Նրանց վստահությունը (48, 131):

2. Հաճախ հավելվող մասը ճշգրտում, կոնկրետացնում է նախորդ ասվածը, այսինքն հիմնական արտահայտության մեջ հանդես եկած փաստը, իրողությունը, ընդհանուր միտքը մասնավորվում է, կոնկրետ դրսևորում ստանում.

Վաղը քաղաքում, երեկոյան 8-ին կսպասեմ ձեզ: Նավահանգստի մոտ (19, 82): Ողջ բնությունը երգում է. ծովերը երգում են ծաղիկների պես, ծովերը երգում են աստղերի պես, աղբյուրները երգում են եղնիկների պես (23, 33): Հանդիպման վայրը՝ ավտոբուսի կանգառ: Ազատության կամրջի ծայրին (48, 15):

Բերված օրինակներում կոնկրետացել, մասնավորվել է բնության, հանդիպման և սպասման վայրի ընդհանուր իմաստը:

Հավելական կառույցների այսպիսի կիրառությունների վերաբերյալ խոսելիս առանձին պետք է նշել դերանունների մասին: Որովհետև նախ դերանուններն ամենից շատ ունեն ընդհանուր, չտարբերակված իմաստ, և երբ դրանք հանդես են գալիս հիմնական արտահայտության կազմում, հավելվող մասը շատ հաճախ հենց ճշգրտում, կոնկրետացնում է դրանց ընդհանուր, չտարբերակված իմաստը:

Այդպիսի կոնկրետացման մի դեպքում կարող են ենթարկվել որոշ անձնական դերանուններ.

Մենք Վառվառայի հետ միասին ենք սովորում, մի սենյակում էլ ապրում ենք. ես, Վառվառան և նրա զարմուհին (32, 11, 74): Դուք գայլ չէ, մարդ էլ եք խեղդում: Դու և հերդ (37, 141): Լավ խաբեցիր մեզ: Ինձ ու այդ կնոջը (19, 108):

Դժվար չէ նկատել, որ բերված օրինակներում բացահայտյալի ու բացահայտչի առանձնացումը և վերջինիս տևական դադարից հետո հաջորդումը հավելական կառույցի առաջացման պատճառ է դարձել:

Հմտ. Մենք՝ ես, Վառվառան և նրա զարմուհին, միասին ենք սովորում և մի սենյակում էլ ապրում ենք:

Մի այլ դեպքում կարող են կոնկրետացվել մի բան, որևէ բան և այլ անորոշ դերանվանական ձևեր.

Գնամ իմ ժողովրդի մոտ, Դյուրե, նրան հարկավոր է հասկացնել մի բան. իմ տեսածը, իմ հասկացածը (3, 110): Վտանգավոր է, երբ թողնում ես, որ որևէ բան կլանի քո ամբողջ էությունը: Որևէ բան: Տուն, նկար, կին (11, 282):

Ամեն ինչ, ողջը, բոլորը, ամբողջը որոշյալ դերանուններ են, բայց նրանց արտահայտած իմաստը որոշակի չէ: Իսկապես ամեն բան կարելի է հասկանալ դրանց տակ: Եվ հաճախ է հավելվող կառույցով ճշգրտվում, կոնկրետանում է դրանց ընդհանուր իմաստը.

Նա այսօր ամեն ինչից էր դժգոհում: Անձրևից, սալիկներից, քամուց, ամեն ինչից (11, 9, 1975): Ողջը նրա երջանկության համար է: Երկիրն ու երկինքը, ծովերն ու աստղերը, համայն տիեզերքը (43, 504): Բոլորը նման էին այդ մարդուն: Բոլոր որբերը (11, 11, 1975): Հանկարծ երազ չլինե՞ն այս ամենը. զույգ աստղերը, արահետը, Վայյան, մանավանդ Վայյան (26, 32):

Երբեմն կարող են կոնկրետանալ նախորդ ասվածի մեջ նշված մի քանի դերանուններ միասին.

Առարկայական կապ կա մեր և այդ ամենի միջև: Մեր՝ մահկանացուներիս և Գորիսի մեր քարանձավների միջև: Ուղղակի կապ: Աչքով անտեսանելի, բայց մտքով տեսանելի (11, 9, 1975):

Ինչպես երևում է բերված օրինակից, ճշգրտվել է ոչ միայն մեր և այդ ամենը դերանունների ընդհանուր իմաստը, այլև հիմնական արտահայտության կապ անդամի իմաստը:

Տարբեր դերանունների իմաստի կոնկրետացման, ճշգրտման գործառությամբ հանդես եկող հավելական կառույցները բավական շատ են տարածված:

3. Հավելվող մասը կարող է լինել պարզապես լրացուցիչ հաղորդում, տվյալ, մանրամասն՝ ասվածի վերաբերյալ:

Գնաց խոհանոց և բաժակով ջուր բերեց: Մառը: Ուղղակի ծորակից (ԳԹ): Ծառուկյանն այգում քար էր ջարդում: Տոննանոց որձաքար, կողբերից կրծած (37, 100): Հետո՝ երկրորդ հայրացուն: Անհոգի, գեղեցկատես ու ժլատ (11, 8, 1975):

4. Շատ տարածված են նաև այն դեպքերը, երբ հավելվող մասը հիմնական նախադասության որևէ անդամի ընդարձակումն է, նրա իմաստի ընդլայնումը: Ընդ որում, նոր տվյալների, մանրամասների ու փաստերի հավելման շնորհիվ կարող է ընդլայնվել, ընդարձակվել անվանական անդամի իմաստը.

Դահլիճը թաղվում է լռության մեջ: Ոչ թե անխռով, անտարբեր, այլ հրաշքի սպասման լռության մեջ (11, 8, 1975): Միայն մի տեղ սենյակ կար: Նկուղ: Երեսունչորս քառակուսի մետր: Հինգ հարյուր ռուբլի (35, 309): Հնի բեկորների վրա բարձրանում էր նոր բարոյականությունը: Անկեղծության և ուժի, ոչ թե փարիսեցիության ու թուլության (50, 357):

Կարող է ընդարձակվել և բայական անդամի իմաստը՝ ի հաշիվ դրա հետ կապված նոր տվյալների ու հանգամանքների հավելման.

Օուտ Մաթեն կախվել է: Գերեզմանոցում: Դատրիկի գերեզմանի մոտ (60, 80): Ստրառուղը լաց էր լինում: Անգուսպ: Ազատ: Հրաժարվելով պինդ մնալու խոստումից (19, 109):

Այստեղ էլ շարունակեց աշխատանքը: Նեղվածքի մեջ: Առանց որևէ հարմարության: Ինքնաշեն գործիքներով (19, 134):

5. Հաճախ հավելվող մասով կարող է շարունակվել հիմնական միտքը, այսինքն նախորդ արտահայտությունը բովանդակում է հիմնական մտքի կեսը, իսկ մյուս կեսը շարունակվում է որպես հավելում:

Մենք դեռ գործ ունենք այստեղ: Բոլոր նրանց հետ, ովքեր վիրավորել են մեզ (19, 16): Լույսը չբացված վեր կացա ու նստեցի մեքենայիս դեկի մոտ: Շուտ, որպեսզի ինձ չկանգնեցնեն գերազանցված արագության համար (2, 183): Եվան մայր էր: Մարդկային ցեղի մայրը: Հավիտենական, որ կրկնվում է յուրաքանչյուր կնոջ մեջ (56, 254):

Երբեմն էլ մտքի շարունակությունը կարող է իրականացվել բազմակի անդամների առանձնացման միջոցով: Նման դեպքերում հիմնական արտահայտությունը կարող է լինել հարցում կամ ընդհանրական իմաստ ունեցող որևէ միտք, փաստ, որն էլ հենց շարունակվում, ընդարձակվում է բազմակի անդամների հաջորդական թվարկում-հավելումով:

Իսկ ի՞նչ կարելի է: Կինո գնալ: Ծառայական գրություններ կազմել: Զվարճանալ կանանցով: Չանձրանալ: Սպասել (48, 161): Ամուսնանալ... Տուն: Խոհանոց: Լվացք: Ամուսնու փնթփնթոց: Սկեսուր: Լույսի, գազի վարձ: Խմորեղեն (46, 97):

6. Բավական հաճախ են հանդիպում նաև այնպիսի կառուցվածքներ, որոնց առաջին մասում արտահայտված է տեսողական ընդհանուր նշանակություն, որ դրսևորվում է տեսնել, նայել, զննել և նման այլ բառերով, իսկ երկրորդ մասում տրվում է նայելու, տեսնելու, զննելու կոնկրետ առարկան, բովանդակությունը, այսինքն այն, ինչ դիտվում է, նայվում է, զննվում: Մի դեպքում դա կարող է լինել անձ.

Պատահաբար տեսա: Ճակատային ընկերս էր (58, 4, 1976): Միջանցքի կիսախավարում նկատեցի մի կերպարանք: Մեյինն էր (38, 25):

Մի այլ դեպքում դա կարող է լինել որևէ իրի, առարկայի, երևույթի մատնանշում կամ նկարագրություն.

Նայում են. առջևում թուրքական դրոշակ է (4, 27): Ուշադիր գննեց շուրջը. չոր ու ցամաք սենյակ: Պաղ և անհրապույր (19, 294):

7. Նույնը կարելի է ասել նաև անշաղկապ հավելական կառույցների այնպիսի կիրառությունների մասին, երբ հիմնական արտահայտության մեջ նշվում է լսողական որևէ ընկալում, իսկ հավելական կառույցով տրվում է այդ ընկալման էությունը.

Միջանցքում ոտնաձայներ լսվեցին. հերթապահն էր (25, 125): Ունկնդրեց. Լեոնորայի ձայնն էր (58, 12, 1974): Դարձյալ լսեցի ձիու դոփյունը սալահատակի վրա: Շղբայրս էր (22, 31):

Երբեմն այդ լսողական ընկալումը դրսևորվում է բնաձայնությամբ, ապա նոր բացատրվում է իրողությունը: Ինչպես.

Եվ հանկարծ խոր լռության մեջ՝ չըխկ, չըխկ, չըխկ... Մերենայի ձայնն էր (19, 179):

Այս խմբում պետք է դասել անշաղկապ հավելական կառույցների մի տարատեսակ նա: Դա այն է, երբ կապակցության առաջին մասում նշվում է որևէ կոնկրետ գործողություն, եղելություն, իսկ հաջորդ մասում ցույց են տրվում կամ բացատրվում դրանց հետ կապված փաստերն ու հանգամանքները: Այսպես, հավելվող կառույցով նշվում է անձ, որը կարող է լինել այդ գործողությունը կատարողը.

Եվ տղան ծիծաղում էր: Փոփոն էր (3, 151): Մեկը գրկել էր իր գլուխը, շոյում էր ճակատը, մազերը: Արևն էր (60, 13):

Նրանցից մեկն անջատվեց և եկավ մեր կողմը: Սալվին էր, Մամիկոնի քույրը (11, 9, 1975):

Հավելվող կառույցով կարող է ցույց տրվել, բացահայտվել ոչ թե անմիջաբար գործողություն կատարող անձը, այլ դրա հետ ուղղակի կապ ունեցողը.

Ստացավ մի լուսանկար: Ուլանովան էր: Գալինան (19, 212): Պետրոսը ցնցվեց, շուտ եկավ: Գլիբոր ամին էր (55, 30):

Հավելվող մասը կարող է բովանդակել նաև այդ գործողության, եղելության հետ կապված իր, առարկա, երևույթ.

Ձեռքը մի ծրարի դիպավ: Սոռացել էր: Կնոջ նամակը՝ կնքված Փարիզում (66, 146): Մի ծանոթ աղմուկ ճեղքում է օդը. ոստիկանության ազդանշանն է (66, 7):

8. Ժամանակակից հայոց լեզվում բավական շատ են տարածված այնպիսի անշաղկապ հավելական կառույցները, որոնք առաջանում են հիմնական արտահայտության որևէ անդամի կրկնության շնորհիվ: Այդ կրկնվող անդամը մի կողմից կատարում է միացման միջոցի դեր (հանդես գալով որպես ընդհանուր անդամ), մյուս կողմից տեղի է ունենում տրամաբանական առանձնացում, ընդգծվում, շեշտվում է հիմնականը, կարևորը, կատարվում է լրացուցիչ հաղորդում, բնութագրություն և այլն:

Կարող է կրկնվել հիմնական արտահայտության առարկայական նշանակություն ունեցող անդամը: Այդ կրկնությամբ մի դեպքում կատարվում է ճշգրտում՝ պատկանելության, վերաբերության իմաստով.

Չե՞ք լսում անիվների ձայնը: Ձեռնասայլակի անիվների (46, 141): Մա այնպիսի կռիվ է, որ գերիներ վերցնել չի սիրում: Մահվան կռիվ է (3, 86): Դուրս եկա իմ տան պատշգամբը: Իմ նոր տան (ԳԹ): Հիշատակները համակեցին նրան: Իր սիրահարության հիշատակները (11, 151):

Մի այլ դեպքում ցույց է տրվում կրկնվող անդամին վերաբերող որակական նոր մանրամասն, կատարվում է գնահատություն.

Ինչ-որ կապեր դեռ կաշկանդում էին նրան: Իրական, կոպիտ ու շոշափելի կապեր (19, 94):

Մշուշի պես մեր մանկությունը անցավ,

Գորշ, անարև, անմխիթար մանկություն (45, 13):

Երբեմն էլ այդ կրկնությունը կարող է բովանդակել նկարագրություն, ընդարձակել կրկնվող անդամի իմաստը՝ ի հաշիվ նոր, լրացուցիչ մտքերի, տվյալների հաղորդման:

Թռչնային այդ աղաղակը թեթևացնում էր մարդու հոգին. մարդու, որը մեկ երեկոյի ընթացքում ակամա հայտնվել էր անակնկալների ստոր ջրապտույտում (56, 39): Կարծես առաջին անգամ եմ տեսնում աշխարհը. – աշխարհը՝ առօրյա և միշտ հիասքանչ, աշխարհը՝ հնօրյա և միշտ նոր (23, 74):

Հավելական կառույցի մեջ կարող է կրկնվել նաև գործողություն, եղելություն ցույց տվող անդամը: Մյուսիսի կրկնության միջոցով հիմնական մտքին միանում են այդ գործողության, եղելության հետ կապված իրողություններ, դրանց վերաբերյալ տվյալներ ու հանգամանքներ.

Կաթում է այդ վարդենու արյունը. կաթում է արցունքի նման, ցողի նման, կաթում է եղևնու խեժի նման (22, 14): Լաց եղավ Աստղիկը. լաց եղավ կտրիճի մահով ընկած իր Վահագնի համար, լաց եղավ իր ժողովրդի թափած արյան համար (31, 21): Երեք օր փնտրել են նրան: Փնտրել են որսորդ ընկերները, փնտրել են եզնարածները (8, 191):

Կրկնություններով կազմված հավելական կառույցների շարքում (անկախ այն բանից՝ կրկնվում է առարկա, առարկայի հատկանիշ, թե գործողություն, եղելություն ցույց տվող անդամը), առանձնանում է հետևյալ տարատեսակը. երբեմն հիմնական արտահայտության որևէ անդամ իր վրա է կրում

տրամաբանական շեշտը. Նման դեպքերում այն կրկնվում է ընդգծված, ուշադրությունը կենտրոնացվում է դրա վրա, դա է համարվում կարևորը: Իսկ հավելվող միավորը մի կողմից բացատրում է, բացահայտում է այդ շեշտման էությունը, նրա կարևորությունը (թե ինչու է դա կրում տրամաբանական շեշտը), մյուս կողմից էլ հանդիսանում է ասվածի շարունակությունը, մտքի ընդարձակումը:

Նրա հիշողության խավար անդնդում բոցկլտաց այն օրը, ինչպես միայնակ աստղը մթին երկնքում: Այն օրը, երբ Մոնան սրունքները կախել էր առվակի վրա և ծիծաղում էր (8, 46): Յասամանը գալարվում է նրա թևերի օղակի մեջ և անձայն ազատվել ուզում: Անձայն, որովհետև եթե մարդիկ լսեին կմտածեին ոչ թե այնպես, ինչպես եղել էր, այլ ինչպես իրենց է հարմար (58, 2, 1975):

Այստեղ պետք է խոսել նաև այնպիսի կիրառությունների մասին, երբ մտքի շարունակությունն իրականացվում է կրկնությունների հաջորդական շղթայի միջոցով, թվարկմամբ.

Մելիք Իսրայելն էր. իր առանձնարանի լուսամուտի առաջ կանգնած նայում էր ամպամած երկնքին... Երկնքին, ուր առարկայական ոչինչ չկար՝ անցած, գնացած բաներ հիշեցնող, տանջող: Երկնքին, որովհետև ներքևում երբեմնի հզոր երկրից մի պատառ էր միայն (7, 205):

Երբեմն այն անդամը, որ պետք է կրկնվի, հավելվող կառույցի մեջ բացակայում է, զեղչված է լինում, սակայն նրա կրկնվելը ենթադրվում է, հասկացվում ընդհանուր իմաստից.

Չորքը զենքով գալիս է անզեն շինականի վրա, տեր Միմոն: Մեր պատվի, մեր հավատի վրա (գալիս է), (7, 79): Փախչում էին պատժից, որ հավասարագոր էր մահվան: Տաժանակիր աշխատանքից, որ նույնպես մահ էր: Ծաղրից, արհամարհանքից (փախչում էին), (25, 135):

Դրան հակառակ, երբեմն կրկնվող անդամը ոչ միայն չի գեղջվում, այլև միանում է դերանվանական որոշ ձևերի՝ ավելի ընդգծվելով.

Ժպիտը անպակաս էր նրա դեմքից, մի ժպիտ, որը հիանալի մատնեհարներ էր գոյացնում նրա թշերի վրա (41, 75): Արհամարհանքով էր լցված միջին դասակարգի հանդեպ. այն արհամարհանքով, որ հատուկ էր նույն դասակարգի սպերասան ու հախուռն հոգիներին (11, 374):

Պատահում է նաև, որ այդ կրկնվող անդամը փոխարինվում է իրեն մոտիկ, իրեն առնչվող, կամ էլ պարզապես իրեն համանիշ որևէ այլ բառով.

Վստահելի կալանավորներ շատ կան: Մարդիկ, որոնք մի փոքր հացի համար կկրակեն ում վրա ասեք (25, 147): Մտանք նրա տունը: Մի սենյակ, որ զգում էր տանտիրուհու խնամող ձեռքի պակասը (Մետ.):

9. Անշաղկապ հավելական կառույցների միջոցով տրվում է նշված որևէ փաստի կամ իրողության գնահատությունը, դրսևորվում է խոսողի այս կամ այն վերաբերմունքը ասվածի նկատմամբ:

Դրանք մի դեպքում կարող են արտահայտել համաձայնություն ասվածի հետ, նրա հաստատում.

Նրա բնակարանի միակ արժեքավոր իրը դաշնամուրն էր. իրոք ամենաթանկարժեք ու ամենալավ մի գործիք (64, 156):

Հավելվող կառույցները կարող են ցույց տալ և խոսողի անհամաձայնությունը, նրա ոչ դրական վերաբերմունքը հաղորդվածի վերաբերյալ.

Ուզում է կորածը ետ բերել մի բուռ մնացորդով, մի բուռ ցորեն, մի բուռ աղ-ու շաքար տալով նրան... Անհեթեթություն (3, 70):

Երբեմն խոսողի վերաբերմունքը, նրա կողմից արվող գնահատությունը կարող է լինել իրական փաստարկում:

Փորձեց հիշել, բայց նկատեց, որ ուրիշ բանի մասին է մտածում: Նոզնաձուլության նշան (66, 148): Գնում էին անապատով, ձորերով, լեռներով, կողքներին վիրապատ ոտքեր, քուրջապատ ու բոբիկ ոտքեր... Խելագարեցնող մահերթ (3, 8):

Այդ գնահատությունը կարող է դրսևորվել նաև համեմատությամբ, ասվածը որևէ այլ փաստի, իրողության նմանեցնելու միջոցով:

Կապույտ ջինս է հագել, մազերը թափված են ուսերին: Համարյա հիպպի (46, 12):

Ահա կույսերը գնում են աղոթելու:

Սգահանդես, տրտում թափոր մայրամուտին (45, 13):

Քնարական գեղումները նույնպես հաճախ հանդես են գալիս որպես վերաբերմունք արտահայտելու, գնահատություն կատարելու միջոց:

Հեռվում, մշուշի մեջ կորած երևում է գյուղը. ա՛յ գիտի գյուղ, որքա՛ն ամպեր են անցել քո գլխով (55, 10): Այսպիսի երգ կյանքիս մեջ առաջին անգամ էի լսում. ինչպիսի էլևեջներ, ինչպիսի՛ մեղմ ու սուր հնչյուններ (23, 55):

Որքան տարբեր ու բազմազան կարող են լինել խոսողի վերաբերմունքն ու տրվող գնահատությունը, այնքան էլ տարբեր ու բազմազան են հավելվող մասերն իրենց բնույթով, ուստի հարկ չկա մանրամասնորեն քննելու դրանք:

Ավելացնենք միայն, որ ինչպես շաղկապավոր, այնպես էլ անշաղկապ հավելական կառույցների լայն կիրառությունները ժամանակակից գրական լեզվում բացատրվում են մի կողմից այդ կառույցների ակտիվության, իմաստային ամենատարբեր հարաբերություններ ու ոճական տարաբնույթ

հատկանիշներ դրսևորելու ունակությամբ, մյուս կողմից՝ խոսակցական բանավոր լեզվի և գրավոր լեզվի մերձեցմամբ:

Գ. ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ ԸՍՏ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԴԵՐԻ

Այս սկզբունքով հավելական կառույցները դասակարգելիս հաշվի է առնվում հավելվող մասի կատարած շարահյուսական պաշտոնը ընդհանուր կառույցում, այսինքն այն հանգամանքը, թե հավելվող մասը ենթակա է, ստորոգյա լ, թե՞ երկրորդական որևէ անդամ, անկախ նրանից՝ այն արտահայտված է բառով, բառակապակցությամբ, թե ամբողջական նախադասությամբ:

Բացի այդ, դրանց պաշտոնը որոշելու համար նկատի է առնվում հիմնականում դրանց բնութագրական մասը:

Ըստ այդմ էլ կարելի է առանձնացնել երկու հիմնական տեսակ.

1. հավելական կառույցներ, որոնց հավելվող մասն արտահայտված է նախադասության գլխավոր անդամով (ենթակա կամ ստորոգյալ).

2. հավելվող մասեր, որոնք երկրորդական անդամի պաշտոն են կատարում (խնդիր, պարագա, որոշիչ և այլն):

Ենթակայով արտահայտված հավելվող մասերը որոշ չափով նման են անվանական միակազմ նախադասություններին, սակայն դա չի նշանակում, թե շարահյուսական այս երկու տարբեր միավորները նույնն են: Դրանց հարաբերակցության մասին պետք է ասել հետևյալը. անվանական միակազմ նախադասությունները անվանում, մատնանշում են փաստը, ունեն նկարագրական բնույթ, օժտված են

ինքնուրույնությամբ, կարող են հանդես գալ անկախ նախորդ մասից և հասկանալի լինել: Օրինակ.

Երևան: Աստաֆյան փողոց (45, 289):

Իսկ ենթակայով արտահայտված հավելական մասը չունի այդպիսի ինքնուրույնություն, այն իմաստային կախման մեջ է իր նախորդից, անհասկանալի է առանց նրա և ոչ թե նկարագրական, այլ հավելական բնույթ ունի: Այսպես.

Հազար վարդեր կրակվեցին շուրջը, կողքին,

Հազար խաշխաշ, ու գարնան օր, ու ծիածան (45, 49):

Ենթակա հավելվող մասերն ունեն տարատեսակ կիրառություններ: Այսպես. հավելվող մասում կարող է արտահայտված լինել միայն ենթական.

Բաժակաճառ ուզում էին ասել ամենքը, նույնիսկ կանայք (46, 250):

Երբեմն ենթակայի հետ միասին լինում են նաև նրա լրացումները.

Գործեսցիք էլ էին մատաղ անում, մինչև անգամ Լալազարանց Հերսեյան (8, 185): Սով ու սարսափ տեսած մարդկանց աչքերի մեջ երջանկություն կար. բայց և խոր հոգնաձություն (2, 85): Նապաստակի միսը կերան ոչ միայն Արմենը, ոչ միայն հաշվապահը, այլև զազանանոցի բոլոր զազաները (19, 223):

Կար մի կարոտ միայն:

Եվ անարատ մի սիրտ: Եվ մի ուղեղ՝

Դեռ անապակ, դեռ ջինջ, դեռ մարուր (45, 124):

Բազմակի ենթակաների տարանջատումը, առանձնացումը հաճախ դառնում է ենթակա հավելական կառույցի առաջացման պատճառ.

Հպարտությունը նրան թույլ չէր տալիս այդ անելու: Եվ անվիճելի իրավացիությունը (50, 80): Անտառում արջեր կան, վարազներ էլ, բորենիներ էլ (26, 55): Դեմքի վրա պարզորոշ

նկատվում էր դժգոհությունը: Նույնիսկ վրդովմունքի արտահայտությունը (58, 12, 74):

Համեմատաբար քիչ են այնպիսի կիրառությունները, երբ հավելվող կառույցը դրսևորվում է նախորդ մասի հիմնական, չարտահայտված ենթակայով: Նման դեպքերում միացող մասը իմաստային մեծ շեշտվածություն է ստանում և վերականգնում ու ձևավորում է նախորդ արտահայտությունը ինչպես բառական, այնպես էլ քերականական ամբողջականացման տեսակետից.

Ակամա ոտքի կանգնեցին: Ե՛վ պաշտպանողները, և՛ չափաշտպանողները (58, 7, 1974): Նրան խելքից պակաս էին համարում: Իհարկե, չիմացողները (Ավ.):

Ստորոգյալի դեր կատարող հավելվող մասերը ժամանակակից հայերենում ավելի հաճախ են հանդիպում, քան ենթակայով արտահայտվածները: Մրանք նույնպես կարող են կազմված լինել միայն ստորոգյալից.

Կախվել էր Իշխանի գոտուց ու ճոճվում էր: Ու շողում, շողշողում էր (37, 34): Այսօր նա գտնվում էր անծանոթ թաղամասում: Մտազբաղ էլ էր (66, 253): Նա իմ տատը չէր: Ազգականն էլ չէր (60, 81):

Կարող է ստորոգյալն ընդարձակված լինել ի հաշիվ նրա հետ եղած լրացումների.

Եվ մարդ ուզում էր անառակ ու գեղեցիկ լիներ: Խաբեր ու ծիծաղեր: Ձեռքերը կոնքերին կանթած՝ ծաղրեր (37, 148): Մեր նախագահը շատ է ծերացել արդեն, չեմ կարողանում բան հասկացնել: Եվ այնքան էլ կամակոր է (11, 205):

Հավելվող կառույցը կարող է արտահայտվել նաև բարդ նախադասությամբ, որի յուրաքանչյուր բաղադրիչ կարող է ունենալ իր առանձին-առանձին ստորոգյալը՝ միայնակ կամ որևէ լրացումով.

Շատ մտախոհ էր, շատ: Եվ մոայլ էր, բարկացած (3, 150): Նազիկը հալալ կաթնակեր, խոնարհ, նամուսով հարս կլինի: Եվ սիրուն է, ի՛նչն է պակաս: Եվ աշխատասեր է (10, 71): Տիրուհիս ոչ միայն չբարկացավ, այլև կարծես գոհ մնաց, մինչև անգամ ինձ շոյեց (38, 58):

Ավելացնենք նաև, որ ստորոգյալ հավելական կառույցը կարող է դրսևորվել ինչպես պարզ, այնպես էլ բաղադրյալ ստորոգյալի միջոցով, որ հավելվող կառույցի ստորոգյալը իր ժամանակային ձևով կարող է համընկնել հիմնական արտահայտության ստորոգյալին (այսինքն ցույց տալ միաժամանակություն) և կարող է արտահայտվել այլ ժամանակային ձևով (այսինքն ցույց տալ տարաժամանակություն): Հասկություններ, որոնք պարզ երևում են հենց վերը բերված օրինակներից:

Ըստ շարահյուսական պաշտոնի դասակարգումը կատարելիս, ինչպես տեսանք, առանձնանում էին նաև այնպիսի հավելական կառույցները, որոնցում հավելվող մասերը կատարում էին նախադասության երկրորդական անդամի դեր: Այդպիսիք նույնպես շատ կիրառություններ ունեն և ընդգրկում են գործածության լայն շրջանակներ:

Նախադասության երկրորդական անդամի պաշտոն կատարող կառույցները կարող են լինել թե՛ անվանական անդամի լրացում (որոշիչ, հասկացուցիչ, բացահայտիչ), թե՛ բայական անդամի լրացում (խնդիր, պարագա):

1. Հավելվող կառույցը իր բնութագրական մասով կարող է կատարել որոշչի պաշտոն (միայն որոշիչը կամ լրացյալի հետ)։

Կովի վայրը գետն էր: Հին ճանապարհի տակով անցնող գետը (8, 237): Հեծանիվներ էին անցնում: Առանց հեծանվորդների: Դեղին գույնի, երկարավուն, ձիգ (19, 178):

Շատ շահասեր մարդ են բժիշկները, մանավանդ հայ բժիշկները (43, 177): Կյանքը դարձավ հավերժական մի փնտրում. Մուք, անհեթեթ, տարօրինակ կյանքը մեր (45, 14): Հիմա Բեթհովենով էր տարված: Ֆյուրտվոնգլերի կատարմամբ (2, 186):

2. Հավելվող մասում կարող է լինել հատկացուցիչ.

Եվ արդեն տանն էր: Հենց իրենց: Իրենց օջախում (11, 9, 1975): Բայց սա էլ արյուն թափել է նշանակում, այն էլ արյունակցի: Հայրերի արյուն (7, 83):

3. Հավելական կառույցում կարող է արտահայտվել նաև բացահայտիչը.

Կնիկդ ինձ ասելով աստում է: Ինձ, կոլեժսկի ռեզիստրատորիս (43, 494): Դրանով արջ սպանե՞լ կլինի, - ասաց Գևորգը՝ դասատուն, - էդ մահակով (37, 130): Ձեզ եմ դիմում, կապուտանցի այրեր: Դիմում եմ ես: Կարճիկ Մաջոս (56, 74):

Բերված օրինակներում շատ պարզ երևում է այն տարբերությունը, որ կա սովորական բացահայտչի և հավելական կառույցով արտահայտված բացահայտչի միջև: Սովորական բացահայտիչը դրվում է բացահայտյալից անմիջապես հետո և տրոհվում բուրով, մինչդեռ երկրորդ դեպքում բացահայտիչն առանձնացվում է բացահայտյալից, իսկ բացահայտումը կատարվում է հավելական երանգով:

Հմտ. Կնիկդ ինձ՝ կոլեժսկի ռեզիստրատորիս, աստում է:

Դրանով՝ էդ մահակով, արջ սպանե՞լ կլինի:

Մասնական բացահայտիչը նույնպես երբեմն առանձնանում է՝ դառնալով հավելում.

Ուղարկեցին մեզ: Իբրև անբաժան օգնականների (58, 12, 1974): Հարձակվեցին ինձ վրա: Որպես օրենքի ներկայացուցչի (19, 266):

4. Ժամանակակից հայոց լեզվում բավական տարածված են նաև խնդրի պաշտոն կատարող հավելական կառույցները: Դրանք մի դեպքում կարող են արտահայտվել ուղիղ խնդրով.

Ես իմ ուրախություններն ու հույզերն եմ շարում: Նաև արցունքները (46, 265): Արտասուքի այդ շիթերն այրում էին ոչ միայն այտերը, այլև սիրտը, դառնացած հոգին (60, 37):

Անուղղակի խնդրով դրսևորվելու դեպքում հավելվող մասը կարող է ցույց տալ վերաբերություն (Ես ծածկում եմ գիրքը, մտածում: Տղայի մասին: Եվ մանավանդ՝ հոր: 46, 255), միջոց (Հանդիսատեսին պետք է գրավել ոչ թե բառերով, այլ հենց պրոցեսով: Մտքերով, խոհերով, չարտահայտվածի ամբողջ բովանդակությամբ: 11, 8, 1975), անջատում (Չանձրացել էր այս ամենից: Այս քաշքշուրից ու բամբասաններից: 24, 394), հանգում, մատուցում (Վերջում պարզվեցին հանձնեցին: Նախ աշխատանքի վետերաններին, ապա առաջավոր երիտասարդներին: Մետ.) և այլն:

Հավելվող մասերը հաճախ են հանդես գալիս նաև որպես պարագաներ: Եվ ինչքան բազմազան են պարագաները, այնքան էլ բազմազան են դրանց պաշտոնը կատարող կառույցները թե՛ իրենց բնությամբ, թե՛ կիրառությամբ: Ըստ այդմ էլ հավելվող մասը կարող է լինել ձևի պարագա.

Եվ հեկեկաց: Ուրախ ու հուսահատ, երջանիկ ու վշտաբեկ (60, 57): Պարեց: Անվստահ ու անճարակ: Չեղբերի ու ոտքերի պատահական շարժումներով (19, 281): Պատրաստ են լուրը քննարկելու: Եվ մեծ սիրով (11, 102):

Հավելական կառույցը կարող է լինել ժամանակի պարագա.

Ես արդեն մենակ եմ: Կեսօրից (56, 14): Մրգահյութից նա մի կուր էր արել միայն, այն էլ գրեթե երեք ժամ առաջ (56,

7): Պարադոքսալ է թվում այդ գուգակցությունը, բայց կա, գոյություն ունի: Շուրջ կես դար (32, 11, 1974):

Հավելվող մասը կարող է կատարել նաև տեղի պարագայի պաշտոն.

Ես էլ էի ննջել: Հենց նստած տեղս (12, 143): Ի՞նչ խարդախություն կարող է լինել անմեղ թոչունների սիրային պայքարում, այն էլ օդում (22, 195):

Որպես պարագա հանդես եկող հավելվող մասը կարող է ցույց տալ նաև միասնություն (Ես մի փոքր գործ ունեմ ձեր ընկերոջ հետ: Ձեզ հետ էլ: 56, 43), պայման (Օ՛, ինչպիսի հաճույք կստանաս... Եթե այլանդակի նրան: Վիրավորի նրա պատիվը: 50, 551), նպատակ (Իսկ հիմա ես ձեր աչքերի լույսը կհանեմ, որ դուք ապրեք ու տանջվեք: Որ խառնակիչները տեսնեն, թե ինչպես եք խարխափում: 7, 38) և այլն:

Վերը շարադրվածից և բերված օրինակներից պարզորոշ երևում է, որ ժամանակակից հայերենում հավելվող մասերն օժտված են շարահյուսական պաշտոն ստանալու հատկությամբ և որպես այդպիսիք նրանք միանգամայն ազատորեն կարող են կատարել թե՛ նախադասության գլխավոր անդամների պաշտոն, և թե՛ հանդես գալ երկրորդական անդամների պաշտոնով:

Դ. ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ ԸՍՏ ԱՐՏԱՀԱՅՏԱԾ ԻՄԱՍՏԻ ԵՎ ԴՐՍԵՎՈՐԱԾ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ

Իմաստային տեսակետից որպես հավելում հանդես գալը, հավելական հարաբերությունն արտահայտելը հավելական կառույցների իմաստային ընդհանուր հատկանիշն է: Մակայն ըստ արտահայտած իմաստի և հարաբերության

դրանց դասակարգումը կատարելիս այս ընդհանուր առանձնահատկությունը պետք է դիտարկել երկու տարբեր կողմերից:

1. Մի դեպքում պետք է հաշվի առնել այդ հավելման բնույթը, այսինքն թե ինչ իմաստ կամ ինչպիսի բնույթ ունի հավելվող մասը. այն բովանդակում է լրացուցիչ միտք, փաստ, մանրամասն, կարևոր տեղեկություն և հաղորդվում, թե՞ կատարվում է ասվածի գնահատությունը, արտահայտվում է վերաբերմունք, տրվում ընդհանրացում:

Ըստ այդ մոտեցման տարբերակվում են.

ա. լրացուցիչ միտք, իրողություն, մանրամասն հաղորդող կամ ճշգրտում կատարող հավելական կառույցներ.

Տե՞ր ես մինչև ի մահ: Հնագա՞նդ ես մինչև ի մահ: Ժժբախտության դեպքում, փորձանքի, հիվանդության: Թշվառության ու ձախորդության: Աղետի ու արսորի (19, 108): Ջենքերը հանձնեցին գաղթող խմբերում գտնվող երիտասարդներին: Տասը մաուզեր (3, 87): Մրանք մեր գորգուղիներն են: Իջևանի արտադրանք (58, 11, 75):

բ. կարևոր տեղեկություններ բովանդակող, կարևոր հանգամանքներ բացահայտող հավելական կառույցներ.

Կապույտ արևով կալանավորը միայն մի ձգտում ուներ: Եվ ազատությունն էր դա (25, 151): Նա մենակ է հիմա: Եվ մենակ է հենց իր մեղքով (56, 9): Հեռվից ճանաչում եմ նրան: Ճանաչում եմ քայլվածքից: Ձեռքը գոտու վրա պահելու սովորությունից (18, 10):

գ. վերաբերմունք, գնահատություն արտահայտող հավելական կառույցներ.

Այլևս չէր տնքում, ոչ էլ օրորվում էր, և դա ինձ ուրախացրեց (32, 11, 1974): Գյուղի վրա իջնում էին այծերի ու ոչխարների հոտերը: Եվ ինչ աշխույժ աղմուկով, ինչպիսի

զվարթությամբ (8, 131): Նա կոլեկցիոներ էր և խրախճանքի սիրահար: Երկուսն էլ թանկ հաճույքներ (40, 75):

դ. ընդհանրացում, ամփոփում կատարող հավելվող մասեր.

Ես էլ ասում եմ ինչու՞ է հնձածներս քիչ: Պավլեն չկա. այ թե ինչու է քիչ (37, 87): Գնացել է: Շուռ է եկել ու գնացել: Սովորական մի բան: Եվ, ինչպես ասում են, դարիս հիվանդություն (11, 9, 1975):

Ըստ արտահայտած իմաստի՝ հավելյալ կառույցների դասակարգումը կատարելիս պետք է հաշվի առնել ինչպես հավելվող մասի իմաստային նշանակությունը, այնպես էլ միացող բաղադրիչների միջև դրսևորված շարահյուսական հարաբերությունը:

Այսպիսի մոտեցմամբ նախ կառանձնանան համադասություն կամ ստորադասություն ցույց տվող հավելյալ կառույցները.

Եվ կհարցնեմ ձեր որպիսությունը, նաև ինձ բարի հիշողաց (8, 243, համադասություն): Դժգոհ չեմ քեզանից: Թեկուզ և կտրվեցիր ընդունելության քննություններից (10, 66, ստորադասություն):

Մյուս կողմից կարող ենք առանձնացնել համեմատություն (Ինչպես որ խոսում ես, այնպես էլ պիտի գրես էլի: Ն.), պայման (Բարձրաձայն կկարդաս այն, ինչ ես հիմա կգրեմ: Միայն լսելի ու պարզ: 49, 29), պատճառ (Մրճարանը տեղավորված է փողոցի մակերեսին հավասար, և դրանից էլ այստեղից վատ եմ տեսնում հրապարակը: 48, 4), նպատակ (Ստիպված է՝ ինքը գնալու: Որ անձամբ տեսնի: 50, 108), ձև (Եվ պատմեց այդ ծերացած կինը: Առանց արցունքների, աչքերում՝ անտարբերություն: 60, 53), ժամանակ (Դա էր մեր զբաղմունքը: Ամեն օր: Առավոտից-իրիկուն: 5, 71), չափ ու

քանակ (Եվ ինչքան շատ կոտորեցին: Շատ: Երկու միլիոն: ԳԹ) և այլն ցույց տվող հավելյական կառույցներ:

Ե. ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ ԸՍՏ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԵՎ ԵՂԱՆԱԿԱՎՈՐՈՒԹՅԱՆ

Հաղորդակցական յուրաքանչյուր միավորի թե՛ արտահայտության, թե՛ բովանդակության պլաններում այս կամ այն միջոցներով, այս կամ այն չափերով դրսևորվում է նաև խոսողի վերաբերմունքը իրականության ու ասվածի նկատմամբ, որն էլ ընդհանուր առմամբ գնահատվում է որպես եղանակավորություն: Դա նշանակում է, որ ըստ հաղորդակցական տեսակների և եղանակավորության դասակարգում կատարելիս առաջին հերթին պետք է նկատի ունենալ հենց վերաբերմունքի արտահայտման իմաստային-քերականական կողմերը: Մովորաբար լեզվաբանները նախադասության հաղորդակցական տարբեր տեսակների առանձնացման հիմքում դնում են խոսողի նպատակը, նպատակադրումը⁸⁶, այսինքն այն, թե ինչ նպատակով է խոսողը մտնում հաղորդակցության մեջ՝ ինչ-որ իրողություն հաղորդելու, պատմելու, փոխանցելու, տեղեկացնելու համար, թե՛ ինչ-որ հարցում է ուզում անել որևէ բան իմանալու, տեղեկություն ստանալու համար, ուզում է արտահայտել իր կարծիքը, միտքը, կամքն ու ցանկությունները լսածի վերա-

⁸⁶ См. *Грамматика русского языка II*, часть первая, М., 1954, էջ 355, *Современный русский язык*, Синтаксис, М., 1957, էջ 95:

բերյալ, գնահատել այն, թե՞ դրդել մեկին՝ կատարելու կամ չկատարելու ինչ-որ արարք, գործողություն և այլն:

Այս սկզբունքը որոշ ճշգրտումներով ու լրացումներով հստակորեն ամրակայվեց նաև հայ լեզվաբանության մեջ, որի կիրառմամբ էլ մի կողմից առանձնացվեցին հաստատական և ժխտական նախադասություններ, իսկ մյուս կողմից՝ պատմողական, հարցական, բացականչական ու հրամայական երանգի նախադասություններ: Իսկ ի՞նչ ճշգրտումներ էին կատարվում: Դրանք վերաբերում էին նախադասության հաղորդակցական տեսակների նշանակավորությունը պայմանավորող գործոններին:

1975-ին լույս տեսած «Հայոց լեզու, II մաս, Շարահյուսություն» բուհական դասագրքում նախ ակնարկվում էր, որ «այս նախադասությունները հաճախ իրենց կառուցվածքով չեն զանազանվում, բայց երբեմն էլ մեկը կամ մյուսը օժտվում է սպասարկու բառերով, փոխվում է խոնարհման եղանակը, ժամանակը, շարադասությունը և այլն: Այս հատկանիշները հիշյալ նախադասությունները զանազանելու երկրորդական գործոններն են: Սրանց հիմնական տարբերակիչ հատկանիշը հնչերանգն է (ընդգծումը մերն է՝ Ն.Ս.), որը բոլոր պարագաներում պարտադիր քերականական հատկանիշ է այս նախադասությունները զանազանելու համար»⁸⁷:

Իսկ ընդամենը մեկ տարի հետո հրատարակված «Ժամանակակից հայոց լեզու» ակադեմիական քերականության մեջ արդեն հաստատվում է հիմնական դրույթը, որ ինչքան էլ նպատակը որոշակի կարևորություն ունի նախադասության քննվող տեսակների մեջ, այնուամենայնիվ, գե-

⁸⁷ Ս.Գ.Աբրահամյան, Վ.Դ.Առաքելյան, Վ.Ա.Քոսյան, *Հայոց լեզու, II մաս, Շարահյուսություն*, Ե., 1975, էջ 116-117:

րադասելի է դասակարգման հիմունք դարձնել ոչ թե խոսողի նպատակը, նպատակադրումը, այլ հնչերանգը (որպես ամենակարևոր գործոն) և նախադասության երանգի ձևավորումը պայմանավորող բառաքերականական միջոցները (ստորոցյալի եղանակային արտահայտություն, վերաբերականներ, ձայնարկություններ և այլն): Շեշտվում է նաև այն միտքը, որ միևնույն երանգի նախադասությամբ կարող են արտահայտվել տարբեր նպատակներ և ընդհակառակը՝ տարբեր երանգի նախադասություններով կարող է արտահայտվել նույն նպատակը⁸⁸:

Արված դիտարկումները միանգամայն ընդունելի ու կիրառելի են նաև հավելական կառույցների դասակարգման համար: Եվ մոտեցումն էլ դարձյալ նույնն է. հավելումների հաղորդակցական տարբեր տեսակները, վերաբերմունքի ու համապատասխան հնչերանգի դրսևորման տարբեր ձևերն առանձնացնելիս ուշադրությունը հասկացվում է ընդհանուր կառույցի հենց հավելվող մասին:

Քանի որ հավելական կառույցների տարբեր հաղորդակցական տեսակների, եղանակավորության ու հնչերանգային դրսևորումների բազմազանության վերաբերյալ տեսական ու փաստական դիտարկումներ արդեն բավականաչափ արվել են տարբեր առիթներով ու մյուս սկզբունքներով կատարված դասակարգումների ժամանակ, այս դեպքում բավարարվենք դրանց հիմնական տեսակների հակիրճ թվարկումով ու բնութագրությամբ:

⁸⁸ Մ.Գ.Աբրահամյան, Ն.Ա.Պառնասյան, Հ.Ա.Օհանյան, Խ.Գ.Բադիկյան, *Ժամանակակից հայոց լեզու*, հ. 3, Շարահյուսություն, Ե., 1976, էջ 504-513:

Առավել տարածված են պատմողահավելական բնույթի կառույցները՝ իրենց երկու ենթատեսակներով՝ հաստատահավելական և ժխտահավելական:

Հաստատահավելական կառույցների հիմնական մասի (արտահայտության) մեջ ասվում, հաղորդվում է որևէ միտք, իրողություն, իրականության որևէ երևույթ, իսկ հավելվող մասում հաստատվում է այն, ներկայացվում որպես իրական փաստ, եղելություն, կատարվող, կատարված կամ կատարվելիք գործողություն կամ էլ սովորական հավելում, մտքի շարունակություն:

Մեկը ինձ մեկնեց ծաղիկը, մյուսներն էլ նրա օրինակին հետևեցին (8, 33): Բնությունը մարդուն կյանք է պարգևում, և դա մարդու մեծագույն երջանկությունն է (27, 14): Մեղքն ընդունում է դեկավարների առջև: Նաև մտքի մեջ է մեղքն ընդունում (37, 132): Իսկ առավոտյան ստացա ճաշի մնացորդներ, այլև փափուկ հաց (38, 56): Վիրավորված ոտքը սաստիկ ցավում է, համ էլ հեռվից երևում է (58, 1, 1976):

Իսկ ժխտահավելական կառույցներում մասնակի կամ լրիվ ժխտվում է հիմնական մասի մեջ ասվածը (միտք, փաստ, իրողություն, հատկանիշ, գործողություն և այլն):

Ու ինչպես հայոց լեզվում ընդհանրապես, այս կառույցներում ևս այդ ժխտումը կատարվում է համապատասխան բառի, բայի կամ օժանդակ բայի սկզբից ոչ, չ մասնիկների ավելացումով: Այդ բառերը կամ ժխտական խոնարհման ձևերը հանդես են գալիս հավելվող մասում:

Այդ հարցը լուծելու համար իրեն պիտանի չէր համարում, նմանապես և մայրը որևէ աշխատանքի պիտանի չէր (58, 12, 1974): Ոչ մեղեդի մնաց, ոչ էլ մեղեդի երգող ձայն (11, 48): Հուշարձանի մոտ ծաղիկներ չկային: Նույնիսկ չորացած ծաղիկներ (46, 208): Օնոդներ չունեք, սպանել էին: Քույր ու եղբայր էլ չունեք (3, 98):

Պատմողահավելական բնույթի նախադասություններում, անկախ այն բանից՝ կատարվում է հաստատում թե ժխտում, հավելվող մասի ստորոգյալը կարող է լինել թե՛ բաղադրյալ, թե՛ պարզ: Բաղադրյալի դեպքում ստորոգյալի հանգույցի հետ կարող են գործածվել տարբեր խոսքի մասերով արտահայտված ստորոգելիներ:

Սրահում տաք էր, նաև հաճելի: Ու տխուր (56, 253): Ես Դարթիին ստիպեցի, որ մինչև վերջին պեննին ընծայագրի կնոջը, և դա բարեբախտություն էր (11, 23): Նախագահը նրանց վրա չի գոռոռում, որովհետև գոռոռալը տնավարություն է, իսկ այս գյուղը մի տուն լինելու համար շատ է մեծ (37, 195):

Իսկ պարզ լինելու դեպքում հավելվող մասի ստորոգյալը գլխավորապես արտահայտվում է սահմանական եղանակի խոնարհված որևէ բայաձևով, թեև ըղձական, հարկադրական և ենթադրական եղանակի բայաձևերն էլ կարող են հանդես գալ այդ դեպքում:

Աստված մեզ տվել է գեղեցիկ Հոփսիմեին, որի պատճառով հարուստ փեսա կունենանք... Եվ մենք էլ գուցե կհարստանանք (62, 540): Ինչ լավ կլինի: Էրնեկ էն օրը... Երեխիս էլ պիտի մկրտեմ (62, 36): Դրա կարիքը չկա, բայց թող գա: Նաև իմանամ սրտի ուզածը (20, 111):

Եթե հավելվող մասի ստորոգյալը հրամայական եղանակի բայաձև է լինում, ապա այն սովորաբար փոխում է նաև իր երանգը՝ պատմողականից վերածվելով հորոքրահավելականի:

- Ուզում եմ, բայց ձու՛ էլ տուր (ԳԹ):

Յույց տուր, թե քեզ ոչինչ հայտնի չէ և լռի՛ր: Այլև անտեղի մի՛ վիրավորիր, մի՛ ջրիկացիր (12, 55): Եթե պետք է, անունը տուր: Դեռ ազգանունն էլ հիշեցրու (31, 212): Թե մաժուն ունես, տու՛ր: Համ էլ թե՛յ գցիր (8, 8):

Նկատելի է, որ ստորոգյալի արտահայտությունը նախադասության երանգը, հաղորդակցական տեսակը պայմանավորող վճռորոշ գործոններից է, բայց այդ հարցում ավելի վճռորոշ է հնչերանգի դերը: Հիմնականում դա է պատճառը, որ գրեթե բոլոր եղանակային ձևերով ստորոգյալ ունեցող կառույցները, ինչպես նաև մի շարք բայական անվանական միակազմ նախադասություններ, միայն հնչերանգի շնորհիվ կարողանում են դառնալ հորդորահավելական: Նման դեպքերում հրամայական եղանակի բայաձևը կարող է առկա լինել ընդհանուր կառույցում, գուգակցվել մյուս միջոցների հետ, նաև առկա չլինել, բացակայել կամ գեղջվել:

Դու հիմա գնում ես նրա մոտ, ամեն ինչ ազնվորեն պատմում ես: Ու նաև ներողություն ես խնդրում (10, 67): Չմոռանա՛ս, կասե՛ս անպայման, հրավիրատումսն էլ հենց իր ձե՛ռքը կտաս (50, 304): Հողի՛ն հավասարեցնել Խնձրստանը, թրի՛ քաշել մեծին ու փոքրին: Լսու՛մ ես, սարբազ, և դա հե՛նց այսօր (7, 69): Երբեք հարազատներիդ վատը մի՛ կամեցիր: Ուրիշներին ևս վատ բան չանես (12, 34): Հո դժվար բան չէ: Եվ ամեն ինչ ինքդ պիտի անես, Լն խարդախներից ոչ մեկին չպիտի՛ կանչես: Եվ ո՛չ մի ծուլություն կամ թեթևստիկություն (24, 614): Սկսեցի՛ նք: Դե, ձեզ տեսնեմ (50, 338):

Նախադասության հաղորդակցական տեսակի ձևավորման համար հնչերանգի գերակա դերը ավելի ցայտուն է երևում հարցական երանգի նախադասությունների ժամանակ: Եթե նախորդ դեպքում բայեղանակների համակարգում գոնե առկա էր հրամայական եղանակը և կարելի էր դիտարկել այդ եղանակային ձևով արտահայտված ստորոգյալի ու հրամայական երանգի կապը կամ համապատասխանության աստիճանը՝ պարզելով ստորոգյալի ունեցած մեծ կամ փոքր նշանակությունը, դերը, ապա այս դեպքում նման հարցադրում անելն իսկ դառնում է անստեղծ, որովհետև հայե-

րենի բայական համակարգում հարցական եղանակ գոյություն չունի: Ճիշտ է, մասնակի նշանակություն կարող են ունենալ առանձին դերանուններ (հարցական), շաղկապներ, շաղկապական բառեր, վերաբերականներ ու ձայնարկություններ, բայց հարցական երանգի նախադասություն ձևավորող գլխավոր գործոնը մնում է հարցական հնչերանգը: Այս յուրահատկությունը գործում է նաև հարցահավելական կառույցների դեպքում: Նույն կառուցվածքը, բառային հագեցվածությունն ու շարադասությունն ունեցող նախադասությունները, լեզվական միավորները, միայն հարցական հնչերանգ ստանալով, կարող են վերածվել հարցահավելական կառույցի: Եվ դա նույնիսկ այն դեպքերում, երբ դրանցում եղած ստորոգյալը դրված է հրամայական եղանակի բայաձևերով (թեև այս վերջինը տեղի է ունենում հատկապես այս դեպքերում, երբ «խոսողը ցանկանում է որևէ պատճառով հարց տալ խոսակցի, որևէ մեկի կամ իր արտահայտած հրամայական եղանակի բայաձևի մասին»⁸⁹):

Ես ոչ մեկի չեմ պատմել դրությունս, չեմ գանգատվել... Եվ կարեկցո՞ղն ով է, կարեկցեն էլ՝ ի՞նչ օգուտ (41, 93): Դուք ինչու՞ եք անդադար պատմում Դիկի մասին: Որպեսզի ինձ պահեք հեռավորության վրա՞: Որպեսզի պաշտպանվե՞ք ինձնից (24, 685): Դա այն ճիվաղն էր, որ մատնել էր մեր ծնողներին... Ու դու նրան ուղղակի ասացիր՝ գնացե՞ք (58, 8, 975):

Հմնտ՝ ... Ու դու նրան ուղղակի ասացիր՝ գնացե՛ք:

⁸⁹ Ս.Գ.Աբրահամյան, Ն.Ա.Պառնասյան, Հ.Ա.Օհանյան, Խ.Գ.Բուդիկյան, *Ճամանակակից հայոց լեզու*, հ. 3, Շարահյուսություն, էջ 522:

Ներքին դող չգագ: Արցունքն էր էլ չտեսալ (31, 218):
Քո ամեն ինչը հիմա նրա ձեռքում է: Միրող և՛ ս նրան է
պատկանում (Ավ.):

Այդ հարցումը կարող է պատասխան պահանջել կամ չպահանջել, վերաբերել ամբողջ արտահայտությանը կամ միայն որևէ անդամի, լինել իսկապես որևէ բան իմանալու, ճշտելու համար տրված հարց կամ որևէ մտքի, իրողության հաստատում և այլն: Բոլոր դեպքերում էլ պարտադիր է հարցական հնչերանգի առկայությունը: Գրավոր խոսքում այն արտահայտվում է հիմնականում նույն սկզբունքներով ու կանոններով, որոնցով առաջնորդվում ենք շեշտադրության ժամանակ (օժանդակ և հարադիր բայ, կոչական, հրամայական եղանակի բայաձև, հարաշեշտություն, տրամաբանական շեշտ):

Ճարտասանական հարցումը նույնպես կարող է դրսևորվել հարցահավելական կառույցներում, բայց այս դեպքում տրված հարցին ոչ միայն պատասխան չի ակնկալվում, այլև հարցը հանդես է գալիս որպես հնարավոր պատասխանի ժխտում:

Այրուձիերի դոփյունների տակ
Ճամփեքին ընկած քար կմնար
Քարից հաց քամող, քարին թև տվող,
Քարերի երկիր Հայաստանս:
Էլ ո՞վ կարող է, ո՞վ կհանդգնի
Վայրի մոլուցքով դարձնել նորից
Ավերի երկիր, ցավերի երկիր,
Դավերի երկիր Հայաստանս (52, 50-51):

Ո՛չ, դա հավատալու բան չէ: Եվ մի՞ թե բարություն անելը
հանցանք է (66, 139):

Եվ հիմա կրծքի մեջ քո ծոված

Ցավում է քո սիրտը կոտրված...

Եվ ո՞ւմ ինչ մրմուռը քո ցավի,

Ա՛խ, զոնե մի սիրտ էլ չցավի՞,

Որ սիրտն է կոտրվել (51, 148):

Մահ տաս, հետո փոշմանես...

Էլ քո ի՞նչն է իմաստուն,

Երբ մահ տվիր և մարդուն (42, 67):

Երբեք չի մեռնի քնքուշ լիրիկան,

Այն ո՞ր գարունն է, որ վարդ չի բերել,

Այն ո՞վ է, որ իր սիրած աղջկան

Չի տենչում թեկուզ երգով համբուրել (42, 38):

Ասվածն ամբողջությամբ կարող է վերաբերել նաև բացականչահավելական կառույցներին: Հայերենում բացականչական եղանակ նույնպես չկա: Նշված երանգի նախադասություններում ստորոգյալը (եթե կա) մեծ մասամբ արտահայտվում է ըղձական եղանակի բայաձևերով, բայց դրա ազդեցությունը էական չէ, որովհետև մյուս եղանակների բայաձևերն էլ ազատ կարող են հանդես գալ ստորոգյալի դերում, առանձնապես հատուկ դեր չունեն նաև բառական ու շարադասական միջոցները: Մա նշանակում է, որ բացականչահավելական կառույցներում էլ վճռորոշ չափանիշը հենց բացականչական հնչերանգն է: Եվ գրավոր խոսքում էլ բացականչական նշանը գործածվում է այնպես, ինչպես շեշտն ու հարցական նշանը:

Նա անում էր այն, ինչ պետք էր: Եվ անում էր հանգիս՛տ, մտածվա՛ծ... Անու՛մ էր (50, 284): Դրանք բոլորն էլ մարդիկ էին, որոնք անպայման ուզում էին որևէ բան կորցրած լինել: Ու նաև հաջողությամբ կորցնու՛մ էին: Նույնիսկ ամենաթանկագի՛նը (56, 9): Մրանք ժողովուրդն է ստեղծել...

Եվ ի՛նչ սիրով է ստեղծել (27, 46): Նախ հաղթանակել: Իսկ հաղթանակելու համար պետք է դիմանա՛լ (50, 551): Այնքա՛ն եռանդ ունե՛ի աշխատելու և այնպիսի կորո՛վ... Եթե մնացա՛ծ լինե՛ր այդ երիտասարդությունը (8, 22):

Որքա՛ն ցավեր տվին, առա՛ն,
Որքա՛ն սևեր, սևե՛ր, սևե՛ր,
Տարինե՛րս, տարինե՛րս...
Որքա՛ն չասված խոսքեր տարան,
Որքան չասված սերե՛ր, սերե՛ր,
Տարինե՛րս... (51, 190):

Մեր լեզվում հավելական կառույցների գործուն լինելը, դրանց հաղորդակցական տեսակների, եղանակավորության դրսևորումների բազմազանությունը առանց դժվարության կարելի է նկատել՝ դիտարկելով նաև դրանց երկու պարտադիր մասերի (հիմնական և հավելվող) փոխհարաբերությունն այդ տեսակետից: Պատմողական երանգի կառույցներում, օրինակ, երկու մասերն էլ կարող են լինել պատմողական (կադապարը՝ պատմողական + պատմողական): Բայց համատեղելիության տարբեր չափերով ու գործածության տարբեր հաճախականությամբ կարող են զուգադրվել և խառը երանգային համակցություններ ձևավորվել նաև ըստ հետևյալ կադապարների՝ պատմողական + հարցական, պատմողական + հորդորական, պատմողական + բացականչական: Հարցական երանգի դեպքում կարող ենք առանձնացնել շարահյուսական հետևյալ կադապարները՝ հարցական + հարցական, հարցական + պատմողական, հարցական + հորդորական, հարցական + բացականչական: Այս նույն սկզբունքով կարելի է համապատասխան խմբավորումներ կատարել մյուս երանգի կառույցների համար:

Այսպիսով, հավելական կառույցների դասակարգումը կատարվեց ըստ հետևյալ հիմնական սկզբունքների. ըստ կառուցվածքի, ըստ միացման միջոցի, ըստ շարահյուսական պաշտոնի, ըստ արտահայտած իմաստի դրսևորած շարահյուսական հարաբերության, ըստ հաղորդակցական տեսակների և եղանակավորության:

Այս սկզբունքների միջև անջրպետ չպետք է դնել: Դրանցից յուրաքանչյուրը բնութագրում է հավելական կառույցները որևէ կողմով և ունի ինչպես միայն իրեն հատուկ առանձնահատկություններ, այնպես էլ մյուս սկզբունքների հետ շփման ու մերձեցման ընդհանուր եզրեր, ընդհանուր հատկանիշներ: Հավելական կառույցների դասակարգումը կատարելիս այս սկզբունքները կարելի է կիրառել թե՛ առանձին-առանձին, թե՛ միասնաբար: Դասակարգման սկզբունքների այսպիսի քանակությունն ընդգրկում է հավելական կառույցների միացման ձևերին, նրանց շարահյուսական, կառուցվածքային և իմաստային կողմերին վերաբերող առավել ընդհանուր և առավել բնութագրական հատկանիշները, հատկանիշներ, որոնք բավարար ամբողջությամբ ներկայացնում են հավելական կառույցներն իրենց բազմազանությամբ, ընդհանրություններով ու առանձնահատկություններով:

ՀԱՎԵԼԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՅՆԵՐԻ ՈՃԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ

Հավելական կառույցների ընդհանուր բնութագրության ժամանակ, ինչպես նաև դասակարգում կատարելիս, քննվեցին դրանց իմաստային, քերականական բազմաթիվ առանձնահատկություններ: Մակայն միայն դրանց բացահայտմամբ չի կարող սահմանափակվել հավելական կառույցների ուսումնասիրությունը: Առաջնալով նախ ժողովրդախոսակցական լեզվում և աստիճանաբար փոխանցվելով նաև գրական լեզվին՝ դրանք հանդես են բերել ինչպես իմաստային, քերականական նոր յուրահատկություններ՝ դառնալով լեզվական միավորների կապակցման գործուն տեսակներ, այնպես էլ ձեռք են բերել ոճական տարատեսակ արժեքներ, ընդարձակել ոճական հնարավորությունները:

Այն հանգամանքը, որ միևնույն միտքը իմաստային տարբեր նրբերանգներով և տարբեր կառուցվածքով կարող է դրսևորվել, միայն իմաստային և քերականական հարց չէ: Դա նաև ոճի հետ է կապված: Այսպես.

Իմ ու քո եղբայրները գնացին քաղաք՝ քննություն հանձնելու:

Իմ ու քո եղբայրները գնացին քաղաք, որ քննություն հանձնեն:

Իմ ու քո եղբայրները գնացին քաղաք: Քննություն հանձնելու:

Անշուշտ, բերված օրինակների տարբերությունը միայն կառուցվածքային, քերականական կողմը չէ, և ոչ էլ միայն այն, որ նույն միտքը մի դեպքում արտահայտված է պարզ կամ բարդ նախադասությամբ, իսկ մյուս դեպքում գործ ու-

ներք հավելական հարաբերության հետ: Այստեղ կարևոր է նաև ոճական կողմը, ոճի ընտրությունը:

Ավելացնենք, որ այս նույն միտքը կարող է արտահայտվել հավելական այլ նրբերանգներով ևս, ինչպես.

Ոչ միայն իմ, այլև քո եղբայրը գնաց քաղաք՝ քննություն հանձնելու:

Ինչպես իմ, այնպես էլ քո եղբայրը գնաց քաղաք, որ քննություն հանձնի:

Իմ եղբայրը գնաց քաղաք՝ քննություն հանձնելու: Քոնը ևս, և այլն:

Ասվածից պարզ երևում է, թե հավելական կառույցների ուսումնասիրության համար որքան կարևոր են ոճական առանձնահատկությունները, քանի որ շարահյուսական միավորների կապակցման հավելական տեսակը նաև ոճական յուրահատուկ հնարք է:

Բազմազան են հավելական կառույցների ոճական կիրառությունները, հարուստ են նրանց ոճական հնարավորությունները, և դրանց ամբողջական, մանրագին քննությունը նույնիսկ մի առանձին ուսումնասիրության նյութ կարող է լինել:

Հավելական շաղկապների և կառույցների, դրանց տարբեր տեսակների ոճական արժեքները, դրանց առաջացման և հարստացման ընթացքը, դրանց քննությունը՝ լեզվի զարգացման տարբեր փուլերի հետ կապված, այդ շաղկապների ու կառույցների ոճական տարբեր հնարքների ու հատկանիշների բացահայտումը ըստ լեզվի գործառական տարբեր ոճերի, դրանց կողմից լեզվաոճական ընդհանուր գծերի, օրինաչափությունների և միայն իրենց բնորոշ առանձնահատկությունների դրսևորումները և այլն՝ ահա հարցեր, որոնք բավականաչափ առատ նյութ կարող են տրամադրել ուսումնասիրության համար:

Մակայն մեր նպատակը տվյալ դեպքում այդպիսի ամբողջական քննություն կատարելը չէ: Մենք մտադիր ենք միայն ընդհանուր գծերով նշել հավելական կառույցներին հատուկ որոշ ոճական կիրառություններ՝ ելնելով լեզվի զարգացման տարբեր շրջանների և լեզվի գործառական տարբեր ոճերի հետ ունեցած նրանց հարաբերությունից:

Հավելական կառույցները հայոց լեզվում հանդես են եկել հնագույն ժամանակներից: Այդ մասին են վկայում դեռևս հեթանոսական շրջանի բանահյուսությունից մեզ հասած որոշ նմուշներ, որոնք հատվածաբար փրկված փշրանքներ են, սակայն այդ քիչ պատառիկներում էլ արդեն առկա են հավելական կառույցներն՝ իրենց ոճական համապատասխան գործառությամբ:

Մասնավորապես, նկատվում է ոճական կրկնությունների միջոցով նոր փաստերի, տվյալների հավելում.

Երկներ երկին, երկներ երկիր,

Երկներ և ծովն ծիրանի.

Երկն ի ծովուն ուներ և զկարմրիկն եղեգնիկ (39, 9):

Վիպասանքի բանահյուսական նմուշներում կամ, ինչպես ընդունված է ասել՝ վիպասանական հայերենում⁹⁰, պարզորոշ երևում է նաև ամենաակտիվ ու գործուն շաղկապի՝ և-ի ոճական կրկնությունների միջոցով խոսքի հաջորդական շղթաների կապակցումը, խոսքի զարգացման ընթացքային դրսևորումը.

Եւ հանեալ զոսկէօղ շիկափոկ պարանն,

Եւ անցեալ որպես զարծուի սրաթն ընդ գետն,

Եւ ձգեալ զոսկէօղ շիկափոկ պարանն՝

Ընկեց ի մէջք օրհորդին ալանաց.

⁹⁰ Տես, Օրինակ, Մ. Աբեղյան, *Երկեր*, հ. Ա., Ե., 1966, էջ՝ 94-97, հ. Գ, Ե., 1968, էջ 50-56, հ. Ը, Ե., 1985, էջ 67-72 և այլն:

Եւ շատ ցավեցոյց զմէջք փափուկ օրիորդին... (39, 4):

Աստիճանաբար և շաղկապի այսպիսի կիրառությունները դառնում են ավելի հաճախական, հաղորդում նորանոր նրբերանգներ:

Կերան գազանք զմարմինս դիականցն և գիրացան.

Կուզ կերեալ ուռեալ որպէս զարջ.

Եւ աղուէս հպարտ եղև քան զառեւծ,

Գայլ, քանզի շատակեր էր, պայթեաց.

Եւ արջ, քանզի զոր ուտէն,

Չմնայ առ ինքն, ի սովոյ մեռալ.

Եւ անգեղք... և այլն (39, 14):

Բերված հատվածում մի կողմից բացահայտվում, կոնկրետանում է գազանք-ի ընդհանուր իմաստը, մյուս կողմից էլ և-ի ոճական կրկնությունների միջոցով այդ հաջորդաբար թվարկվող անդամների միջև դրսևորվում է հավելական հարաբերություն:

Գրաբարյան հայերենում արդեն ժողովրդական բանահյուսության հնագույն նմուշների համեմատությամբ նկատելի է տեղաշարժը հավելական կառույցների ոճական կիրառությունների հարցում: Ամենից առաջ ընդարձակվում են հավելական շաղկապների սահմանները, ձևավորվում ու առաջանում են մի շարք նոր հավելական շաղկապներ՝ ոչ միայն...այլև, ոչ միայն...այլ նաև, ևս, նոյնպես և, սոյնպես և և այլն:

Որք ոչ միայն վասն դիւական սատանայակիր բարուցն ճիւաղութեան, այլ էլ վասն խեցբեկագոյն եւ խոշորագոյն լեզուին՝ դժուարամատոյցք էին (30, 102):

Ոչ միայն ի չափաւոր մարդիկ, այլ էլ յոր մեծն է քան զամենայն (18, 28):

...Յիշէր որ ընդ Պարսից արքային ուխտեալ էր: Նա էլ գիտատմունսն յիշէր գպարգևացն ...Առնոյր զթագաւորն մեկուսի նա էլ եղբայր յուր հարազատ (1, 30):

...Առնուլ զամենայն զօրս Յունաց, ոչ զոք թողուլ՝ զոր ոչ առցէ. այլ էլ զհետեւակս պահապանս քաղաքացն (28, III, ԻԷ):

Այլ էլ վիշապք, ասեն, նհանգք կեղծս ի կեղծս լինին (29, I, ԻԵ):

Մի՞ թե եւ զարալիզէ՞ն էս ոք կարիցէ ասել... (29, I, ԻԵ):

Անտի էս հնարինք օգտակարութիւնս կարիցէ գտաներ (29, I, ԺԵ):

Ի միւս էս ի գլուխ տարւոյն սկսանէր Խոսրով թագաւորն Հայոց զունդ կազմել (1, 24):

...Զի՞ արդեօք եւ մեղադրութիւն մեր այնպիսեացն ի ճահ պատահիցէ, զէս մեծագոյնս ի նոցանէ պահանջել (28, I, Գ):

... Նոյնպէս էլ մոլորութիւնն դիւաց խաբեաց գղիւ-
ցապաշտս Հայոց... (29, I, ԻԵ):

Ի ներքոյ զորմովք խորանին պատեալ պսակեին. Այն-
պէս էլ արտաքոյ կազմեին... ...Ոչ ինչ շուքս դներ նմա, այլ էլ
անարգանս էս դներ թշնամանաց (9, 256):

Գրաբարյան հայերենում նկատվում է նաև համադասական որոշ շաղկապների գործածությունը հավելական նշանակությամբ: Այս առումով նախ առանձնանում են իսկ, բայց (և) ներհակական շաղկապները.

Ի կողմանս կողմանս յուզախնդիրք էլեալ քննէին: Իսկ ուրումն տեսեալ՝ պատմեաց գնոցանէ (1, 74):

Ետու ընդ նմա ճակատս. բայց և հաղթել և ոչ մի ամ ոչ կարացաք (9, 254):

Կամ տրոհական շաղկապը նոյնպէս գրաբարում երբեմն հանդես է գալիս հավելականների հետ: Դա տեղի է

ունենում տևական դադարից հետո նրա հաջորդումով, որը խոսքին հաղորդում է որոշակի շեշտվածություն, տրոհվող անդամի առանձնացված և հավելական երանգով արտասանություն:

Կամ զլուսին՝ որ ամսոյ ամսոյ հիւծանի, գրեթե և մեռանի, և ապա սկիզբն առնու կենդանանալոյ: Կամ զօդ՝ որ մերթ գոչիցէ վարազացեալ հրամանաւ, մերթ սարսէ ի գոչելոյն սաստի: Եւ կամ զհուր... Կամ զերկիր... (29, I, Գ):

Որոշ ստորադասական շաղկապներ ևս արդեն սկսում են կիրառվել որպես հավելական միավորների կապակցման միջոցներ, և դրանցից մի քանիսը նույնիսկ բավական գործուն են՝ վասն զի, զի (որ), մանավանդ, քանզի, թեպետ (և) և այլն:

Վասն նորին կնոջն արար զայն. զի մեծապես սիրով հարեալ էր ի նմա: Մահ առն իմոյ վասն իմ եղև. զի որ ինձ ակն եդ, վասն իմ զայրն իմ ետ սպանանել (9, 190):

Ոչ երբեք դադարէր սատանայ ի կանաց սատանայածինս ծնուցանել. զի որ անմարմին որ է, նա եւ անսերմն է. վասն զի սերմն մարմնաւորաց է, եւ ոչ անմարմնոյ... (29, I, ԻԵ):

Մեծաւ խնդութեամբ ընկալաւ զնա. մանաւանդ կեղծաւորութեամբ եւ դաւով սկսաւ խօսել ընդ նմա:

Ասպատակ սփռեալ զկողմամբքն Ասորեստանի. մանավանդ եւ զօրք Տաճկաց ի թիկունս եկեալ էին (1, 28):

Յաւուրս սորա փոխին արքունիքն յԱրմաւիրն անուանեալ բլրոյ. քանզի էր հեռացեալ գետն Երասխ (28, 66):

Սկսցուք ուստի արժանի է սկսանել. Թէպետ և ոչ յօժարիցեմք զթշուառութիւն ազգիս մերոյ ողբալ (18, 10):

Հատկանշական է, որ հարաբերական որ դերանունը դեռևս գրաբարում օժտված էր հավելական միավորներ

կապակցելու հատկությամբ՝ ինչպես ուղիղ, այնպես էլ թեր ձևերով:

...Որում անուն Փառանձեմ կոչլր, գորւմ: կարի անուանեալ էր գեղեցկութեամբ եւ պարկեշտութեամբ (9, 182):

Եւ ի մխիթարութիւն աշակերտելոցն ոչ սակաւք: Յորոց հրաժարեալք այնուհետև (30, 98):

Վասն իւրոյ ազգին բարեաց ինչ աւճան գտանելոյ: Որում պարգեւէր իսկ վիճակ յամենաշնորհողէն Աստուծոյ (30, 96):

Ու մինչդեռ այս շաղկապները նոր միայն սկսում էին գործածվել որպես հավելականների միացման միջոց (=և, նաև, ևս) և շաղկապն արդեն զբաբարում աչքի էր ընկնում ոճական հնարքներ դրսևորելու իր նորանոր հատկանիշներով:

Նախ նրա միջոցով կարող էր կատարվել պարզ հավելում:

Եւ համբաւ գեղեցկութեան աղջկանն ընդ վայրսն տարածեցաւ, եւ համբաւ գեղոյ նորա յաճախեալ բազմանայր եւ հնչէր (9, IV, ԺԵ):

Զավետարանն՝ յոր երդուաւ Արշակ արքայ, որ է գլխավորութիւն ուսմանց նոցա քրիստէնութեանն, կապեցի շղթայիւք. եւ կայ ի գանձի իմում (9, 254):

Եվ շաղկապի հաջորդական կրկնությունների միջոցով կարող էր կազմվել հաջորդական հավելումների մի շղթա, որի մեջ յուրաքանչյուր հավելվող կապակցություն իմաստային տեսակետից շեշտված է, առանձնացված, որն էլ մեծ կարևորություն և հանդիսավորություն է հաղորդում ասվածին:

Գնել թագաւորել կամի. եւ զբեզ սպանանել. եւ ամենայն մեծամեծք եւ նախարարք եւ ազատք սիրեն գճնել. եւ ամե-

նայն աշխարհիս նախարարք կամին գտերութիւն նորա ի վերայ իւրեանց առաւել քան զքո (9, 184):

Ես եկի եւ կոտորեցի, և յաղթեցի թշնամեաց քոց. և ակն ունեի ի քէն պարգեւ կենաց, և թշնամիք իմ հրապուրեցին զիս, և արկին երկխղուկս ի քէն, եւ փախուցին ի քէնէ: Եւ երդումն իմ, զոր երդուայ քեզ, յառաջ ածն զիս. և եկի աւասիկ առաջի քո: Եւ աւասիկ ծառայ քո ի ձեռս քո կամ (9, 253):

Երբեմն էլ շաղկապի կրկնությամբ միացած կապակցությունները կարող էին հանդես գալ որպէս որևէ նկարագրություն, որևէ ամբողջական պատկեր ստեղծելու միջոց.

Եւ անցեալ ընդ բազումս ի տեղեաց՝ գայ հասանէ յարեւելից կողմանէ յեզր ծովակին աղոյ. և տեսեալ առ եզերք ծովուն երկայնաձեւ բլուր մի... և ի սմանէ զհարաւով բացագոյն հովիտ իմն դաշտաձեւ եւ երկայնաձիգ յարեւելից կողմանէ լերինն իջանելով յեզր ծովուն, ընդարձակ եւ գեղեցիկ ձորաձեւ, որոյ ընդ մէջն հոսանք ջուրց բարեհամաց ի լեռնէն իջանելով, ի ծործորոց և ի հովտաց, և ի հիմանց փեղկից լերանց միաւորեալք ի ծաւալումն գետոց պերճանային և շէնք ոչ սակաւք ի հովտաձեւ ձորակին, յաջմէ եւ յահեկէ ջուրցն յօրինեալք եւ յարեւելից կողմանէ հաճեցեալ բլրոյն՝ լեռան մի փոքրագոյն... (28, I, ԺԶ):

Գրաբարում հավելական կառույցների ոճական արժեքի մասին խոսելիս պետք է նշել նաև, այսպէս կոչված, պէտալիստության մասին⁹¹: Ոճական այդ հնարքը տարբեր դրսևորումներ ունի, որոնցից մեկն էլ հենց հաջորդաբար դրսևորվող հավելումներով արտահայտվելն է, երբ նույն կամ

⁹¹ Տե՛ս՝ Աբրահամյան Ա., *Գրաբարի ձևընարկ*, Ե., 1976, էջ 394:

մոտ իմաստը կրկնվում է նույնանիշ կամ հոմանիշ այլ բառերով ու կապակցություններով:

Յամենայն կողմանս վարզին, եւ ընդ հանուր արշաւին, եւ ընդ բնաս սլանան (29, I, Գ):

Տվյալ դէպքում ընթանալու գաղափարը արտահայտված է հաջորդաբար հավելվող արշաւել, վարզել, սլանալ բառերով:

Կամ՝ Ելին եւ ի զօրացն Պարսից համատիք նոցա. եւ խաղացին ի մեջ ճակատուցն. եւ ցիրք ընդ ցիրս լինէին (28, 368):

Հավելական, համադասական ու ստորադասական շաղկապներով կառույցների տարբեր տեսակների առատությամբ աչքի են ընկնում ոչ միայն դասական և հետդասական գրաբարի ինքնուրույն երկերը, այլև թարգմանական բանահենքերը: Եվ քանի որ այդ առումով առանձնապես էական տարբերություններ չեն նկատվում, ուստի շարադրանքը նորանոր օրինակներով ծանրաբեռնելու անհրաժեշտություն չկա:

Այլ է պատկերը, երբ դիտարկում ենք ժողովրդական բանավոր գրականության (բանահյուսության) ընթացքը: Ոչ միայն պահպանվում են եղած շաղկապներն ու կառույցները, այլև առաջանում են նորերը, որոնց մի մասը դառնում է շատ գործուն ու հաճախական թե՛ որպես շարահյուսական կապի միջոց, թե՛ որպես ոճական յուրատեսակ հնարք:

Եվ, հիմքում ունենալով բանավոր խոսակցական լեզուն՝ ժողովրդական բանահյուսությունը ծավալվում է սկսած Գողթան երգերից ու հնագույն առասպելներից մինչև իր զլուխգործոցը՝ «Սասունցի Դավիթ» էպոսը, սկսած իր հնագույն հեքիաթներից ու զրույցներից մինչև մեր օրերի բանավոր ստեղծագործությունը, որոնցում այնքան շատ են

հավելյալական կառույցների ոճական տարատեսակ կիրառությունները:

Այս տեսակետից աչքի են ընկնում թե՛ շաղկապավոր, թե՛ անշաղկապ հավելյալական կառույցները, ուստի նշենք ժողովրդական բանահյուսության մեջ դրանց ոճական գործածության մի քանի տեսակներ ևս:

Ժողովրդական շատ հեքիաթների, զրույցների ու առակների վերջաբանը հաճախ արտահայտված է լինում շաղկապավոր հավելյալական կառույցով, որը հանդես է գալիս որպես ամփոփում, ընդհանուր դատողություն, եզրահանգում, հեքիաթի, զրույցի կամ առակի ամբողջ իմաստից բխող միտք կամ հետևություն.

Դրա վերջն էլ է: Եվ իզուր չի ասված՝ ազահ մարդու աչքը մի բուռ հողը կկշտացնի (33, 318): Հարս ու փեսին տանում են իրենց տուն, նորից քեֆ անում, ուրախանում: Դուք էլ ուրախանար, ձեր մուրազին հասներ (33, 235): Այդպես էլ արին: Ու էս ձեզ խրատ, որ վատ աչքով չնայեք ուրիշի ունեցվածքին (34, 132):

Շատ տարածված է նաև հավելյալական կառույցների հաջորդական միացումով խոսքի շարունակության իրականացումը, երբ խոսքի յուրաքանչյուր հաջորդ բաղադրիչը ընդհանուր մտքին կապվում է որպես հավելում.

40 շաբաթ բերենք անենք 40 օր,

40 օր էլ բերենք անենք 40 ժամ:

Մի տերտեր էլ կար՝ ասաց.

40 ժամ էլ բերենք անենք հիմա:

Մի վարդապետ էլ կար պահպանիչ ասաց (54, 127):

Ինձ մի պարկ ընկույզ տուր, մի պարկ էլ կաղին, էլ ոչինչ. որ մաս-մաս ջարդեմ ուտեմ, հետն էլ պատրաստեմ. այս զիշեր էլ թող խանութում քնեմ (34, 187):

Ժողովրդական բանահյուսության մեջ առավելապես տարածված են համ էլ, մեկ էլ, էլ, էն էլ և այլ շաղկապներով հավելական կառույցները: Դա պայմանավորված է նրանով, որ այս շաղկապները հատկապես խոսակցական բնույթի են: Օրինակներ.

Թագավորը շատ գոհ մնաց, մի պարկ էլ ոսկի բաշխեց (34, 184): Ես գութանի խոփի գորությունը չգիտեի, համ էլ մայրդ ասաց, ես էլ տվեցի, ես ի՞նչ մեղք ունեմ (34, 237): Ունենում է մի տղա, մեկ էլ մի աղջիկ, երկուսն էլ մեկմեկուց աննման, սիրուն (33, 205): Սրանց ունեցածը մի հավ է լինում, էն էլ էն տեսակ հավ, որ առջևից գնացողին կտցով էր տալիս, ետևից եկողին՝ քացով (33, 337):

Անշաղկապ հավելական կառույցների ոճական կիրառությունները նույնպես հանդիպում են ժողովրդական բանահյուսության մեջ և բնութագրական են ժողովրդական ստեղծագործությանը: Դրանց միջոցով մի դեպքում կատարվում է գնահատություն, արտահայտվում վերաբերմունք, տրվում է որևէ լրացուցիչ բացատրություն.

Տեսնում է մի սիրուն աղջիկ նստած. իսկ և իսկ իր դանակի վրայի նկարն է, որ կա (33, 16): Յոթն օր, յոթ գիշեր հարսանիք են անում. ինչ քե՛ք, ինչ ուրախություն, ինչ դալի ու գուռնա (33, 254):

Իսկ մի այլ դեպքում հիմնական արտահայտության մեջ նշվում է որևէ գործողություն, տեսողական կամ լսողական որևէ ընկալում, իսկ հավելվող մասով տրվում է այդ ընկալման բովանդակությունը, էությունը կամ այդ գործողության հետ կապված որևէ փաստ, հանգամանք.

Դավիթ մտավ էդ քարայր,

Փետ մի զարկեց. մեկ էս քարին, մեկ էն քարին (54, 166):

Տղան գնում է, մեկ էլ տեսնի ինչ. մի բարձր տեղ մի լույսի կտոր աղջիկ է կանգնած (33, 162):

Միջին հայերենը իր մեջ առավ թե՛ գրաբարին հասուն կավելական կառույցների ոճական որոշ կիրառություններ, և թե՛ հարստացրեց դրանք նոր տարատեսակներով՝ օգտվելով նաև ժամանակի խոսակցական լեզվից: Հավելական հարաբերությունն արդեն կարող էր դրսևորվել ինչպես տարածված կամ տարածվող նոր շաղկապներով (մեկ էլ, այլ նաև, այնպես էլ (և), ոչ... ոչ էլ, թե... և թե, բայց և, իսկ և այլն), այնպես և շաղկապական արժեք ունեցող մի շարք ուրիշ բառերով ու խոսքի մասերով:

Բայց միջին հայերենին տրվող այսպիսի բնութագրությունը պետք է ընդունել որոշակի վերապահումով: Հարցն այն է, որ միջին հայերենով մեզ հասած բանահենքերում հավելական կառույցների բազմատեսակ գործածություն ու առատություն նկատում ենք լեզվական հատկապես այն բանահենքերում, որոնք կապվում են առօրյա հաղորդակցության ոլորտի հետ (զանազան պատմություններ, ճամփորդական նոթեր, հուշագրություն, հիշատակարաններ, առևտրային համաձայնագրեր ու պայմանավորվածություններ, կենցաղային, բժշկական, ուսուցողական զանազան խորհուրդներ ու խրատներ) կամ էլ ժողովրդական բանավոր ստեղծագործության առանձին նմուշների հետ (հեքիաթ, գրույց, առակ, խնդրք և այլն): Մինչդեռ գրական-գեղարվեստական ստեղծագործություններում նույն առատությունն ու բազմատեսակությունը չկա, թեև այս ոլորտում էլ դրանք կիրառելի են: Կատարենք մի քանի քաղվածք միջնադարյան մեր քնարերգությունից.

ա. Ֆրիկ.- Աստուած օրհնէ զայն կարդացողն, որ
զՖրիկս յիշենայ.

Ինքն այլ յիշուի ողորմութեամբ, երբ Գաբրիել փողով
ցնծայ (32):

...Չի խղճալ յօտարականն, թող թէ հազար դառն օր լայ
(28):

Գազան լ'անասուն ու հաւք, գեմ ունին իրենց տուն ու
բուն,

Ոչ տուն ու ոչ տեղ ունիմ, կու խոցիմ ի յանհաւախտունն
(45):

Անդ արագիլեաց շատ ժամանակ,
Այս այլ չեղաւ Ադամայ խրատ (63):

Օծուն մայրն ի դուրս երեկ, զիս խայթեց, և նըստայ
լացի:

Արժա՛ն եմ ես այս լացիս. ո՞վ եղեր օծուն սիրելի (87):

Արդ, եթե չեմք ինչ պիտանի
Եւ կամ չունիմք գործ ինչ բարի,
Կամ քո սրտիդ եմք ատելի (103):

Եւ բաղդաւորն լինի յայտնի՞,
Եւ անբաղդի լեղին պատռի՞ (106):

բ. Շնորհալի.- Ժողովո՛ղ բարեաց,
Ժողովեա՛ և զիս (11):

...Եւ ողորմեա քո արարածոց և ինձ՝ բազմամեղիս (45):

Ի դժոխց դրունս հասայ,

Նաև յատակն մերձեցայ (106):

...Այլէ խրատէ նա սաստկագին (165):

գ. Պաղտասար Դպիր.- Ամենայն ինչ ընդունայն է.

Թէ տիրութիւն, թէ բերկրութիւն,

Թե՛ մեծութիւն փարթամական (55):

Որք կապանօք քո կարկամին,
Այնք ևս զքեզ ամուր կապեն (60):

Մեծ ու փոքր հանցանք չկա,
Փոքրն էլ քեզ զետնով կտա (127):

Հանգստութիւն սերտողաց,
Նաև այլ ինչ պիտանի (133):

դ. Գրիգորիս Աղթամարցի.- Այլ արեղայքս հաճոյ ծա-
ռայք են փրկչին

Եւ զփարդ իշխեսս դու հայիոյել զնոսին (23):

Ինձ ուրանալ զՔրիստոս է անհնարին.

Եւ կամ հնազանդել ձեր փեղամպարին (31):

Գրիգորիս Աղթամարցի արտասուօք զքեզ կաղաչէ,
Թե՛ ինձ ողորմի ասցեք, և փրկիչ ձեզ պարզկէ (77):

Ե. Պետրոս Ղափանցի.- Իցե՞ արդեօք, եթէ տեսից
փայլեցեալ,

Կարմիր գունով, անոյշ հոտով այլեցեալ,

Նաև զերիս՝ զեղով քոյով զմայլեցեալ,

Բացիր, բացիր, իմ կարմիր վարդ աննման,

Գեղըդ նման արեգական վառվառման (73):

Մարեկ և սոխակ,

Կաքավ և թութակ,

Ընդ այնս և տատրակ

Երգեն անուշակ (86):

Աշխարհս այս է իբրու դպրոց և վարժարան,
Իսկ հեղինակ և ուսուցիչ գութն հայրական,
Այլ նեղութիւնն և անձկութիւնն է գավազան (131):
Մի՛ նրմանիբ դու անբանից,
Այլն նոցին նմանեաց (183):

գ. Քուչակ.- Սո՛ւտ է, որ կ՛ասեն, եղբա՛րք, թ՛ընտանի
կայքաւ չի լինի.

Մէկիկ մ՛ես երէկ տեսայ, և՛ երնեկ է զիր տէրն որ ունի
(6):

... Ես երթամ, ասեմ,
Չաղէկն այլ ի զիրկս առնեմ (8):

Ես այք ու դու լոյս, հոգի, առանց լո՛յս՝ այքըն խաւարի.
Ես ձուկ ու դու ջուր, հոգի, առանց ջո՛ւր՝ ձուկըն
մեռանի (15):

...Քո հարն ալ շատ վարձկ արեր, շատ կարմունճ
կապեր գետերուն.

Դուն ալ մէկ վարձկունք մ՛արա, պագ մը տուր դընչիդ
մօտերուն (17):

...Շատ երէց ու արեղայ իջուցեր քո սէրն ի բեմէն.
Ձիս այլ սիրու տէր արիբ, ու հանիբ իմ հօրն ի տանէն
(23):

Արեւն իւր երէ՛սք արեք, զլուսընկան աստառ ձեւեցեք.

Թուխ ամպն այլ բամպակ արեք լ'ի ծաւեն դերձան
քաշեցէք.

Աստղերն այլ կոճակ արեք, զիս ի ներս ողկիկ շարեցէք
(28):

Տեսայ իմ հոգուս հոգին, որ կ'երթար հետ մէկի մըն ալ.
Ձեռկունքն ի վերան ձգել ու գանգատ կ'անէր մէկի
մ'ալ.

Արտիկս ալ ի յիս ասաց, թէ՛ «Անոր թարկըն պիտի
տալ» (38):

Ով օտարին վատ ասէ, ինքն այլ դարիպ լինենայ (96):

Չաշխարհս այլ ի յափ առի հայեցայ քան ըզհայելի.

Դարձայ լ'այլ ի վայր դըրի, չըզըտայ սըրտով սիրելի
(97):

Սակայն հավելական կառույցների գործածության
ուղորտների ընդլայնացումը, դրանց ոճական ամենատարբեր
կիրառությունների բուռն ծաղկումը կապվում է մեր լեզվի
զարգացման աշխարհաբարյան փուլի հետ, հատկապես մեր
օրերի հետ, երբ հավելական կառույցները ձեռք են բերել
բազմազան ոճական հնարավորություններ և լայնորեն
կիրառվում են լեզվի գործառական գրեթե բոլոր ոճերում:

Ընդ որում, լեզվի գործառական յուրաքանչյուր ոճի
հատուկ են հավելական կառույցների տարբեր տեսակները:
Դա պայմանավորված է տվյալ ոճի ընդհանուր հատկա-
նիշներով, ուղղվածությամբ և ընդհանուր բնույթով: Այսպես,
օրինակ, գիտական, պաշտոնական-գործնական, հրապարա-
կախոսական ոճերին առանձնապես բնորոշ են նույնպես և,
նմանապես և, ոչ միայն... այլև, ինչպես... այնպես էլ, ինչպես
նաև և այլ շաղկապներով հավելական կառույցները, իսկ
խոսակցական ոճում ավելի շատ են տարածված և, որ, էլ,
բայց և, մեկ էլ և այլ շաղկապներով հավելական կառույցները:

Մի կողմ թողնելով լեզվի այս տարբեր ոճերում դրանց մանրագնին քննությունը՝ խոսենք գեղարվեստական ոճին հատուկ հավելական կառույցների առավել բնութագրական մի քանի կիրառությունների մասին, որովհետև վերջինս իր մեջ ներառում է նաև մյուս ոճերին բնորոշ տարրեր:

Այս առումով ամենից առաջ պետք է նշել հավելական կառույցների հաջորդական շղթաների մասին, որոնք կազմում են շարահյուսական բարդ, ամբողջական միավոր: Այդ միավորը կարող է ստեղծվել համասեռ հավելումների միջոցով, այսինքն նույն շաղկապի հաջորդական կրկնությամբ.

Արարասյան դաշտում

Մուրճ է գնգում ու քար,

Եվ գնգոցը մուրճի նուռ է կորզում քարից

Եվ ողկույզ է կորզում գնգոցը մուրճի

Եվ տերև է բացում շեկ փոշու տակ (14, 93):

Միասեռ հավելումների հաջորդական շղթա կարող է կազմվել և ընդհանուր անդամի կրկնությամբ.

Գնում է, գնում քարավանն առաջ,

Քարշ տալով իր հետ փոշոտ մի հառաջ,

Քարշ տալով իր հետ փոշոտ մի ծարավ,

Փոշոտ մի անեծք,

Փոշոտ մի արև (14, 110):

Երբեմն էլ այդ ընդհանուր շղթայում թե՛ կրկնվող ընդհանուր անդամը, և թե՛ կրկնվող շաղկապը հանդես են գալիս համասեռ.

Դու հողածին, դու և աստված,

Դու և հաղթող, դու և պարտված,

Դու անտակ վիհ, դու և բարձունք,

Դու և ժպիտ, դու և արցունք (52, 201):

Հաջորդական հավելումների միջոցով առաջացած շարահյուսական բարդ միավորը կարող է լինել և անհամասեռ,

էթէ հավելվող մասերը միանում են տարբեր շաղկապներով: Ընդ որում, դա կարող է լինել.

1. տարբեր ստորադասական շաղկապներով.

Ես միայն ենթարկվում եմ նրան: Որովհետև հոգնել եմ: Որպեսզի հրեշին չբարկացնեմ (66, 341): Համաձայնեցի: Մանավանդ որ հոգուս խորքում ուզածս էլ հենց այդ էր: Միայն թե ուտել, ուտել էր պետք (25, 192):

2. Տարբեր համադասական ու հավելական շաղկապներով.

Սկսում ես կասկածել, իսկ կասկածամտությունը միայն կարող է խանգարել, նաև չես հավատում, ոչ էլ հաշտվում ես (56, 341):

3. Խառը, տարատեսակ շաղկապներով.

Երբեմն ստիպված ես լինում ընթացքի ժամանակ փոխել պլանները: Բայց ոչ որոշումները: Որովհետև որոշումները փոխել նշանակում է դավաճանել սկզբունքին, իսկ այդ սկզբունքը հաստատված է մեկընդմիջտ (48, 87):

Հավելական կառույցները կարող են առանձնացնել որևէ հատկանիշ, շեշտել որևէ մանրամասն, ընդգծել որևէ նոր երևույթ.

Գիտեի, որ սիրում եմ իրար: Միրում եմ մեծ սիրով: Բնքնամոռաց: Միրում եմ կուրորեն (22): Ես գլորվում եմ, շերտ: Մարի գլխից գլորվում եմ: Ահավոր արագությամբ (13, 105):

Դրանց միջոցով կատարվում է մտքի մասնատում կամ մտքի սեղմում, խտացում.

Ամեն ինչ կարող ես սպասել նրանցից: Ե՛վ քնքշություն, և՛ դաժանություն: Երկուսն էլ անկեղծ: Երկուսն էլ միաժամանակ: Բարիք էլ կգործեն, չարիք էլ, բայց ավելի շատ չարիք (19, 14):

Հավելական կառույցների օգնությամբ տրվում է որևէ կերպարի կամ պատկերի արտաքին նկարագրություն, ամբողջացում.

Փողոցում դիակներ կային: Արևելյան մի նեղլիկ փողոցում: Անմայթ, անեզր փողոց: Եվ հողաշեն տներ, մերկ ծառեր, անպամսած երկինք ու ցուրտ, շատ ցուրտ գետին: Եվ մրսած օդ (3, 59):

Դրանք կարող են ծառայել նաև մարդու հոգեկան վիճակի նկարագրությանը, ամենատարբեր նրբերանգներով նրա ապրումների, հուշերի, խոհերի հաղորդմանը.

Հուզված էր: Եվ ոչ միայն ներկայի անսփռի վիճակը, այլև վաղանցուկ երջանկության հուշերն էին տանջում հոգին: Ու սիրտն էլ լի էր արցունքներով: Նաև զղջումով: Նաև կորցրածն այլևս չգտնելու կսկիծով (50, 203):

Հաջորդաբար հավելվող կառույցները խոսքին հաղորդում են լարվածություն, մտքի շարժում, զարգացում.

Եթե քաջ լինեի, մի գնդակ կարձակեի գանգիս: Եվ դա արագ է կատարվում: Ինչպես հայրդ (66, 111): Ես ձեզ տեսել եմ: Եվ հաճախ: Ձեր հոր հետ (50, 52):

Հավելումների հաջորդական շղթաները խոսքին տալիս են որոշակի ռիթմ (կշռույթ).

Եվ քնքշացան նրա աչքերը: Եվ քնքշացան նրա ձայնն ու նիհար ձեռքերը: Եվ նրա սիրտը քնքշացավ կրծքում (11, 118): Այնքան շատ էին ծիծեռնակները: Եվ այնպես խիտ իրար կողքի թառած: Ու բոլորն էլ սև (58, 1, 1976):

Չափածո ստեղծագործություններում ևս այդ երևույթը շատ օրինաչափ է ու լայնորեն կիրառելի: Բերենք միայն մեկ օրինակ, ուր բանաստեղծության յուրաքանչյուր հաջորդ քառատողը նախորդին միանում է հավելական հարաբերությամբ.

Եվ մի աշխարհ մնաց այնտեղ՝

Բարդիներով, գետերով,
Լեռներն ի վար ծալ-ծալ իջնող
Անիրական եթերով:

Եվ մնացին ակնադրյուններ,

Որ բխում աջ ու ձախից
Ու արծաթե թարթիչներին
Լույս են տանում ու թախիծ:

Եվ կատարներ, որոնց վրա՝

Ոտքերի տակ ձյուն ու ամպ,
Արշալույսն է միայն կանգնում
Իր բարբարոս մերկությանբ:

Եվ լճակներ, որ ծվարած

Կատարներին վերերում,
Միայն աստծո ու աստղերի
Ցուլանքից են երերում (14, 281):

Առանձնապես արտահայտիչ են կարճ բաղադրիչների կամ անդամների աստիճանական հավելումները, որոնք խոսքին տալիս են ընդհատված արտասանություն, բայց և իմաստային ծանրաբեռնվածություն և շեշտվածություն.

Գնում էինք: Անխոս: Անձայն: Ու անքուն (45, 5): Գնացել – եկել ենք: Պարիսպ է միայն: Ամբողջ լեռնանցքի երկարությամբ: Մինչև սահմանագիծը (25, 129): Սովորական չէր նաև նրանց հագուստը: Եվ ոչ արդիական: Թատերական ու հեքիաթային: Շքեղ ու տոնական (19, 189):

Ամենատարբեր կառուցվածքի հավելական միավորներ լայնորեն հանդես են գալիս և երկխոսություններում՝ ոճական զանազան գործառություններով⁹²: Մի դեպքում դրանց

⁹² Այս մասին ավելի մանրամասնորեն տես. Т.Г.Винокур, *О некоторых особенностях диалогической речи*, М., 1955.

միջոցով կատարվում է լրացուցիչ մտքի, փաստի կամ իրողության հաղորդում, արտահայտվում է վերաբերմունք կամ տրվում է գնահատություն.

- Ես ձեզ սիրում եմ: Դա էլ ինձ բավական է:

- Ես էլ եմ ձեզ սիրում: Եվ դա ինձ բավական չէ (50, 19):

- Իսկ փերի բերե՞լ էս:

- Մտքովս չի անցել: Դա էլ մյուս անգամ: Եվ ինչպիսի-
նե՛քը (7, 18):

Մի այլ դեպքում հավելվող կառույցների օգնությամբ կարող է կատարվել նախորդ ասվածի ճշգրտում, բացատրու-
թյուն.

- Երկարաձգումից ներում մի քայլ է:

- Մի կնոջ քայլ (66, 115):

- Որպիսի՞ առաջարկություն:

- Մի գեղեցիկ առաջարկություն: Միրել ինձ (62, 524):

Երկխոսության մեջ գործածված հավելլական կառույցը երբեմն կարող է լինել ոչ թե խոսակցի որևէ հարցի անմի-
ջական պատասխանը կամ նրա տվյալ պահին արտա-
հայտած մտքին վերաբերող հաղորդում, այլ խոսողի ընդ-
հատված խոսքի շարունակությունը: Այսպես.

- Լա հոյակապ մարդ է: Շատ լավ երգում է...

- Բայց նա հոյակա պ մասնագետ է:

- Լան բանաստեղծություններ է գրում (Ավ.):

Երկխոսություններում տարածված է նաև այնպիսի հավելլական կառույցների գործածությունը, որոնք իրենց կա-

ռուցվածքով համընկնում են երկրորդական նախադասություններին:

- Պարետային ժամից հետո հանգիստ կարո՞ղ եմ ման գալ:

- Ինչպես և բոլոր բժիշկները (66, 137):

Կամ՝ - Սառույցը հալվեց: Երեկ հաստատեցին մեր առաջարկությունը:

- Ինչ որ վաղուց պետք է արած լինեին (11, 7, 75):

Հավելական կառույցները կարող են հանդես գալ և որպես ճարտասանական հարցում: Այդպիսի կիրառությունները շատ են հատկապես չափածոյում.

Գող Անտոնիոս, դու գող...

Եվ արդ ի՞նչ է ճշում մունետիկը...

Հայաստա՞նս է պարտված, այդ ումի՞ց է պարտված,

Եվ նվաճվա՞ծ նաս, և նվաճված ումի՞ց (14, 26):

Ինչ-որ մեկի սրտում բացված վերք է կարծես այս կյանքը մի.

Եվ ու՞մ համար, էլ ու՞մ համար կարոտակեզ երգե հիմի

Սիրտս... (45, 59):

Երբեմն ճարտասանական հարցումն ունենում է նաև իր պատասխանը, որը կարող է լինել ինչպես հարցական հնչերանգով, այնպես էլ հաստատական տոնով.

Դու արդեն կորած մարդ ես... Եվ ու՞մ հետ ես կապել հույսդ: Այդ թափառաշրջիկների՞ (58, 1, 1976): Ուներ իր աթոռն ու գրասենյակը, ազատ էր՝ սիրահետելու միայնակ կանանց... Եվ ի՞նչ ես կարծում, ե՞րբ... Երբ ես ու դու ճակատում արյուն էինք թափում (11, 7, 1975):

Հավելումների նման տեսակները հետաքրքրություն են առաջացնում, ընդգծում են կարևոր պահերը, կենտրոնաց-

նում են ուշադրությունը դրանց վրա, խոսքին հաղորդում շեշտվածությունն ու թափ:

Հավելական կառույցները կարող են դրսևորել երգիծական, կատակերգական երանգներ: Դա տեղի է ունենում, երբ հավելվում են այնպիսի հաղորդումներ, որոնք հակադիր են հիմնական արտահայտությանը կամ ստեղծում են անսպասելի անցում մի դրությունից, նկարագրությունից, մտքից մյուսին:

«Գոգոլի լեզուն և նրա նշանակությունը ռուսաց լեզվի պատմության մեջ» գրքում Վ.Վինոգրադովը նշում է, որ Գոգոլը հավելում է իմաստով միմյանցից հեռու այնպիսի բառեր և ֆրազներ, որոնք այդպիսի հանկարծակի մերձեցմամբ կազմում են հակադրություն, բայց և ստեղծում են որևէ անձի, իրողության, «իրականության պատառիկի» ամբողջական, բարդ, ընդհանրացնող և միաժամանակ կոնկրետ պատկերը⁹³:

Այս նույն միտքն է արտահայտում նաև Ա.Եֆիմովը «Ռուս գրական լեզվի պատմություն» գրքում⁹⁴:

Ահա հենց այս հնարքն էլ իմաստով միմյանցից հեռու բառերի ու ֆրազների մերձեցումը, մի տոնայնությունից մյուսին կտրուկ անցումը, տարասեռ երևույթների ու իրողությունների հավելումը խոսքին հաղորդում են երգիծական երանգ: Դա հատկապես նկատվում է երգիծական բնույթի ստեղծագործություններում (ֆելիետոն, էպիգրամ և այլն): Օրինակներ.

Կոճղանման գլուխ: Մոնումենտալ ճակատ:

Երկրագնդի նման կլոր նստուկ: -

⁹³ В.Виноградов, *loc. cit.*, էջ 29:

⁹⁴ А.И.Ефимов, *История русского литературного языка*, М., 1954. Стилистика художественной речи, М., 1962.

Այ թե ինչու է նա, որպես մտքի զազաթ,
Թե վեհություն, թե ահ, թե պատկառանք ազդում (45,

154):

Պետք էր հերոսանալ: Եվ հերոսացալ: Բուրդ ուտելով
 (ՍՀ):

Ինչպես երևում է այս սեղմ շարադրանքից, Բազմազան են հավելյալական կառույցների ոճական դրսևորումները սկսած կրկնությունների միջոցով հավելումների հաջորդական շղթաներ կազմելուց, իմաստային, ոճական ամենատարբեր նրբերանգներ արտահայտելուց մինչև երկխոսություններ, պատկերի, նկարագրության ամբողջացումներ, մինչև ճարտասանական հարցում ու երգիծական երանգի դրսևորում: Այս շարքը կարելի է դեռ շատ ընդարձակել թվարկելով նորանոր երևույթներ, սակայն ասվածն էլ բավական է հաստատելու համար դրույթը, որ ժամանակակից հայերենում հավելյալական կառույցները գործուն են ոչ միայն որպես շարահյուսական միավորների միացման տեսակներ, այլև ունեն ոճական ամենատարբեր արժեքներ ու նշանակություններ:

ԱՄՓՈՓՈՒՄ

Ի մի բերելով ամբողջ ասվածը՝ կարելի է կատարել հետևյալ հիմնական եզրակացությունները:

1. Հավելական կառույցներն ունեն իմաստային, տրամաբանական, հուզաարտահայտչական և ոճական ամենատարբեր նրբերանգներ հաղորդելու հատկություն, բավականաչափ տարածված են ժամանակակից հայերենում և լայնորեն կիրառվում են նրա գրեթե բոլոր գործառական ոճերում՝ առանձնապես հատուկ լինելով գեղարվեստական և խոսակցական ոճերին:

2. Որպես խոսքի միավորների շարահյուսական կապի տեսակ՝ հավելական կառույցները կարող են արտահայտել թե՛ համադասական, թե՛ ստորադասական հարաբերություն, ընդ որում, նրանց հիմնական գործառությունը ժամանակակից հայերենում համադասական հարաբերություն արտահայտելն է: Սակայն դրանք միաժամանակ հանդես են բերում մի շարք տարբերություններ համադասություն ու ստորադասություն ցույց տվող մյուս տիպի կառուցվածքներից:

3. Սովորական համադասության ժամանակ արտահայտության բաղադրիչ մասերը շարահյուսորեն, քերականորեն միանգամայն համագոր միավորներ են: Իսկ հավելական կառույցով արտահայտված համադասության ժամանակ կարծես խախտվում է բաղադրիչ մասերի այդ համագործությունը, նրանցից մեկը դառնում է առաջնային, հիմնական, իսկ մյուսը՝ իմաստային, վերաբերմունքային հավելում:

Սովորական ստորադասության ժամանակ բաղադրիչների միջև առկա է քերականական լրացման ու լրացյալի հարաբերությունը, իսկ հավելական կառույցով դրսևորված

ստորադասության ժամանակ կարծես խախտվում է քերականական լրացման ու լրացյալի սերտ հարաբերությունը, թույլ է լինում քերականական կապը նրանց միջև, և հավելվող մասը համեմատաբար ինքնուրույն է դառնում:

Թե՛ համադասության, թե՛ ստորադասության ժամանակ հենց սկզբից գիտակցության մեջ առկա են արտահայտության երկու (կամ ավելի) բաղադրիչները, որոնք, նայած հանգամանքների կամ արտահայտած նշանակության, միանում են շարահյուսական կապի այս կամ այն տեսակով՝ համադասական կամ ստորադասական, իսկ հավելական կառույցի դեպքում երկրորդ բաղադրիչը հենց սկզբից առկա չէ, այն առաջանում է խոսքի ընթացքում (նախորդ բաղադրիչի արտաբերության ժամանակ կամ նրա ավարտից անմիջապես հետո) և իր արտահայտած իմաստով էլ նախորդի համար դառնում է լրացուցիչ հաղորդում, գլխում ծագած հանկարծակի միտք, ասվածի ճշգրտում, բացատրություն:

Հավելական կառույցով արտահայտված երկրորդական նախադասությունը մյուս տեսակի երկրորդական նախադասություններից տարբերվում է ոչ միայն իր իմաստային կողմով, այլև իր շարահյուսությամբ. այն բացառապես դրվում է հիմնական մասից հետո, մինչդեռ մյուսները կարող են դրվել թե՛ գլխավոր նախադասությունից առաջ, թե՛ նրանից հետո, թե՛ նրա ներսում: Բացի այդ, բոլոր երկրորդական նախադասությունները չէ, որ կարող են արտահայտվել հավելական կառույցով:

4. Հավելական կառույցները տարբերվում են նաև համանման մի շարք այլ շարահյուսական միավորներից, ինչպիսիք են միջանկյալ բառերն ու կապակցությունները, նախադասության բազմակի անդամները, թերի նախադասությունը և այլն:

5. Հավելյական կառույցները բնութագրվում են մի շարք առանձնահատկություններով:

Ա. Ամենից կարևորը նրանց իմաստային կողմն է. դրանք հիմնական մասի հետ իմաստային նույն մակարդակի վրա չգտնվելով՝ միանում են նրան որպես լրացուցիչ հաղորդում, բացատրություն, ճշգրտում, իմաստային ու վերաբերմունքային հավելում:

Բ. Մյուս կարևոր առանձնահատկությունը հիմնական մասից ունեցած նրանց ընդհատվածությունն է. դրանք հաջորդում են տևական դադարից հետո և առանձնացվում են թե՛ տրամաբանական շեշտով, թե՛ հնչերանգով:

Գ. Այս առանձնահատկությունների հետ սերտորեն կապված են մի շարք ուրիշ հատկանիշներ. կառուցվածքային-արտասանական գույգահեռականության ինքնատիպությունը, բառերի դասավորության յուրահատուկ կարգը, ռիթմամեղեդիական և հնչերանգային համապատասխան դրսևորումը, եղանակավորության բազմազանությունը և այլն:

Նշված հատկանիշների հաշվառումով էլ կատարվում է հավելյական կառույցների սահմանումը: Հավելյական համարվում են այն կառույցները, որոնցում հավելվող մասը, միանալով արտահայտության հիմնական մասին, բովանդակում է լրացուցիչ հաղորդում, ճշգրտում, բացատրություն, եզրակացություն, գնահատություն՝ հանդես գալով որպես իմաստային կամ վերաբերմունքային հավելում, առանձնացվում է տևական դադարով ու հատուկ հնչերանգով և սովորաբար առաջանում է հիմնական մասի արտաբերության ընթացքում կամ նրա ավարտից անմիջապես հետո:

6. Բազմազան ու բազմաբնույթ են հավելյական կառույցները, և նրանց տարբեր տեսակների դասակարգման

հիմքում դրվում են կառուցվածքային, իմաստային ու քերականական մի շարք էական հատկանիշներ:

7. Ըստ կառուցվածքի դրանց դասակարգման ժամանակ պետք է նկատի ունենալ թե՛ այն ընդհանուր կառուցվածքը, որում հանդես է գալիս հավելվող մասը, թե՛ հենց հավելվող մասի կառուցվածքը:

Հավելական կառույցները կարող են հանդես գալ տարբեր բաղադրությամբ՝ հավելական հարաբերությամբ իրար կապելով թե՛ պարզ նախադասության անդամներ, թե՛ բարդ նախադասության բաղադրիչներ, թե՛ ամենատարբեր տեսակի առանձին, ինքնուրույն նախադասություններ, խոսքի առանձին հատվածներ ու մասեր: Մրանով էլ պայմանավորված է այն հանգամանքը, որ հավելվող մասն իր կառուցվածքով կարող է համընկնել բառի, բառակապակցության և տարբեր կառուցվածքի նախադասությունների հետ:

8. Ըստ հիմնական մասին միանալու միջոցի առանձնանում են հավելական կառույցների երկու մեծ խմբեր՝ շաղկապավոր և անշաղկապ:

Շաղկապավոր հավելական կառույցների դեպքում որպես միացման միջոց հանդես են գալիս թե՛ մի շարք համադասական ու ստորադասական շաղկապներ, և թե՛ բուն հավելական շաղկապներն ու շաղկապական բառերը:

Համադասական բոլոր շաղկապները չէ, որ կարող են գործածվել հավելական կառույցների միացման միջոցի դերում, իսկ գործածվողներն էլ չունեն հավասար արժեք: Դրանց մի մասը համեմատաբար ակտիվ է ու գործուն (և, ու, իսկ), հավելական կառույցների հետ ավելի հաճախ է հանդես գալիս և, հատուկ լինելով նաև խոսակցական լեզվին, ունի կիրառության լայն ոլորտներ: Իսկ մի մասը (բայց, սակայն, կամ) չունի այդպիսի ակտիվություն և գործածության ավելի նեղ շրջանակներ է ընդգրկում: Մակայն ժամանակակից հա-

յերենում նկատվում է համադասական շաղկապներով հավելական կառույցների կիրառության ոլորտների ընդլայնման միտում:

Ստորադասական շաղկապները հավելական նշանակությամբ գործածվելիս կարող են կապակցել բարդ նախադասության բաղադրիչները, այսինքն հանդես գալ բարդ միավորի կազմում: Սակայն դրանք հավելական նշանակություն են ձեռք բերում հիմնականում միայն տևական դադարից հետո հաղորդվելու (վերջակետից հետո դրվելու) շնորհիվ: Ստորադասական շաղկապներից հավելական կառույցների հետ համեմատաբար հաճախ են հանդես գալիս որ, եթե, որովհետև, երբ, որպեսզի և մի քանի այլ շաղկապներ:

Հավելական միավորների կապակցման հիմնական միջոցները հավելական շաղկապներն են (էլ, ևս, նաև, այլև, այլ նաև, այն էլ, նույնպես և, ոչ միայն...այլև, ինչպես...այնպես էլ և այլն): Դրանց իմաստային, ռճական և գործառական արժեքը հավելական հարաբերություն արտահայտելն է: Հավելական հարաբերությունը կարող է դրսևորվել նաև որոշ դերանունների (այդ, դա), վերաբերականների (անշուշտ, գուցե, իհարկե...), բառերի մի շարք ազատ միացությունների (ճիշտն ասած, ավելի շուտ, ավելի ճիշտ...) և շաղկապական արժեք ունեցող լեզվական այլ միջոցների օգնությամբ (հա, ի դեպ, ապա և, ընդ որում և այլն):

Անշաղկապ հավելական կառույցների դեպքում որպես միացման միջոց գլխավորապես հանդես են գալիս իմաստային և հնչերանգային հատկանիշները, շարահարությունը (գրավոր խոսքում՝ համապատասխան կետադրական նշանները): Այս կառույցներն ավելի են շեշտում հավելական իմաստը, ընդգծում հավելվող մասի նշանակությունը, պարունակում են հուզաարտահայտչական մեծ լիցք: Հնչերանգային և ռիթմամեղեդիական կողմով դրանք գրեթե ձեռք են բերում

ինքնուրույն նախադասության արժեք, բայց առանց հիմնական մասի դրանք գրեթե անհասկանլի են լինում:

Անշաղկապ կառույցներն առավել բնութագրական են խոսակցական լեզվին, և դրանց լայն մասշտաբի կիրառությունները ժամանակակից գրական հայերենում բացատրվում են մի կողմից այդ կառույցների ակտիվությամբ, իմաստային ամենատարբեր հարաբերություններ ու ոճական տարաբնույթ հատկանիշներ դրսևորելու հատկությամբ, մյուս կողմից խոսակցական, բանավոր լեզվի և գրավոր լեզվի մերձեցման աստիճանով:

9. Ըստ կատարած շարահյուսական դերի հավելվող մասերը լինում են երկու տեսակ.

ա. դրանք ներկայացնում են գլխավոր անդամներ,

բ. Երկրորդական անդամի պաշտոն են կատարում:

Ժամանակակից հայերենում առավելապես տարածված են երկրորդական անդամի շարահյուսական դերով հանդես եկողները:

10. Ըստ արտահայտած իմաստի և դրսևորած շարահյուսական հարաբերության դասակարգումը կատարելիս հավելական կառույցները դիտարկվում են երկու տեսանկյունից:

Մի կողմից հաշվի է առնվում հավելման բնույթը, այսինքն, թե ինչ է ներկայացնում հավելվող մասը: Ըստ այդմ տարբերակվում են լրացուցիչ միտք, իրողություն, մանրամասն հաղորդող կամ ճշգրտում կատարող, կարևոր տեղեկություններ բովանդակող, կարևոր հանգամանքներ բացահայտող, վերաբերմունք, գնահատություն ցույց տվող, ընդհանրացում, ամփոփում կատարող հավելական կառույցներ:

Մյուս կողմից էլ պետք է հաշվի առնել հենց հավելվող մասի իմաստային նշանակությունը և միացող բաղադրիչների միջև դրսևորված շարահյուսական հարաբերությունը:

Այսպիսի մոտեցմամբ էլ նախ կառանձնանան համադասություն կամ ստորադասություն ցույց տվող հավելյալ կառույցներ, ապա՝ նպատակ, համեմատություն, պատճառահետևանքային կապ և իմաստային, տրամաբանական այլ հարաբերություններ արտահայտող հավելյալ կառույցներ:

11. Ըստ հաղորդակցական տեսակների ու եղանակավորության դասակարգելիս առանձնանում են պատմողահավելյալ, հարցահավելյալ, հորդորահավելյալ, բացականչահավելյալ, հաստատահավելյալ, ժխտահավելյալ կառույցները:

12. Բազմազան են նաև հավելյալ կառույցների ոճական կիրառությունները: Դրանց միջոցով հաղորդվում են ոճական տարբեր նրբերանգներ, կազմվում են հավելումների հաջորդական շղթաներ, կատարվում են պատկերի, նկարագրության ամբողջացումներ, ձևավորվում են երկխոսություններ, տրվում է ճարտասանական հարց, դրսևորվում է երգիծական երանգ և այլն: Դա վկայում է այն մասին, որ հավելյալ կառույցները ժամանակակից հայերենում գործուն են ոչ միայն որպես շարահյուսական միավորների միացման տեսակ, այլև ունեն ոճական ամենատարբեր արժեքներ ու նշանակություններ, և նրանց ուսումնասիրությունը պետք է կատարվի ինչպես իմաստային, քերականական, այնպես էլ ոճաբանական տեսանկյունով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱԿ

1. Ագաթանգեղոս, Հայոց պատմություն, Ե., 1983:
2. Ազնավուր Շ., Ազնավուրը Ազնավուրի մասին, Ե., 1976:
3. Ալաջաջյան Ս., Եղեգները շխտարհվեցին, Ե., 1970:
4. Ալեքսեյ Ս., Պատմվածքներ Սուվորովի և ռուս զինվորների մասին, Ե., 1975:
5. Աղավնի, Շիրակ, Ե., 1973:
6. Աղթամարցի Գ., Տաղեր, Ե., 1984:
7. Այվազյան Ս., Ճակատագիրն հայոց, Ե., 1967:
8. Բակունց Ա., Ալպիական մանուշակ, Ե., 1969:
9. Բուզանդ Փ., Հայոց պատմություն, Ե., 1987:
10. Գալշոյան Մ., Բով տուն, Ե., 1974:
11. «Գարուն» (ամսագիր):
12. Գոլստորդի Ջ., Ասք Ֆորսայթների մասին, Ե., 1975:
13. Գորբովսկի Ա., Մարդը մարդուն, Ե., 1975:
14. Դավթյան Վ., Երկեր, Ե., 1975:
15. Դաշտենց Խ., Խողեղան, Ե., 1960:
16. Դեմիրճյան Դ., Վարդանանք, Ե., 1968:
17. Դալիր Պ., Տաղիկներ, Ե., 1985:
18. Եղիշե, Վարդանի և հայոց պատերազմի մասին, Ե., 1989:
19. Զեյթունցյան Պ., Կատակերգություն առանց մասնակիցների, Ե., 1975:
20. Զորյան Ստ., Երկեր, Ե., 1977:
21. Թումանյան Հովհ., Երկեր, հ. 1, Ե., 1969:
22. Թոթովենց Վ., Կյանքը հին հռոմեական ճանապարհի վրա, Ե., 1966:
23. Իսահակյան Ավ., Երկեր, հ. 3, Ե., 1975:

24. Լոնդոն Ջ., Երկեր, հ. 10, Ե., 1970:
25. Խալափյան Ջ., Մեռնող-հառնող, Ե., 1975:
26. Խանգաղյան Ս., Կորած արահետներ, Ե., 1964:
27. Խաչատրյան Շ., Մարդը բնություն է, բնությունը՝ մարդ, Ե., 1970:
28. Խորենացի Մ., Հայոց պատմություն, Ե., 1981:
29. Կողբացի Ե., Եղծ աղանդոց, Ե., 1994:
30. Կորյուն, Վարք Մաշտոցի, Ե., 1980:
31. Կուրտիկյան Ս., Լուսաշխարհի հանիմ զիմ գուբան, Ե., 1974:
32. «Հայաստանի աշխատավորուհի» (ամսագիր):
33. Հայ ժողովրդական հեքիաթներ (Ա. Նազինյանի մշակմամբ), Ե., 1967:
34. Հատընտիր հայ ժողովրդական քանահյուսության, Ե., 1956:
35. Հովսեփյան Բ., Դու հասկացա՞ր ինձ, Ե., 1971:
36. Ղափանցի Պ., Բանաստեղծություններ, Ե., 1990:
37. Մաթևոսյան Հ., Օգոստոս, Ե., 1967:
38. Մահարի Գ., Երկերի ժողովածու, հ. 3, Ե., 1975:
39. Մարգարիտներ հայ քնարերգության, հ. 1, Ե., 1971:
40. Մորուս Ա., Յոթ նովել, Ե., 1973:
41. Նար-Դոս, հ. 2, Ե., 1961:
42. Շիրազ Հովհ., Քնար Հայաստանի, հ. 2, Ե., 1964:
43. Շիրվանզադե Ա., Պատմվածքներ և վիպակներ, Ե., 1971:
44. Շնորհալի Ն., Երգեր, Եղեսիայի ողբը, Ե., 1982:
45. Չարենց Ե., Ընտիր երկեր, Ե., 1973:
46. Պետրոսյան Վ., Դեղատուն «Անի», Ե., 1973:
47. Պո Է., Ոսկե բզեզը, Ե., 1975:
48. Ռայնով Բ., Վատ եղանակից լավ բան չկա, Ե., 1975:
49. Ռյուկման Կ., Սենսացիա, սպանություն, Ե., 1968:

50. Ռոլան Ռ., Հմայված հոգին, Ե., 1975:
51. Սահյան Հ., Բանաստեղծություններ, հ. 2, Ե., 1969:
52. Սահյան Հ., Երկերի ժողովածու, հ. 1, Ե., 1975:
53. Սահինյան Ա., Կարոտ, Ե., 1974:
54. Սասունցի Դավիթ (Էպոս), Ե., 1961:
55. Սարյան Գ., Երկեր, հ. 4, Ե., 1971:
56. Սիմոնյան Կ., Ներսես Մաժան դեղագործը, Ե., 1974:
57. Սիրաս Հ., Հայրենի աշխարհ, Ե., 1974:
58. Սովետական գրականություն (ամսագիր):
59. Սևակ Պ., Անլռելի զանգակատուն, Ե., 1966:
60. Վարդանյան Ս., Ինչու են թաց նրա աչքերը, Ե., 1973:
61. Վիալար Պ., Մեռնելու ժամանակ էլ չկա, Ե., 1973:
62. Բաֆֆի, Երկեր, Ե., 1970:
63. Յվայգ Ս., Մարդկության աստեղային ժամերը, Ե., 1974:
64. Ուորեն Ռ., Արքայի ամբողջ թիկնագորը, Ե., 1976:
65. Փափազյան Վ., Համլետն ինչպես տեսա, Ե., 1968:
66. Քաչա Վ., Գիշատիչների խնջույքը, Ե., 1976:
67. Քուչակ Ն., Հազար ու մեկ հայրեն, Ե., 1976:
68. Ֆրիկ, Տաղեր, Ե., 1982:

ՕՐԱԹԵՐԹԵՐԻ ԵՎ ՇԱԲԱԹԱԹԵՐԹԵՐԻ
ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՍՀ - «Սովետական Հայաստան» օրաթերթ:

ԵԵ - «Երեկոյան Երևան»:

Ավ. - «Ավանգարդ»:

ԳԹ - «Գրական թերթ»:

ՀԶ - «Հայրենիքի ձայն»:

ՀՖ - «Հայաստանի ֆիզկուլտուրնիկ»:

Ն. - «Նաիրի»:

ՄԷտ. - «Մետաքսագործ»:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Արեղյան Ա., Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965:

Աբրահամյան Ա.Ա., Գրաբարի ձևնարկ, Երևան, 1964:

Աբրահամյան Ա.Գ., Ժամանակակից հայերենի չթերվող խոսքի մասերը, Ե., 1959:

Աբրահամյան Ա.Գ., Վերոյան Բ.Հ., Քոսյան Վ.Ա., Հայոց լեզվի դասագիրք, Երևան, 1966:

Աբրահամյան Ա.Գ., Ժամանակակից հայերենի քերականություն, Երևան, 1969:

Աբրահամյան Ա.Գ., Առաքելյան Վ.Դ., Քոսյան Վ.Ա., Հայոց լեզու, 2-րդ մաս, Շարահյուսություն, Երևան, 1975:

Աղայան Է.Բ., Հայ լեզվաբանության պատմություն, 1-2, Երևան, 1958-1962:

Աղայան Է.Բ., Բարսեղյան Հ.Խ., Հայոց լեզու, Երևան, 1976:

Այտրնեան Ա., Քերականություն արդի հայերեն լեզուի, Վիեննա, 1883, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Ե., 1987:

Առաքելյան Վ.Դ., Հայերենի շարահյուսություն, 1-2, Երևան, 1958-1964:

Ասատուր Հ. և Ջ., Գործնական քերականություն արդի աշխարհաբարի, Կ.Պոլիս, 1911:

Արեւելցի Վ., Մեկնություն քերականի, Երևան, 1972:

Բագրատունի Ա., Հայերեն քերականություն, Վենետիկ, 1852:

Գարագաշեան Ա., Գործնական քերականություն հայկական լեզուի, Կ.Պոլիս, 1870:

Գարեգինյան Գ.Լ., Շաղկապները ժամանակակից հայերենում, Երևան, 1963:

Գյուլբուդադյան Ա.Վ., Միակազմ նախադասությունները ժամանակակից հայերենում, Երևան, 1967:

Ղուկասեանց Հ., Քերականութիւն գրաբար լեզուի, Թիֆ., 1884:

Նչեցի Ե., Վերլուծութիւն քերականութեան, Երևան, 1966:

Չամչեանց Ա., Քերականութիւն հայկազեան լեզուի, Վենետիկ, 1856:

Պալասանեան Ա., Գործնական քերակունքիւն հայերէն լեզուի, Թիֆ., 1969:

Պաղտասար Դպիր, Պարզաբանութիւն քերականութեան կարճառօտ և դիրքիմաց, 1-2, Կ.Պոլիս, 1771:

Պառնասյան Ն.Ա., Անշաղկապ բարդ նախադասությունները ժամանակակից հայերենում, ժող. «Լեզվի և ոճի հարցեր» 2, Երևան, 1964:

Պառնասյան Ն.Ա., Շարահյուսական համանիշները ժամանակակից հայերենում, Երևան, 1970:

Ջահուկյան Գ.Բ., Հին հայերենի հոլովման սխտեմը և նրա ծագումը, Երևան, 1959:

Ջահուկյան Գ.Բ., Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, 1969:

Ջահուկյան Գ.Բ., Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974:

Սևակ Գ., Հայոց լեզվի շարահյուսություն, Երևան, 1972:

Քոսյան Վ.Ա., Ժամանակակից հայերենի բառակապակցությունները, ՀՊՄԻԳԱ, 2, 1967:

Քոնեցի Յովի., Յաղագս քերականին, Երևան, 1977:

Авласевич М.А., О парцелляции в современном русском литературном языке, «Вестник Белорусского университета», №1, 1973.

Аксаков К.С., Полное собрание сочинений, т. 2, ч. I, Сочинения филологические, М., 1875.

Атаян Э.Р., Бессоюзные сложные предложения в старом французском языке, «Вопросы лексикологии и синтаксиса романо-германских языков», Ереван, 1963.

Бауэр Ярослав, Русские союзы в сопоставлении с чешскими, Брно, 1957.

Белошапкина В.А., Сложное предложение в современном русском языке, М., 1967.

Blanár Vincent, Priznakové a bezpriznakové pripájanie v stavbe vety, сб. «Езиковедски изследования в чест на академик Стефан Младенов», Бълг. Акад. На науките, София, 1957.

Валгина Н.С., Присоединительные конструкции в современном русском литературном языке, М., 1964.

Валгина Н.С., Розенталь Д.Э., Фомина М.И., Цепукевич В.В., Современный русский язык, М., 1966.

Ванников Ю.В., Синтаксические особенности русской речи (явление парцелляции), М., 1969.

Ванников Ю.В., Явление парцелляции в современном русском языке, М., 1965.

Введенская Л.А., Дыбина Т.В., Щеболева И.И., Современный русский литературный язык, Ростов-на-Дону, 1968.

Величук А.П., О специфике присоединительной связи в современном русском языке, Баку, 1960.

Виноградов В.В., Стиль «Пиковой дамы», сб., «Временник Пушкинской комиссии», №2, М., 1936.

Виноградов В.В., Пушкин и русский литературный язык XIX века, сб. «Пушкин – родоначальник новой русской литературы», М., 1941.

Виноградов В.В., Стиль Пушкина, М., 1941.

Виноградов В.В., Русский язык, М., 1947.

Виноградов В.В., Язык Гоголя и его значение в истории русского языка, М., 1958.

Виноградов В.В., Стилистика художественной речи, М., 1976.

Винокур Т.Г., О некоторых синтаксических особенностях диалогической речи, М., 1955.

Воробьева Г.Ф., Панюшева М.С., Толстой И.В., Современный русский язык, Синтаксис, М., 1975.

Гвоздев А.Н., Современный русский литературный язык, ч. 2, Синтаксис, М., 1968.

Грамматика русского языка, АН СССР, Инст. русского языка, ч. 2, М., 1960.

Греч Н.И., Практическая русская грамматика, СПб., 1834.

Днепровская Н.Я., Синтаксис союзного сложного предложения украинской народной сказки, Харьков, 1955.

Доклады и сообщения инст-та Русского языка, АН СССР, вып. 2, 1948.

Доклады и сообщения фил. фак-а МГУ, вып. 1, 1946.

Ефимов А.Н., История русского литературного языка, М., 1954.

Ефимов А.Н., Стилистика художественной речи, М., 1962.

Иванчикова Е.А., Парцелляция, ее коммуникативно-экспрессивные и синтаксические функции, "Морфология и синтаксис современного русского литературного языка", М., 1968.

Ильенко С.Г., Бессоюзные предложения в русском языке, Л., 1961.

Каранська М.У., Приєднувальний зв'язок у синтаксичній одиниці спілкування, «Наукові записки Житомирського держ. пед. інституту ім. Ів. Франка», Серія лінгвістична, т. XI, 1959.

Карпенко М.В., Присоединительные конструкции в современном русском языке, Черновцы, 1961.

Карпенко М.В., К характеристике бессоюзных присоединительных конструкции, 1958.

Кириленко К.И., Про при днальні зв'язки в поезії Луї Арагона, «Наукові записки Київського держ. Пед. інституту іноземних мов», т. I, 1957.

Книга трудов кафедры русского языка МГУ, 2, 1948.

Кобзев П.В., Неполные предложения присоединительного типа в современном русском литературном языке (автореферат канд. дисс.), Л, 1966.

Крючков С.Е., О присоединительных конструкциях в современном русском языке, сб. «Вопросы синтаксиса современного русского языка», М., 1950.

Крючков С.Е., Максимов Л.Ю., Современный русский язык, Синтаксис сложного предложения, М., 1977.

Кулик Б.М., Курс сучасної української літературної мови, Київ, 1961.

Лыгина Е.П., К вопросу о присоединительных конструкциях и их стилистическом использовании в современном английском языке, М., 1956.

Лыгина Е.П., Стилистическое использование союзов and и but в присоединительных конструкциях в современном английском языке, М., 1952.

Мицьк В.Ф., Интонация присоединения в современном русском языке, М., 1960.

Мицьк В.Ф., Интонация присоединительных конструкций в английском и русском, М., 1962.

Михлина М.Л., О присоединительных структурах, М., 1956.

Maí orosz nyelv, Budapest, 1958 (текст дан на русском языке).

Научная сессия 1945гМГУ, Тезысы докладов, М., 1945.

Овсяннико-Куликовский Д.Н., Синтаксис русского языка, Спб., 1912.

Петрашевская Ж.Е., К вопросу о парцелляции как приеме экспрессивного синтаксиса, «Проблемы грамматики и стилистики английского языка», М., 1973.

Пешковский А.М., Русский синтаксис в научном освещении, М., 1938.

Плещенко Т.Г., Присоединение как один из видов синтаксической связи в современном русском литературном языке, Минск, 1960.

Покусаенко В.К., К вопросу о парцелляции сложных бессоюзных предложений, «Вопросы синтаксиса современного русского литературного языка», Ростов-на-Дону, 1973.

Попова И.А., Сложносочиненное предложение в современном русском языке, «Вопросы синтаксиса современного русского литературного языка», М., 1950.

Поспелов Н.С., О грамматической природе сложного предложения, сб. «Вопросы синтаксиса современного русского языка», М., 1950.

Розенталь Д.Э., Практическая стилистика русского языка, М., 1977.

Руднев А.Г., Синтаксис современного русского языка, М., 1968.

Рыбакова Г.Н., Парцелляция сложноподчиненного предложения в современном русском языке, Ростов-на-Дону, 1969.

Сб. "Пушкин" (под ред. проф. А.М.Еголина), М., 1941.

Синтаксис и стилистика, АН СССР, инст. Русского языка, М., 1976.

Сиротинина О.Б., Современная разговорная речь и ее особенности, М., 1974.

Сковородников А.П., О соотношении понятий "парцелляция" и "присоединение", Вопросы языкознания, № 1, 1978.

Сковородников А.П., О классификации парцеллированных предложений в современном русском литературном языке, Филологические науки, № 2, 1978.

Современный русский язык, Синтаксис, (под ред. Е.М.Галкиной-Федорук), М., 1957.

Современный русский язык, (под ред. Д.Э.Розенталя), ч. 2, Синтаксис, М., 1976.

Стрельцов В.Н., О природе парцелляции, "Уч. зап. МОПИ им. Н.К.Крупской", вып. 25, 1972.

Svičné texty z ruské syntaxe, Praha, 1959.

Топуридзе Е.Б., К вопросу о разграничении явлений присоединения и парцелляции в русском языке, Барнаул, 1976.

Хатиашвили Л.Г., Присоединительные связи в русском языке, Тбилиси, 1963.

Черемисина Н.В., О присоединительных конструкциях в современном русском языке, М., 1958.

Щерба Л.В., О частях речи в русском языке, сб. "Русская речь", 2, Л., 1928.

Բովանդակություն

Ներածություն	5
Առաջին գլուխ	
Հավելյալ կառույցների ընդհանուր բնութագիրը	32
Երկրորդ գլուխ	
Հավելյալ կառույցների տեսակները և նրանց դասակարգման սկզբունքները	58
ա. Դասակարգում ըստ կառուցվածքի	60
բ. Դասակարգում ըստ հիմնական մասին միանալու միջոցի	68
1. Շաղկապավոր հավելյալ կառույցներ	68
1.1. Համադասական շաղկապներով	69
1.2. Ստորադասական շաղկապներով	88
1.3. Հավելյալ շաղկապներով	98
2. Անշաղկապ հավելյալ կառույցներ	125
գ. Դասակարգում ըստ շարահյուսական դերի	140
դ. Դասակարգում ըստ արտահայտած իմաստի և դրսևորած շարահյուսական հարաբերության	146
ե. Դասակարգում ըստ հաղորդակցական տեսակների և եղանակավորության	149
Երրորդ գլուխ	
Հավելյալ կառույցների ոճական արժեքը	160
Ամփոփում	184
Օգտագործված գրականության ցուցակ	191
Օրաթերթերի և շաբաթաթերթերի համառոտագրություններ	194
Մասնագիտական գրականություն	195

ՆՎԵՐ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՎԵԼԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Հրատ. պատվեր № 825

Ստորագրված է տպագրության՝ 15.12.2017թ.:

Չափսը՝ 60 x 84 ¹/₁₆, 12,75 տպագրական մամուլ:

Տպաքանակը՝ 150 օրինակ:

Գինը՝ պայմանագրային:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության տպարան,
Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24:

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0496570

103528